

Հրատարկությունն իրազերծվել է
Անհոյի ժողովրդական հրատարակչատան/ՉԺՀ/
քույլտվությամբ և աջակցությամբ:



中国民俗文化丛书——饮食卷；董强 编著

DONG QIANG

FOOD

/Armenian version/

Translator - Lilit Ghazaryan

Stepanakert 2017

ԴԱՆԳ ՔԻԱՆԳ

ՈՒՏԵՍՆԵՐ

Թարգմանիչ՝
Լիլիթ ՂԱԶԱՐՅԱՆ

Ստեփանակերտ 2017

ՀՏԴ 391/398(=581)

ԳՄԴ 63.5(5Q)

Ք 530

«Գեղարմ» հանդեսի մատենաշար

ԴՐԱՆՔ Քիանգ

Ք 530 Ուստեսուներ: Թարգմ. անգլերենից՝ Լ. Ղազարյան:
Ստեփանակերտ, «Ոգի-Նախրի» հրատ., 2017, 112 էջ:

Չինական ֆոլկլորին նվիրված հնգհատորյա շարքի «Ուստեսուներ» գրքում ներկայացված է «Երկնատակի» հարուստ ու ճոխ խոհանոցի ընդհանրական տեսականին, խոհանոց, որ չինական մշակույթի կարեւոր ու անբաժան մասն է կազմում: Չինացիների համար ուտելիքը միայն հագենալու միջոց չէ, այլև՝ կյանքի փիլիսոփայություն, գեղեցիկ արարողակարգ:

Գիրքը կետաքրքրի ազգագրագետներին ու պատմաբաններին, բանահավաքներին ու հասարակագետներին, ընթերցող լայն շրջանակներին:

ՀՏԴ 391/398(=581)

ISBN 978-9939-1-0658-8

ԳՄԴ 63.5(5Q)

© Anhui People's Publishing House

Գրքի հեղինակային իրավունքը պատկանում է

Անհույի ժողովրդական հրատարակչատանը (ՉԺՀ)

© «Ոգի-Նախրի»/թարգմանության համար, 2017/

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ

ՔԻՄԱԿԱՆ ՈՒՏԵՏՈՒՄՆԵՐ

Չինական խոհանոցը եւ մոտեցումն ուտելիքի նկատմամբ համաշխարհային խոհանոցի պատմության մեջ իր ուրույն տեղն է գրավում: Դեռ վաղ ժամանակներից չինացու համար ուտելիքը ոչ միայն հագենալու միջոց է, այլև կյանքի փիլիսոփայություն, որոշակի արարողակարգ: Գարնան եւ Աշնան ժամանակաշրջանում եւ Պատերազմող երկրների ժամանակաշրջանում այդ մասին հիանալի մեկնաբանություններ էին արվում. «Քինգ ցորենը կարող է պաշտպանել, իինգ միրգն օգտակար է, իինգ կենդանին արժեքավոր է, իսկ իինգ բանջարեղենը՝ օժանդակ: ճաշակելուց առաջ ներդաշնակ համերի համադրումը կարող է գոյի եւ էներգիայի մատակարարման աղբյուր հանդիսանալ»:

ԳԼՈՒԽ ՄԵԿ

ԲՐՆՉԱՅԻՆ ՍՆՆԴԱԿԱՐԳ

1. Բրինձ

Բրինձը չինացիների առօրյա հիմնական սննդամբերքներից մեկն է համարվում: Միայն բրինձը կարող է բավարարել օրգանիզմի պահանջը սննդանյութերի ու կենսաբանական ակտիվ նյութերի նկատմամբ: Մարդիկ կարող են բրնձով տարատեսակ ուտեստներ պատրաստել եւ անհամ բրինձը շատ համեղ դարձնել:

Բրնձի տարրեր տեսակները

Իրականում, բրնձի ամենատարածված տեսակներից բացի, գոյություն ունեն նաև հացազգիների ընտանիքին պատկանող այլ տեսակներ, ինչպես, օրինակ՝ մածուցիկ /գյուտինային/ բրինձը, կորեկը եւ այլն: Գյուտեն /սնձան/ պարունակող բրինձը կպչուն է, բուրավետ ու հարթ եւ պարունակում է այնպիսի սննդային արժեքներ, ինչպիսիք են՝ սպիտակուցները, ճարպերը, շաքարը, կալցիումը, ֆոսֆորը, երկարը, վիտամին B2-ը, այս

իր մեջ պարունակում է նաև մեծ քանակությամբ օսլա: Կորեկին ոչ սովոր մարդկանց համար դրա համը հաճելի չի լինի, սակայն այն շատ սննդարար է: Կորեկը հարուստ է սպիտակուցներով, ճարպերով, շաքարով, B2 վիտամինով, նիկոտինաթթվով, կալցիումով, ֆուֆորով, երկաթով ու բազմաթիվ այլ սննդարար նյութերով, որոնք օրգանիզմի կողմից հեշտ են յուրացվում:



Խառնած-տապակած բրինձը հավկիթներով

Հավկիթներով ու տարբեր բաղադրիչներով խառնած-տապակած բրնձի բազմաթիվ տեսակներ գոյություն ունեն, որոնցում առկա բաղադրիչներն ու պատրաստման եղանակներն իրարից տարբեր են: Եկեք խոսենք ամենատարածված՝ Յանժոու տապակած բրնձի մասին:

Յանժոու տապակած բրնձի բաղադրատոմսում զարմանալիորեն առատ բաղադրիչներ կան: Առաջին կարգի բրնձից բացի նրանում առկա են նաև՝ ձվեր, ծովային վարունգ, հավի տոտիկներ, խոզապուխտ, չորացրած խեցիներ, թակած ծովախեցգետիններ, սեւ սունկ, թարմ բամբուկի ցողուններ, կանաչ լոբի, թակած կանաչ սոխ, ծովախեցգետնի ձվեր, զտած աղ, շառնսին բրնձի գինի, հավի արգանակ, բուսայուղ եւ այլն: Յանժոու տապակած բրինձը պատրաստելուց առաջ նախապես եփում են հավկիթները եւ պատրաստում մյուս բաղադրիչները՝ վերջում ավելացնելով մի քիչ արգանակ եւ աղ, որպեսզի այն ավելի համեղ ստացվի, եւ խո-

որ տարայի մեջ լց-նելով՝ դնում են մի կողմ: Այնուհետեւ եփում են բրինձը: Բրնձի հատիկները չպետք է իրար կպչեն, կամ այրված լինեն: Հետո եփած հավկիթները եւ պատրաստի բաղադրիչների մի մասը խառնում են բրնձի կեսին եւ այդ խառնուրդի երկու



երրորդը տեղափոխում են մի առանձին տարայի մեջ, ապա բրինձի մյուս կեսը խառնում են մնացած բաղադրիչների հետ: Հաջորդիվ տապակած բրնձի երկու տարաների պարունակությունն իրար են միացնում: Պատրաստման այս գործընթացը բավական մանրակրկիտ աշխատանք է պահանջում:

Խավարտապատ բրնձով ուտեստ

Խավարտապատ բրնձով ուտեստին նաեւ տապակած գարնիրով բրնձային ուտեստ են անվանում: Այս ուտեստը մատուցելիս բրինձը պատում են տապակած մսով կամ բանջարեղենով: Քանի որ Զինաստանի տարբեր շրջաններ առանձնանում են իրենց սովորույթներով, ուստի խավարտապատ բրնձով ուտեստը տեղից տեղ տարբերվում է, տարբեր են նաեւ բաղադրիչները: Այնպես որ՝ ամեն մի տարածաշրջան իր անհատական առանձնահատկություններն ունի: Հյուսիսարեւմտյան հատվածում՝ Գանսույում, այդ ուտեստին անվանում են մսով ու բանջարեղենով մատուցվող բրինձ, հյուսիսարեւեյան հատվածում այդ ուտեստն ունի շոգեխաշած բրինձ անվանումը: Գուանդունում այդ ուտեստին տալիս են ափսեների մեջ մատուցվող բրինձ անվանումը, իսկ որոշ վայրերում այս ուտեստին ուղղակի անվանում են կարի /համեմունք/-կարտոֆիլով բրինձ, կարի-հավի մսով բրինձ, կծու լոբով ու կաթնաշոռով բրինձ, լոլիկ-ձվերով բրինձ, լոլիկ-տավարի մսով բրինձ եւ այլն: Իրականում այն պարզապես բրինձն ու այլ բաղադրիչները՝ բուսական ու կենդանական, մեկտեղում է մեկ ուտեստում:

2. Քոնջի



Շիլան կամ ինչպես հայտնի է՝ քոնջին, կայչուն ուտելիքի մի տեսակ է, որը պատրաստում են վարսակաձավարից, կորեկից կամ հացազիների ընտանիքին պատկանող այլ հատիկավորներից: Որպես կանոն՝ քոնջիները դասում են երկու խմբի՝ պարզ եւ ծեւավոր: Պարզ քոնջին շիլայի այն տեսակն է, որը պատրաստված է բրնձից: Դա կարող է լինել նաև ամբողջական ցորեն, կորեկ, մարգարտահատ գարի, սեւ բրինձ կամ ինչ-որ կոմբինացիա: Չեւավոր քոնջիի հիմնական բաղադրիչը հասարակ քոնջին է, որի մեջ մտնում են այլ բաղադրիչներ:

Դրանք լինում են աղի, քաղցր, լինում են տարբեր գույնի, համ եւ հոտի:

Նրբագեղ ու ազնվական ծաղկային քոնջի

Դեռեւս վաղ ժամանակներում ծաղկային քոնջին գիտնականների կողմից հետազոտվել ու որպես գեղեցկության պահպանման միջոց՝ հավանության է արժանացել: Այսօր ծաղկային քոնջին հիմնականում օգտագործում են գեղեցկությունը պահպանելու եւ երիտասարդ տեսք ունենալու համար: Օրինակ, ծիրանի ծաղկաբերթիկներով ու բրնձով պատրաստված քոնջին բարերար ներգործություն ունի աղեստամոքսային տրակտի բնականոն աշխատանքի եւ տոնուսի բարձրացնան վրա: Այս տեսակի քոնջին կարող է թիրամին օրսիդազը մաշկի բջիջներում նվազագույնի հասցնել ու կանխել բշտիկների եւ սեւ կետերի առաջացումը:

Առողջարար Լաբա քոնջի


Լաբա քոնջին ընկույզով ու չոր մրգերով պատրաստած քոնջիի մի տեսակ է, որը սովորաբար ուտում են լուսնային տասմերկուերորդ ամսվա ութերորդ օրը. նրան նաեւ «յոթ բաղադրիչներով ու հինգ համերով քոնջի» են անվանում: Առողջության պահպանման տեսանկյունից Լաբա քոնջին իրավամբ շատ արժեքավոր է համարվում: Քանի որ տարվա մեջ լուսնային տասմերկուերորդ ամսվա յոթերորդ եւ ութերորդ օրերին ամենացածր ջերմաստիճանն է գրանցվում, մարդկանց իմունային համակարգը թուլանում է, իսկ Լաբա քոնջին, որն այնքան հեշտ է պատրաստվում, օգնում է մարդկանց՝ բարերար ազդեցություն ունենալով ստամոքսի, լյարդի, փայծաղի վրա, այն նաեւ սնուցում է սիրտը, մաքրում թոքերը, բարելավում է տեսողությունը, հանգստացնում նյարդերը, կարգավորում է աղիքների աշխատանքը եւ այլն: Այն գրեթե հասնում է մարդու մարմնի ամեն մի քջին: Բացի դրանից, նրա բարձր սննդականությունն ամրացնում է մեր իմունային համակարգը եւ բարձրացնում ցրտադիմադրողականությունը:

Բանջարեղենային քոնջի

Բանջարեղենային քոնջին բանջարեղեներից պատրասված շիլայի տեսակ է: Երկրի հյուսիսում ապրող տեղաբնակներից շատերը նախընտրում են ուտել աղի կերակուրներ, մինչդեռ հարավում մարդիկ գերադասում են ուտել քաղցր կերակուրներ: Ամենատարածված պարզ քոնջիներն են՝ ձվով քոնջին, քաղցր կարտոֆիլով քոնջին, տոֆով քոնջին եւ կաղամբով քոնջին:

Քաղցրաբույր կաթնային քոնջի

Կաթնային քոնջին կենդանական կաթից պատրաստված քոնջիի մի տեսակ է, որը բարձրացնում է օրգանիզմի դիմադրողա-



կանությունն ու մեղմացնում չորությունը: Օրգանիզմի դիմադրողականությունը բարձրացնելու, ինչպես նաև փայծաղը եւ ստամոքսի մկաններն ուժեղացնելու համար առավելապես ընտրում են կովի կամ ոչխարի կաթը:

Համեղ մսային քոնջի

Համեղ մսային քոնջի պատրաստելու համար, նախ, շերտատում ենք միսը, այնուհետեւ շերտատված կտորները լցնում եռացող քոնջիի մեջ եւ այդ ամենը միասին եկում: Մի քանի բաղադրիչներ ավելացնելուց հետո կարելի է ճաշակել այն: Լինում են տավարի մսով, խոզի մսով, խոզի լյարդով, խառը ձկներից պատրաստած գնդիկներով, պահածոյացված ձվերով եւ անյուղ մսերից պատրաստված քոնջիներ: Այդ ամենը կարող է ամրացնել մկանները եւ ընդհանուր ուժ հաղորդել:

Թարմ ու համեղ ձկան քոնջի

Ձկան քոնջին շիլայի այն տեսակն է, երբ ձուկն ու բրինձը իրար հետ են եփում: Բրինձը քիչ քանակությամբ լիզին է պարունակում, մինչդեռ ձկան միջի հարուստ ամինաթրուների ու սպիտակուցների պարունակությունը կարող է այդ բացը լրացնել:

Սպեղանի-քոնջի

Սպեղանի-քոնջին շիլայի այն տեսակն է, որի հիմնական կոմպոնենտը հացահատիկն է: Այն իր մեջ ներառում է նաև մրգեր, բանջարեղեն, ձուկ, ձու, կաթ, դեղաբույսեր եւ այլ բաղադրիչներ: Գարման եւ Աշնան ինչպես նաև Պատերազմող երկրների ժամանակաշրջանի բոլոր դինաստիաների բազմաթիվ բժշկական գրքերում օգտակար սպեղանի-քոնջիի վերաբերյալ եղել են բազմաթիվ տեսություններ ու դեղատոմներ:

3. Բրնձի արիշտա

Հին խոհարարական գրքերում մարդիկ բրնձե արիշտային «Կարող» էին անվանում: Այն իր մեջ պարունակում է առատ ածխաջրեր, վիտամիններ, հանքանյութեր ու ֆերմենտացիաներ եւ ունի մի շարք առանձնահատկություններ, ինչպես, օրինակ՝ հեշտությամբ հասունանալը, եփելու ընթացքում խոտության եւ թարմ համ ու հոտի պահպանումը: Բրնձե արիշ-

տայի արգանակը եվիելուց հետո մաքուր է մնում եւ օրգանիզմի կողմից հեշտ է յուրացվում: Սովորաբար բրնձի արիշտան բաղկացած է երեք մասից՝ տաք արգանակ, կտրատած բաղադրիչներ եւ բրնձե արիշտա: Հանրահայտ կամրջակ-բրնձարիշտաները առաջացել են Յունան նահանգի Մենգի քաղաքում: Կան նաև բրնձի արիշտաների այլ տեսակներ, ինչպես, օրինակ՝ յուրսիյան կաթսայիկով բրնձարիշտաները, բրնձարիշտաներով արգանակը, բրնձարիշտաներով տոֆու պուրինգը, սառը բրնձե արիշտաները, թթու դրած խոզի մսով ու ձվերով բրնձի արիշտաները եւ ուրիշ շատ տեսակներ:

Կամրջակ- բրնձարիշտաներ*

Կամրջակ-բրնձարիշտաների պատրաստման գործընթացը յուրօրինակ է ու բարդ: Առաջին բանը արգանակ պատրաստելն է: Դրա համար վերցնում են յուղոտ հավ, յուղոտ բաղ, խոզի թարմ կողիկներ, խողովակածեւ ոսկորներ եւ, տաք ջրում լավ լվանալուց հետո, որպեսզի արյան հոտն անցնի, վրան մի քիչ



ջուր ավելացնելով այդ բոլոր բաղադրիչները 5-6 ժամ շոգեխաշում են: Սկզբում նախընտրելի է եփել թեժ կրակի վրա եւ, ըստ անհրաժեշտության, ջրի մակերեսից հեռացնել քափը: Չորս ժամ անց կրակը թուլացնում են եւ թողնում, որ արգանակի միջի բաղադրիչները մարմանդ կրակի վրա շոգեխաշվեն, այնուհետեւ սառը ջրի մեջ ավելացնում են հավի կամ բադի

* Այս անվան ժագումնաբանության հետ կապված տարրեր վարկածներ կան: Առաջ քաշված վարկածներից մեկի հիմքում ըմկած է մի պատմություն, ըստ որի՝ պալատական մի գիտնական քննությունների շեմին փոքրիկ կղզում օր ու գիշեր պարապում էր: Նրա կինը, ով ամեն օր նրա համար ուտելիք էր տանում, նկատում է, որ կամրջով կղզի տանող ճանապարհին արգանակը սարչում, իսկ արիշտաները թրցվում էին: Նա միտք է անում եւ որոշում մի մեծ խեցե կծումի մեջ եռացող արգանակ լցնել՝ վրան յուղի շերտով, որպեսզի ջերմամեկուսացման շնորհիվ արգանակը տաք վիճակում երկար պահպանվի: Արիշտան եւ մյուս բաղադրիչները պահպում էին առանձին տարայի մեջ: Տեղ հասմելում պես նա այդ ամենն իրար խառնելով՝ տաք արգանակ էր ստանում:

արյուն եւ ստացված զանգվածը արգանակի մեջ լցնելով՝ անընդհատ խառնում են: Ապուրի վրայից քափը հեռացնում են, որպեսզի այն պարզ ու թափանցիկ տեսք ստանա: Ընթացքում մսերը շերտատում են: Խոզի մսի, յարդի, երիկամի վրայից հեռացնում են ջլերն ու կաշին, շերտերով կտրտում են, այնուհետեւ նորից լցնում արգանակի մեջ: Ապա պատրաստում են մյուս բաղադրիչները՝ սխտոր, չինական մաղադանոս, սիսեռ, լոբի, ջրում թրմված մի կտոր բամբուկ, թարմ քրիզամթեմ եւ այլն: Յետո այդ ամենը մի որոշ ժամանակով եռացող ջրի մեջ կիսաեփի խաշում են եւ թերխաշ բաղադրիչները լցնում սառը ջրի մեջ՝ թարմ տեսք հաղորդելու համար. ջրից հանում են այն ժամանակ, երբ պատրաստվում են օգտագործել: Այնուհետեւ այդ բաղադրիչներին ավելացնում են խոզապուխտ, կանաչ սոխ, կոճապղպեղ, մի քիչ տոֆու /թանձրուկ՝ ճզմած սոյայի հատիկներից/, մեկ հատ թարմ բամբուկի ցողուն եւ աղավնու ձվեր:

Կամրջակ-բրնձարիշտան բացառիկ է ոչ միայն իր պատրաստման տեխնոլոգիայով, այլև ճաշակելու անզուգական ձեւով: Յիմնական առանձնահատկությունն արգանակի եւ ճաշակելու ձեւի մեջ է: Կամրջակ-բրնձարիշտայի արգանակը սուր հոտով թանձրապուր է երկար եփված մեծ ոսկորներով, հասուն հավի մսերով, Սյուանվեյյան խոզապուխտով եւ բազում այլ օգտակար մթերքներով: Այդ համեղ արգանակը տարբեր կերպ են ճաշակում: Օրինակ, տաքացրած չինական մեծ թասի մեջ մի քիչ ալյուր, աղացած պղպեղ եւ հավի յուղ են լցնում: Այնուհետեւ տաք ապուրը լցնում են այդ թասի մեջ, յուղի հաստ շերտով ծածկում են այնպես, որ գոլորշին ներսում մնա եւ տաքությունը պահպանվի: Միեւնույն ժամանակ, սեղանի վրա բրնձարիշտայով լցված մեկ այլ թաս են դնում: Այնուհետեւ եփում են տարբեր տեսակի հասուն շերտատված մսեր, վտահ լինելով, որ դրանք ավելացվում են ըստ հաջորդականության, հետո ավելացնում են կտրատած մատղաշ մսեր, բանջարեղեն, քնջութի յուղ, պղպեղի յուղ: Երրորդ, այդ երկու թասի բաղադրիչներոն իրար են միացնում, արգանակի մեջ ավելացնում են բրնձարիշտաները եւ ստացված զանգվածը լավ խառնում են: Ուտելիս արգանակն ափսեի մեջ թեթեւ խառնում են, որպեսզի ավելի մածուցիկ ու բուրավետ լինի: Բրնձարիշտաներն արգանակի մեջ ասես կամրջակներ լինեն, եւ այս ուտեստը հենց այդպես էլ կոչել են՝ «կամրջակ-բրնձարիշտաներ»:

Յուքսիյան կաթսայիկով բրնձարիշտաներ

Կաթսայիկով բրնձարիշտաները լայնորեն տարածված են հատկապես Չինաստանի հարավ-արեւմուտքում՝ Յունան երկրամասի Կունմին քաղա-

քում: Այս օգտակար եւ հեշտ պատրաստվող ուտեստի գլխավոր առանձնահատկությունն այն է, որ բրնձարիշտաները եփում են փոքրիկ կաթսայի մեջ՝ փայտածիսի կրակի վրա, իսկ կաթսայիկի միջի ամբողջ բաղադրիչները՝ թարմ միսն ու բրնձարիշտաները, թարմ ու հաճելի բույր ունեն:

Բրնձարիշտաներով արգանակ

Այս տեսակի բրնձե արիշտաները պատրաստում են բարձրորակ բրնձի այսուրից: Արիշտաների մշակման գործընթացում կիրառվում են այնպիսի մեթոդներ, ինչպիսիք են ֆերմենտացումը, հղկումը, ֆիլտրումը՝ մաքուր ու էլաստիկ խմոր ստանալու համար, մամլումն ու քամումը: Այս ամբողջ գործընթացն ավարտելուց հետո արիշտաները դնում են սառը ջրի մեջ, կամ, ինչպես ասում են՝ մի որոշ ժամանակ ջրի մեջ թրցոց են դնում, այնուհետեւ լվանում են եւ չորացնելուց հետո դրանցից տարբեր ուտեստներ են պատրաստում, ինչպես օրինակ՝ Չինաստանում շատ հայտնի բրնձարիշտաներով արգանակը եւ բազում համեղ ու ախորժելի ուտեստներ: Բրնձով արիշտաներն երկար են, սպիտակ ու նուրբ: Դրանք կարելի է ճաշակել սառը կամ տաք վիճակում, եւ երկու դեպքում էլ դրանք շատ համեղ են:

Բրնձարիշտաներով տոֆու պուդինգ

Բ ո ն ձ ա ր ի շ -
տաներով տոֆու պուդինգ պատրաստելու համար բրնձարիշտաներն եփում են եռացող ջրի մեջ, ապա դրա վրա ավելացնում են մեծ քանակությամբ տոֆու պուդինգ, որից հետո հերթով, իրար հաջորդելով, ավելացնում են նաեւ մյուս բաղադրիչները: Այս ուտեստը բրնձարիշտաների ու տոֆու պուդինգի միախառնուրդային եզակի համ է ստեղծում:



Մարինացված մթերքներով բրնձարիշտաներ

Մարինացված մթերքներով բրնձարիշտաների պատրաստման քայլերը հետեւյալն են. նախ՝ եռացող ջրի մեջ եփել բրնձարիշտաները, ապա դրանք արագ հանել ջրից, վերջում մարինադներով ու շոգեխաշած մթերքներով զարդարել: Այն նման է սոուսում պատրաստվող արիշտաներին, սակայն այս ուտեստի յուրահատուկ համը տարբերվում է սոուսում մատուցվող արիշտաների համից:

4. Բրնձի այուր

Բրնձի այուր պատրաստելու եղանակները բազմազան են, սակայն հիմնականում կիրառում են այս մեթոդը: Բրինձը 2-3 անգամ լվանալուց հետո այն ընկղմում են ջրով լի տարայի մեջ եւ մոտ մեկ ժամ ջրի մեջ թողնում: Զրքամելուց հետո բրինձը փոռում են բամբակե կտորի վրա՝ չորացնում ստվերում: Բրինձը խոնավ վիճակում, երբ լրիվ չորացած չէ, աղում են ալրաղացում կամ տանը՝ էլեկտրական բլենդերով: Աղալուց հետո մաղում են եւ լցնելով հարթ ափսեի մեջ՝ 2-3 օր դնում են ստվերում չորանալու: Այսուրը պահպանելուց առաջ հարկավոր է համոզվել, որ այն լրիվ չոր է եւ նրա մեջ խոնավություն չկա:

Բրնձի այուրը ծեւով շատ նման է բրնձարիշտային, բայց իրականում դրանք տարբեր են: Բրնձարիշտայի սահմանման համաձայն՝ մենք գիտենք, որ դրա հումքը բրինձն է, բայց համային առումով այն էապես տարբերվում է բրնձի այուրից եւ տարբեր կերպ է պատրաստվում, քանի որ դրա մեջ ավելացնում են տարբեր նյութեր, ինչպես, օրինակ՝ քաղցր կարտոֆիլի այուր եւ կարտոֆիլի այուր: Դամային առումով բրնձարիշտաները հիմնականում թարմ, իսկ բրնձի այուրը՝ նուրբ համ ունի, ասել է թե՝ բրնձարիշտաները ողորկ տեսք ունեն, մինչդեռ բրնձի այուրը թեթեւ, կպչուն է լինում:

Բրնձի այուրն այնքան նուրբ ու ճկուն է, որ արգանակը չի սառեցնում, իսկ եփելիս չի ջրիկանում: Տարբեր սանդղի հետ համակցելիս կամ ապուրի մեջ եփելիս, այն իր դյուրինությունը, համն ու հոտը չի կորցնում: Բրնձի այուրի տեսականին բազմազան է, դրանցից են՝ սպիտակ բրնձի այուրը, դարչնագույն բրնձի այուրը, քաղցր բրնձի այուրը, արծաթագույն թափշա-բրնձի այուրը, թաց բրնձի այուրը, չոր բրնձի այուրը եւ այլն: Ամենահայտնիներից են՝ Ֆուչքուն, Չանշոուն, Շանվենը, Խինդուան, Անյինը, Գույիլինը, Շաոյանը, Ջեյուանը, Չանդեն եւ ուրիշ այլ տեսակներ:

ԳԼՈՒԽ ԵՐԿՈՒ

ԱՐԻՇՏԱՆԵՐ

Յացը, հացաբուլկեղենը, ալրային հրուշակեղենն ու մակարոնային արտադրանքը սպորտաբար դասվում են այսուրից պատրաստած սննդամթերքների դասին: Յնագույն արձանագրությունները վկայում են այն մասին, որ ալրային սննդամթերքները գոյություն են ունեցել դեռևս Յան դինաստիայից առաջ: Յան դինաստիայում այսուրով պատրաստած սննդին պարզապես թխվածք էին անվանում, շոգեհարած հացին կամ քաղցրահամ փոքրիկ բլիթներին՝ շոգեխաչ թխվածքներ, իսկ ջրում եփած արիշտաներն ու խմորագնդիկները՝ հյութեղ թխվածքներ: Յետագայում մարդիկ սկսեցին օատորոշել այսուրից պատրաստած թխվածքնեն հասկացությունը: Չինական ալրային սննդամթերքների պատմությունն երկար է եւ ներառում է բազմաթիվ տեսականիներ ու համեր: Եթե բոլոր նահանգների ու ազգերի ալրային սննդամթերքները մեկտեղենք, կստացվի մի խայտաբղետ ծաղկեփունջ: Չինաստանի ավանդական ալրային ուտելիթներից են՝ հասարակ արիշտաները, ձգած արիշտաները, ջիաոզին՝ /խմորագնդիկ/ հյուսիսում, շառ մային /շոգեխաչած խմորագնդիկ/, բուլկիները, գարնանային նրբարիթները եւ յուանյառն՝ /կպչուն բրնձագնդիկեր Լապտերների փառատոնի համար/ հարավում: Վերոնշյալ տեսականուց բացի, ալրային մթեքների հարուստ տեսականու հանդիպում ենք նաեւ Չինաստանի մյուս շրջաններում՝ յուրահատուկ համ ու հոտով եւ ազգային կոլորիտով: Օրինակ՝ հրուշակեղենի եւ մակարոնեղենի արտադրանքներից հայտնի են վառարանային կլոր բլիթները՝ Պեկինում, նանքսիանգ շոգեխաշու սպիտակ պագողածել բլիթները՝ Շանհայում, գոյուբուլի բլիթները՝ Տիանցզինում, կտրտած արիշտաները՝ Տայյանում, ձեռաձգած արիշտաները՝ Լանչժոյում, ծովախեցգետնի սերուցքային խմորագնդիկները՝ Զիանսույում, խյուս-արիշտաները՝ Շանդոնգում, շոգեխաչած արիշտաները՝ Յենանում եւ քաղցր չամիչով թխվածքարիթները՝ Մինցզյանում:

Չինաստանի տարածքներն անծայրածիր են եւ այդ հսկայական տարածություններում ձեւավորվել են տարբեր բարքեր՝ իրենց յուրօրինակ դիետիկ սովորություններով ու տեղից տեղ տարբերվող բազմազան ու հարուստ խոհանոցով: Ի հավելումն այդ ամենի հարկ է նշել, որ բրնձի օգտագործումը լայնորեն տարածված է Չինաստանի հարավային մասում, իսկ արիշտաներն առատորեն օգտագործում են երկրի հյուսիսում: Յամ ու

հոտի տարբեր դպրոցները նույնական կարելի է դասակարգել ըստ հյուսիսայինի ու հարավայինի: Յյուսիսայինն իր հիմնական սննդում օգտագործում է այսուր ու կոշտ շիլաներ, մինչդեռ հարավայինի հիմնական տեսականին ընդգրկում է բրնձային ուտեստներ ու բրնձի այսուրից պատրաստած բլիթներ եւ բրնձային տարբեր այլ ուտեստներ: Յյուսիսային դպրոցի ներկայացուցիչներն են պեկինյան ու շանդոնյան բույրերը, որոնց չինացիք ուղղակի անվանում են՝ Չինգ ոճ, մինչդեռ հարավային ոճի ներկայացուցիչը Չիանսուն է /արեւելյան Չինաստանի նահանգներից/, եւ մենք ուղղակի ասում են՝ Սյու ոճ: Սյու ոճը հարուստ է ալրային բազմապիսի տեսակներով, որոնք ունեն քաղցր բույր ու նրբագեղ արվեստ: Գուանչժուի մոտակայքում ալրային ուտեստներին պարզապես Գուան ոճի են անվանում: Այս ոճը ներկայացնում է արեւմտյան ուտեստների տարբերակը, ինչը եզակի հարավային բույր է ստեղծում: Յյուսիսային ալրային ուտեստների ոճից հետո հաջորդ հիմնականը Գուան ոճն է համարվում: Այսպիսով, մարդիկ սովորաբար ալրային ուտեստները բաժանում են երեք ոճի՝ ջինգ, գուան ու սյու: Բացի այդ մյուս դպրոցները նույնական իրենց ուրույն ոճն ունեն, օրինակ՝ լինում են ալրային ուտեստներ Ցզին ոճի, Ցին ոճի, Չուան ոճի եւ այլն: Բոլոր այդ դպրոցներն առանձնանում են իրենց առանձնակի ոճով՝ հոտային, հանային, հումքային եւ ունեն յուրահատուկ պատրաստման տեխնոլոգիա:

1. Արիշտաներ



Չինաստանու արիշտաներ ուտելու սովորույթը գալիս է դեռևս վաղնջական ժամանակներից, եւ հնագույն ժամանակներում մարդիկ նույնիսկ կորեկից ու հացահատիկից պատրաստաված արիշտաներին բրինձ էին անվանում, բայց արիշտաները տարբերվում են բրնձից: Դրանք ոչ միայն հագեցնում են քաղցր, այլեւ ունեն լոկալ ազգային նշանակություն: Օրինակ, մարդիկ իրենց ծննդյան տոնակատարությունների ժամանակ պատրաստում են արիշտաներ՝ անվանելով դրանք երկարակյաց արիշտաներ:

անվանում, բայց արիշտաները տարբերվում են բրնձից: Դրանք ոչ միայն հագեցնում են քաղցր, այլեւ ունեն լոկալ ազգային նշանակություն: Օրինակ, մարդիկ իրենց ծննդյան տոնակատարությունների ժամանակ պատրաստում են արիշտաներ՝ անվանելով դրանք երկարակյաց արիշտաներ:

Արիշտաները երկար ու բարակ են, իսկ չինարենում բարակ բառի արտասանումը համահունչ է երկար կյանք արտասանությանը: Ուստի, չինացիների համար սովորույթ է դարձել ծննդյան տոների ժամանակ արիշտաներ ճաշակելը:

Արիշտաները երկար պատմություն ունեն: Դեռևս 2000 տարի առաջ Արեւելյան Յան Դինաստիայի ժամանակաշրջանում արիշտաների վերաբերյալ հիշատակություններ են արվել: «Պատրաստման տարատեսակ տեխնոլոգիաների շնորհիվ այսօր Չինաստանում գոյություն ունեն տարբեր համ ու հոտով արիշտայի հազարավոր տեսակներ: Չինաստանում արիշտայի հինգ հայտնի տեսակ գոյություն ունի. դրանք են՝ կտրտած արիշտաներն ու ի-ֆու շոգեխաշած արիշտաները Շանսիում, դանդան արիշտաները Սիչուանում, սոուսով արիշտաները Չինաստանի հյուսիսում եւ ու օան միան /տաք չոր/ արիշտաները Ուիհանում: Դրանց զատ կան նաև այլ հայտնի արիշտաներ, ինչպիսիք են ձեռքով ձգած արիշտաները Լանչժոյում եւ հասարակ արիշտաները Չինաստանի հարավային մասում:

Շանսինյան ալրային ուտեստներ

Շանսիյում ավանդական ալրային ուտեստների սեփական դպրոց է զարգացել եւ այն իր մեջ կրում է բազմաթիվ ուրիշ խոհարարական դպրոցների լավագույն հատկանիշները: Մի հին ասացվածք կա. «Աշխարհի լավագույն ալրային ուտեստները Չինաստանում են, իսկ Չինաստանի լավագույն ալրային ուտեստները՝ Շանսիում»: Ալրային ուտեստների բազմապիսի տեսակներ կան եւ թերեւս դա է պատճառը, որ մարդիկ սիրով նախընտրում են Շանսիի ալրային ուտեստները: Նույնիսկ հասարակ տնային տնտեսուիկիները կարող են կորեկի, լոբու, հնդկացորենի, վարսակի եւ ալրի այլ տեսակներից տասնյակ համեր խորտիկներ պատրաստել, ինչպես, օրինակ՝ կտրտած արիշտա, ձեռքով ձգած արիշտա, խմորագնդիկներ, գոլորշու վրա եփած չորահացեր, ալրով պատրաստած երշիկեղեն եւ այլն: Եթե դուք խոհարար եք, Շանսիի տարբեր խոհարարական գրքերում կգտնեք ավելի քան 280 բաղադրատոնն:

Շանսինյան ամենահայտնի ուտեստը կտրտած արիշտան է: Դրանք ստանում են արիշտաների կտրտման միջոցով, որոնց մեջտեղի հատվածը հաստ է, իսկ եզրերը՝ բարակ: Դրանք նուրբ են, ամուր ու ճկուն: Բաշակելիս՝ արտաքինից հարթ են, իսկ ներսից՝ ճկուն, նուրբ, բայց ոչ կպչուն:

Այսօր կտրտած արիշտաները դարձել են կատարողական արվեստ: Թայուան քաղաքի Քուանջին խոհարարական դպրոցի կտրտած արիշ-

տաները ներկայացված լինելով Շամհայում կազմակերպված 2010թ.-ի միջազգային ցուցահանդեսին՝ ունեցել են երեք առանձնահատկություն՝ արագություն, ճշգրտություն եւ վարպետություն: Արագությունը նշանակում է, որ նրանք մեկ րոպեում կարող են կտրատել ավելի քան 200 արիշտա, ինչն ապշեցրել է հանդիսատեսին: Ճշգրտությունը նշանակում է, որ այդ բոլոր արիշտաները կարող են ափսեի վրա մեկ ու կես մետր երկարությամբ ձգվել: Վարպետությունը նշանակում է, որ կատարողը արիշտայի զանգվածը դնում է իր գլխին եւ երկու ձեռքերով փորձում է դրանք կտրատել: Ավելին, կատարողներից ոմանք դա անում են միանիվ հեծանվի վրա, ինչը իսկապես ապշեցնող ու տպավորիչ է:

Շանսիյում գերակշռող ալրային ուտեստների շարքին է դասվում ի-ֆուն, որը նույնպես շատ հայտնի է: Այդ ուտեստը հայտնի է նաև յի արիշտա անվամբ / ծվով պատրաստած արիշտայի մի տեսակ է/: Ի-ֆու արիշտաները ոսկեգույն ու ողորկ տեսք ունեն, դրանք կարելի է եփել ապուրի մեջ կամ ուղակի տապակել: Նրանք շատ նման են այսօրվա վայրկենական պատրաստվող չոր արիշտաներին, որոնց նախատիպը համարվում է ի-ֆու արիշտան:

Սիչուանի դանդան արիշտան



Դանդան արիշտան Սիչուանի ամենահայտնի արիշտաներից է. որը որպես թեթեւ ուտելիք /սենդվիչ/ զանգվածաբար վաճառվում է փողոցներում: Ասում են, որ Սիչուան նահանգի Զիգոնգ քաղաքում այն հայտնաբերել է Չեն Բաոբա անունով մի վաճառական: 1841 թվականին վաճառական ավանդական դանդան արիշտաները բերնում էր սայլի թափքի երկու կողմի հաստ ձողերին ու տեղից տեղ անցնելով՝ դրանք վաճառում էր: Առեղները պատրաստված էին ամուր փայտից, առեղի մի կողմում դարակն ու պահոցն էին, որը բերնված էր արիշտաների, խճողակների, զանազան համեմունքների ու անհրաժեշտ այլ մթերքների պաշարով, իսկ մյուս կողմում՝ փուռը, մի կաթսա եւ ստորին մասում մի փոքր օդանցք: Այսպես վաճառականը արագ-արագ պատրաստում էր արիշտաները: Դրա

նին վաճառականն ավանդական դանդան արիշտաները բերնում էր սայլի թափքի երկու կողմի հաստ ձողերին ու տեղից տեղ անցնելով՝ դրանք վաճառում էր: Առեղները պատրաստված էին ամուր փայտից, առեղի մի կողմում դարակն ու պահոցն էին, որը բերնված էր արիշտաների, խճողակների, զանազան համեմունքների ու անհրաժեշտ այլ մթերքների պաշարով, իսկ մյուս կողմում՝ փուռը, մի կաթսա եւ ստորին մասում մի փոքր օդանցք: Այսպես վաճառականը արագ-արագ պատրաստում էր արիշտաները: Դրա

բաղադրիչներն են՝ կարմիր սոյա, խոզի յուղ, քնջութի յուղ, քնջութով սուս, սխտորի փոշի, թակած կանաչ սոխ, կարմիր պղպեղի յուղ, աղացած պղպեղ, քացախ, համեմունքներ եւ այլն: Դանդան արիշտայի յուրահատկությունն այն է, որ այն նուրբ ու թեթև է, իսկ նրա բաղադրիչները բուրավետ են ու կօրու քիչ քանակությամբ քաղցր, համեղ սոուսով, տաք, բայց ոչ չոր, եւ այն իրոք կարելի է դասել Սիչուանի ամենաընտիր արիշտաների շարքին:

Սոուսապատ արիշտաներ

Ի սկզբանե սոուսով մատուցվող արիշտաները՝ որպես ալրային ուտեստ, լայնորոն տարածված էր Չան ժողովրդի մեջ: Այսօր այն հիմնականում հայտնի է Չինաստանի հյուսիսային մասում: Իսկ դրանց մեջ ամենահայտնին Պեկինի սոուսապատ արիշտաներն են: Շանհայում եւ Գուանդունում տարբեր տեսակի սոուսներով պատրաստած արիշտաների ուրիշ տեսակներ կան: Սոուսով արիշտաներ պատրաստելու համար կտրատում են մի քիչ վարունգ, չինական ցեղրելայի տերեւներ, լոբու ծիլեր, կանաչ լոբի եւ համապատասխան քանակությամբ սոյա: Այնուհետեւ պատրաստում են սոուսը. թակած միսը եփում են, շալոտ սոխը եւ կոճապղպեղը մի քիչ յուղով տաքացնում են թավայի մեջ, հետո ավելացնում են մի քիչ սոյայի սոուս կամ քաղցր այսուրի սոուս եւ այդ բոլորը միասին եփում են: Թողնում են արիշտաները եփվեն, այնուհետեւ վերցնում են կրակից, վրան լցնում սոուս, միացնում մյուս բաղադրիչներն, եւ համեղ սոուսով արիշտաների պնակը պատրաստ է:

Ուհայի տաք ու չոր արիշտաները

Ուհայի տաք չոր արիշտաները բարակ, հարթ, ծամելի արիշտաներ են, որոնք իրենց մեջ կրում են Ուհայի /նահանգ/ հաճելի համն ու հոտը: Տաք չորացրած արիշտաները տարբերվում են մեր պատրաստած հասարակ սառը եւ սոուսապատ արիշտաներից: Այս տեսակ արիշտաներ պատրաստելու համար հարկավոր է արիշտաները նախապես եփել, ապա յուղ ավելացնելով սառեցնել: Դրանք ճաշակելու համար կարող եք արիշտաները նորից տաք ջրի մեջ լցնելով տաքացնել եւ վրան ավելացնել քնջութի սոուս, քնջութի յուղ, անուշաբույր քացախ ու պղպեղի յուղ: Պատրաստի արիշտաները նուրբ ու ծամելի, դեղին ու յուղոտ, բուրավետ ու թարմ տեսք ունեն եւ իրենց ախորժելի բույրով մարդկանց ախորժակն են բացում:

Համժողության ծեռքով ձգած արիշտաները

Զեռքով ձգած արիշտաները սկիզբ են առել Հենանի հուի ազգության՝ տավարի մսից պատրաստվող արիշտաներից: Հետագայում Մա Բառզին եւ այլոք Լանժոյում միավորեցին ծեռքով ձգած արիշտաների չափանիշները: Տավարի արգանակը թափանցիկ ու անուշահոտ է, իսկ կտրտած բողկերը՝ մաքուր ու սպիտակ: Թիմոնն ու սխտորը թարմ են ու կանաչ: Կարմիր պղպեղի յուղը լողում է արգանակի մակերեսին: Արիշտաները փափուկ, նուրբ ու դեղին են: Զեռքով ձգած արիշտաների տարբեր տեսակներ կան. մի մասը երկու մատնաչափ լայնություն ունեն, որոշները՝ մեկ մատնաչափ բարակ են, կամ տեսակներ, որոնք ցողունի պես բարակ են, իսկ ամենաբարակները՝ մետաքսի պես նուրբ են: Վերջին երկու հարյուր տարվա ընթացքում ծեռքով ձգած արիշտաները հայտնի են իրենց համեղ մսով, թարմ արգանակով ու փոքրությամբ:

Հասարակ արիշտաներ

Հասարակ արիշտան, հայտնի նաեւ՝ պարզ արիշտա, կամ թափանցիկ արգանակով արիշտա, արգանակով պատրաստած արիշտայի մի տեսակ է՝ առանց այլ մթերքների ու բաղադրիչների: Սովորաբար այդ արիշտաները սիրում են ճաշակել Շանհայում: Որոշ շրջաններում հասարակ արիշտաներին անվանում են «փոքրիկ, պարզ աշնանային արիշտաներ». նման անվանումն առաջացել է լուսնային օրացույցի հոկտեմբեր բառից: Մարդիկ լուսնային օրացույցի հոկտեմբեր ամիսը սովորաբար անվանում էին «փոքրիկ պարզ աշուն»: Շանհայի բարեառով «տասը» եւ «պարզ աշուն» բառերը համանան են, եւ քանի որ այդ արիշտաները սովորաբար արժեին տասը վեն /տարադրամ իին Չինաստանում/, դրանից առաջ եկավ հասարակ արիշտաներ անվանումը: Հասարակ արիշտաները նուրբ են, դրանց արգանակը թափանցիկ է ու շատ համեղ, նաեւ ֆինանսական տեսակետից այն շատ ծերնոտու է, եւ հարավային Չինաստանում շատերը հաճախ նախընտրում են ուտել հենց այդ հասարակ արիշտաները :

2. Բառզի (շոգեխաշու լցոնած բլիթներ)

Բառզին Չինաստանի ամենահին ավանդական ուտելիքներից է: Չինական լեգենդի համաձայն՝ այն հայտաբերել է չին գիտնական ու գինվորական ռազմագետ ժուջ Լյանգը՝ Երեք թագավորությունների ժամանակաշրջանում (մ.թ. 3-րդ դար): Որպես կանոն՝ բառզին պատրաստում են խմո-

ոից, իսկ լցոնման համար օգտագործում են բանջարեղենային, մսային կամ քաղցր բաղադրիչներ: Բառզին առանց լցոնման անվանում են՝ շոգեխաշած բլիթներ: Բառզիները պատրաստելիս սովորաբար թթվածոր են օգտագործում: Բառզիների չափը կախված է լցոնման չափից՝ փոքր, միջին կամ մեծ: Սովորաբար դրանք լցոնելու համար մենք օգտագործում են միս, քնջութ, լոբու մածուկ, կամ խոզապուխտ: Յայտնի բառզիներն են՝ Տիանցգինի Գոուբուլի բառզին, Նենսիանի փոքր բառզին, Սինցօյանի թխուկ-բառզին, խոզի մսով լցոնած ու թափայի մեջ տապաած բառզին, շոգեխաշած շառմախին եւ Գուանդունի խորոված խոզի մսով լցոնված բառզին:

Տյանցգինի գոուբուլի բառզին

Գոուբուլի բառզին Տյանցգինի երեք ամենահայտնի խորտիկներից ամենաառաջինն է, որն ավելի քան 150 տարվա պատմություն ունի: Թոնգժի /բառացի նշանակությամբ՝ «միեւնույն կամքը» կամ «միեւնույն ցանկությունը»՝ ընկերական/ տարիներին, Ցին դինաստիայի վերջին տարիների ժամանակաշրջանում, Գաո Գուլյու անունով մի մարդ կար, որին նանուկ ժամանակ Գոուզի էին անվանում: Նա մի քանի տարի աշակերտում էր Տյանցգինի խորտկարաններից մեկում: Յետո բացում է իր սեփական խորտկարանը, որտեղ իհմնականում բառզի էր վաճառում: Իր փայլուն հմտությունների ու մանրակրկիտ ընտրած բաղադրիչների շնորհիվ նրա բառզիները անյուղ, թարմ ու նուրբ համ ունեին: Այսպիսով, նրա քրիզանթեմներով ձեւավորած բառզիներն իրենց խայտաբղետ գույներով, բույրով, համով ու տեսքով գրավում էին մարդկանց: Կարծ ժամանակ անց նա համբավավոր մարդ դարձավ: Քանի որ նա չափազանց զբաղված էր իր հաճախորդների հետ գրուցելու համար, մարդիկ կատակով ասում էին, որ Գոուզին բառզի է վաճառում՝ առանց իր հաճախորդներին ողջունելու: Այսպիսով մարդիկ սկսեցին նրան անվանել Գոուբուլի, իսկ նրա վաճառած բառզիները՝ Գոուբուլի բառզի:

Մեր օրերի Գոուբուլի բառզին ներկայանում է նորացված, մի քանի սերնդի վարպետների կողմից վերամշակված ու կատարելագործված տարբերակով: Այսօր բառզիի ավելի քան 100 տեսակ գոյություն ունի, որը բաժանվում է վեց խմբի՝ խոզի մսով լցոնված բառզի, երեք թարմ նուրբ խորտիկներով լցոնված բառզի, խոզի կաշվով լցոնված բառզի, ծովամթերքներով լցոնված բառզի, վայրի հատապտուղներով լցոնված բառզի եւ ծովախսցգետնի մսով լցոնված բառզի: Բառզիի յուրաքանչյուր տեսակ իր յուրահատուկ համն ունի եւ իսկապես մեծ հոչակ է վայելում:

Խոզի մսով լցոնված հյութեղ բառզին

Շանհայի արվարձաններից մեկի՝ Նանսիանի ավանդական խորտիկների շարքին է դասվում խոզի մսով լցոնված հյութեղ բառզին: Այն ավելի քան հարյուր տարվա պատմություն ունի: Խոզի մսով լցոնված բառզին խմորն արվում է բարձր կարգի ալյուրից, իսկ լցոնի մեջ հիմնականում օգտագործում են խոզի շերտատած տոտիկներ եւ մի քանի այլ բաղադրիչներ՝ թակած կոճապղպեղ, խոզի կաշվից պատրաստած դոնդող, աղ, սոյայի սոուս, շաքարավազ եւ ջուր՝ առանց սոխի ու սխտորի: Խոզի մսով լցոնված բառզիի որակը գնահատելու համար հարկավոր է. շոգեխաշած տաք բառզին տեղափոխել ափսեի մեջ, ծակել վերեւի շերտը, ինչից հետո դրա հյութը պիտի ծորա ափսեի մեջ: Եւ իվերջո, բառզիի միջի լցոնը պետք է ունենա հետեւյալ առանձնահատկությունները. նուրբ խմոր, թարմ հյութ, փափուկ միս ու առատ լցոն: Պատրաստի բառզիները շատ փոքր, նուրբ, կիսաթափանցիկ, բյուրեղանման ու փոքր-ինչ դեղին տեսք ունեն եւ նման են պագողայի: Դրանք կծելիս համեղ հյութը ձեր ախորժակը կբացի: Եվ դրանք էլ ավելի համեղ կստացվեն, եթե համենեք մի քիչ կտրտած կոճապղպեղով, քացախով ու ծվային ապուրով:

Սինցզյանի թխուկ-բառզին

Սինցզյան Ույղուրի ինքնավար մարզի էթնիկ բնակիչների ամենասիրած ուտելիքներից է թխուկ-բառզին: Թխուկ-բառզիների խմորը պատրաստում են առանց թթվանորի. դրանք շատ բարակ ու քառակուսաձեւ տեսք ունեն: Լցոնի բաղադրության մեջ մտնում է խորանարդիկաձեւ կտրտած ոչխարի միսը, ոչխարի յուղը, սոխը, քեմոնի փոշին, աղացած պղպեղն ու աղը: Լցոնված բառզիները տեղափոխում են հատուկ ջեռոցի մեջ եւ թխում են, մինչեւ որ բառզիները կարմրեն ու ներսի միջուկը եփվի:

Տապակած բառզի

Տապակած բառզիներին նաեւ անվանում են Շանդունյան տապակած բառզի կամ ջրում տապակած բառզի եւ դրանք իրենց ավելի քան հարյուրամյա պատմությամբ Շանդունի ամենահայտնի թեթեւ խորտիկներից են: Տապակած բառզիների պատրաստման ժամանակ պետք է մշտապես հետեւել եռացնելու, շոգեխաշելու եւ տապակելու հաջորդական գործընթացին: Տապակած բառզիների խմորը պատրաստվում է թթվանորով: Այդ փոքրիկ ու համեղ բլիթները տապակում են հարթ թավայի մեջ, որի մեջ լց-

ված է ջուր եւ յուղ: Բլիթները պատրաստ են համարվում, երբ դրանք կարմրում ու փափուկ, փխրուն տեսք են ստանում: Եռացող ջրի, տապակվող յուղի ու բարձրացող գոլորշու միախառնուրդից բառցիների բույրը ավելի համեղ է բուրում:

3. Շառմախ /շոգեխաշած խմորագնդիկներ/

Շառմախն թեթեւ խորտիկ է, որը պատրաստում են ալլային խմորից ու լցոնային թանձր զանգվածից: Շառմախները եփում են շոգեխաշելով: Շոգեխաշ շառմախն ավանդական ուտեստ է Շանսիի հարավում: Առաջին անգամ շառմախներ պատրաստել են Յունան դինաստիայի ժամանակաշրջանում՝ Ներքին Մոնղոլիայի Յոհիհորի շրջանում:



Այնտեղի որոշ խանութներում բիզնես նպատակով սկսեցին վաճառել շոգեխաշած խմորագնդերի որոշ տեսակներ: Յետագայում շառմախն անցավ զարգացման էվոլյուցիայի միջով եւ այսօր կան նորացված շառմախի բազմաթիվ տեսակներ՝ տարրեր բաղադրիչներով: Սակայն ասում են նաև, որ շառմախն առաջացել է բառցից: Շառմախի եւ բառցիի միջեւ տարբերությունն այն է, որ առաջինները պատրաստում են առանց թթվամորի եւ դրանց գլխիկները չեն փակում /նման է վրացական խինկալիին/:

Շառմախն նուան տեսք ունի, այն սպիտակ ու թափանցիկ է՝ առատ միջուկով: Շոգեխաշած խմորագնդիկներն ունենում են նուրբ խմոր, անուշահոտ ու համեղ են: Շառմախ պատրաստելիս այսուրի հետ տաք ջուր են խառնում եւ խմոր հունցում: Այսպես խմորը կիսով չափ եփվում է: Յետո խմորի մեջ մի քիչ սառը ջուր են ավելացնում եւ շարունակում հունցել այնքան, մինչեւ որ խմորը թանձր զանգվածի վերածվի: Խմորն ավելի կպչուն դարձնելու համար օգտագործում են հատուկ կարծ ձող, որի երկու ծայրերը բարակ են, իսկ մեջտեղի մասը՝ հաստ. այն շատ նման է փայտե մահակին, դրանով խմորը գրտնակում են: Խմորը, կամ՝ կաշին, պետք է բարակ լինի: Խմորը փոքրիկ մասերի բաժանելուց ու գրտնակելուց հետո ամեն մի խմորի մեջտեղում լցնում են միջուկը, ապա ծայրերը բարձրաց-

նում, հավաքում եւ, շառմայի ձեւ տալով, դնում են կաթսայի մեջ, որ շոգեխաշվի: Շառմայներն արտաքինից պատված են բարակ թաղանթով, իսկ դրանց ներսում առատ միջուկ է: Դրանք շատ նման են փոքրիկ ծաղկանանի՝ հատակը կլոր, իրանը՝ բարակ, իսկ գլխիկները՝ ժապավենաձեւ: Շառմայն ոչ միայն գեղեցիկ է, այլև շատ համեղ: Նրա միջուկի բաղադրությունը հիմնականում մածուցիկ բրինձ, բողի, կաղամբ եւ անյուղ միս է լինում: Շառմայն ավելի համեղ կստացվի, եթե ուտլու ժամանակ օգտագործեք քացախ կամ թակած սխտորով պատրաստած սոուս:

4. Զիառզի /Խմորագնդիկներ/

Զիառզին հայտնաբերվել է չին հայտնի բժիկ Չժան Չժունժինգի կողմից՝ Արեւելյան Հան դինաստիայի ժամանակաշրջանում: Կան զիառզիի տարբեր տեսակներ՝ ջրային, շոգեխաշած, տապակած, որոնք ունեն պատրաստման բազմաթիվ եղանակներ: Զիառզիի խմորը կարող է լինել յուղոտ կամ անյուղ. խմորը կարող է պատրաստվել ճաեւ բրնձի ալյուրից: Այն կարող է ունենալ եւ քաղցր ու աղի միջուկ, եւ կարող է պատրաստված լինել մսից կամ բանջարեղենից: Զիառզիի խմորը հաճախ շատ բարակ է, իսկ լցոնը՝ շատ նուրբ ու համեղ. այն յուրահատուկ տեսք ունի: Զիառզի պատրաստում են տարբեր բաղադրիչներից, դրանք հիմնականում սննդարար են: Ավելին, շոգեխաշելիս պահպանվում են մթերքների օգտակար հատկությունները, ինչը նույնպես համապատասխանում է չինական ավանդական սննդակարգային մշակույթին, որտեղ մեծ տեղ են տալիս գույների, համի ու բույրի ներդաշնակ համարդությանը: Այսպիսով, մարդիկ Չինաստանում շատ հաճախ գերադասում են զիառզի ճաշակել: Չինաստանում անգամ ասում են, որ ամենահամեղ կերակուրը զիառզին է: Ամեն տարի Գարնանային փառատոնի ժամանակ չինացիները հաճույքով զիառզիներ են ընթոշինում:

Չինաստանի տարբեր շրջաններում կարելի է հանդիպել զիառզիի բազմաթիվ ու բազմապիսի տեսակների, ինչպես, օրինակ՝ օվլայի ալյուրով պատրաստած մանր ծովախեցգետիններով զիառզին՝ Գուանդունում, տապակած մսով զիառզին՝ Շանհայում, ծովախեցգետնի ձկնկիթով լցոնված շեգեխաշուր զիառզին՝ Յանչժոյում, արգանակով զիառզին՝ Շանդոնում, խրթխրթան ծայրերով զիառզին՝ հյուսիս-արեւելքում եւ խոզի մսով լցոնված զիառզին՝ Սիչուանում: Վերոնշյալ բոլոր զիառզիները հայտնի տեսակներ են: Սիանում մարդիկ զիառզիի խնջույքներ են կազմակերպում, որտեղ հյուրերին հյուրասիրում են զիառզիի ավելի քան տասը տեսակներով՝ լցոնված տարբեր բաղադրիչներով:

ԳԼՈՒԽ ԵՐԵՔ

ԿԱՐԿԱՆԴԱԿՆԵՐ

Յին Զինաստանում «կարկանդակ»-ը ալրային ուտելիքների ընդհանուր անվանումն էր: Զինական խոհանոցում առանձնացնում են կարկանդակների երկու հիմնական տարատեսակ: Առաջին տեսակը ջրաեռ կարկանդակներն են: Դրանք իրենցից ներկայացնում են կոշտ արիշտաների մի ամբողջ շարք՝ կարկանդակներն արգանակուն, տափակ արիշտաները եւ այլն, ինչպես նաև լցոնված շոգեխաշու ուտելիքների մի ամբողջ շարք՝ վոնտոնը, ջիառզին եւ այլն: Երկրորդ տեսակը թխած կարկանդակներն են: Լինում են մսով լցոնված կարկանդակներ, ինչպիսիք են «թխած նրբարլիթները», եւ կարկանդակներ, որոնք լցոնված են բանջարեղենով, ինչպես՝ «հու նրբարլիթը» եւ «մա նրբարլիթը»: Այս բաժնում մենք խոսելու ենք երկրորդ տեսակի մասին: Կարկանդակներ պատրաստելու բազմաթիվ եղանակներ կան, օրինակ՝ շոգեխաշելով, եփելով, թխելով, տապակելով, խորովելով եւ թավայի մեջ տապակելով: Խորթխրթան, ջրում բացվող արիշտաները, թթվածորով արիշտաները, ձվով արիշտաներն ու բրնձով արիշտաները բոլորն իրենց յուրահատուկ համն ու հոտն ունեն: Այսօր չինացիների ամենօրյա սննդակարգի մեջ այս կարկանդակներն իրենց պատվավոր տեղն են զբաղեցնում:

1. Լոտոսի տերեւանման նրբարլիթներ

Լոտոսի տերեւանման նրբարլիթները տեղից տեղ տարբեր անուններ ունեն: Տարբերում են դրանց մեջ կամ փոքր տեսակները: Մեծ նրբարլիթների տրամագիծը ավելի քան քսանիինգ սանտիմետր է, իսկ փոքրինը՝ մեկ բռաչափ: Լոտոսի տերեւանման նրբարլիթները թղթի պես բարակ են, փափուկ ու սպիտակ, ճկուն ու ծամելի: Դաճախ նրբարլիթներն ուտում են կանաչ սոխով ու սոուսով լցոնված միջուկով: Լոտոսի տերեւանման գլանակած նրբարլիթների խճողակը շատ բազմազան է. այն կարող է լինել մսից կամ բանջարեղենից:



Բանջարեղենային խճողակի լցոնն իր մեջ պարունակում է լորու ծիլեր, կտրատած կարտոֆիլ, վերմիշել, կանաչ սոխ եւ այլն: Մսային նրբարլիթ-ների միջուկը կարող է լինել կտրտած հավի, խոզի, տավարի, գառան եւ այլ կենդանական մսեր:

2. Յութիառ /յուղում տապակած խմորե ձողիկներ/

Յութիառն, նաեւ հայտնի որպես՝ չինական կարկանդակ, յուղուտ ձողիկներ, յուղու դոնդողներ, Չինաստանում ամենաընդունված նախաճաշն է համարվում: Սուն դինաստիայի արձանագրությունները վկայում են, որ յութիառն դարավոր պատմություն ունի. մ.թ. տասնմեկերորդ դարում Շառուփինգի Սուն դինաստիայի կայսեր Գաոզոնգն ու նրա որդիները քին քուեի լարած թակարդն են ընկնում: Ամբողջ բանակն ու ժողովուրդը քին քուեի հանդեպ ատելությամբ են լցվում: Այդ ժամանակ Լինանի Ֆիբո տաղավարում երկու խոհարար էին աշխատում: Նախաճաշ պատրաստելու համար նրանք վերցնում էին խմորն ու դրանից երկու պատկեր ձեւավորում, որոնք նման էին քին քուեին ու նրա կնոջը՝ Վանգին: Խոհարարներն այդ երկու մոռելները հյուսելով իրար էին ծովլում, դնում էին եռացող յուղով լի թափայի մեջ, որ տապակվի, եւ դրանք անվանում էին՝ «տապակվող քին քուեի»: Այս կարկանդակները արտաքինից փիսրուն են, ներսից նուրբ ու փափուկ, ունեն ոսկեգույն տեսք, աղի են ու բուրավետ: Յետագայում դրանք աստիճանաբար զարգանալով դարձան նախաճաշի համար ժողովրդական ավանդական ուտելիք, որը սիրված է բոլորի կողմից, եւ հարմար է թե՝ մեծերին, թե՝ փոքրերին:

3. Քնջութով նրբարլիթներ

Պատմական աղբյուրների համաձայն՝ քնջութով նրբարլիթներն առաջին անգամ ներկայացվել են Չան դինաստիայի օրոք՝ Բան Չաոյի կողմից, եւ դրանք հայտնի էին Չան դինաստիայում: Նրբարլիթների բազմաթիվ տեսակներ կան, ինչպես, օրինակ՝ մեծ նրբարլիթներ, թխած նրբարլիթներ, քնջութով նրբարլիթներ, յուղարլիթներ, կտրտած նրբարլիթներ, քնջութի մածուկով քաղցր նրբարլիթներ եւ այլն, որոնք ստորաբաժանվում են ավելի քան հարյուր տեսակի:

Չինհուայի փիսրուն նրբարլիթն ամենահայտնի նրբարլիթներից է: Այն ունի դեղնա-ոսկեգույն տեսք եւ արտակարգ համեղ է բուրում: Այն հայտնի աղանդեր է Չժեժանգի Չինհուա քաղաքում:

4. Գարնանային փաթույթներ

Գարնանային փաթույթները, կամ ինչպես ասում են՝ գարնանային բլիթները կամ բարակ բլիթները, Յան ազգության ավանդական փառատոնային ուտեստն են համարվում: Գարնանային փաթույթները սերել են անտիկ ժամանակների գարնանային բլիթներից: Զինաստանի ազգային սովորույթներում ընդուն-



ված է գարնան առաջին օրը գարնանային փաթույթներ ճաշակել: Դրանք ոչ միայն ազգային խորտիկ, այլ նաև պալատական ուտելիք են համարվում: Ցինաստանի ազգային սովորույթներում կայսերական խնջույքի հարյուր քսանութ տեսակի խորտիկների մեջ գարնանային փաթույթն ինը գլխավոր անուշեղեններից մեկն էր:

5. Բազմաշերտ կարկանդակներ

Բազմաշերտ կարկանդակը ստեղծվել է Շանդուն նահանգի Չիեշան գյուղում: Արտաքինից այն հացի չորուկ է, որի մեջ տասնյակ շերտեր կան: Շերտերից յուրաքանչյուրն առանձնանում է մյուսից: Պատրաստի վիճակում դրանք փափուկ ու փխրուն են, սակայն ամենեւին էլ յուղոտ չեն: Բազմաշերտ կարկանդակները շատ համեղ են:

Չիեշանյան բազմաշերտ կարկանդակներից բացի, շատ հայտնի են նաև Չինաստանի Ֆենդուա երկրամասի Յիկու գյուղի բազմաշերտ կարկանդակները: Յիկուի կարկանդակները Ֆենդուայի երեք բարձրորակ արտադրատեսակներից մեկն են, որոնք ավելի քան հարյուր տարվա պատմություն ունեն: Դրա միջուկի մեջ հաճախ ավելացնում են եղեգի մանրացրած արմատներ, իսկ արտաքին մասից այն պատված է քնջութի բարակ շերտով:

Պատրաստի վիճակում դրանք փխրուն են, թարմ ու անուշահոտ եւ կարող են լինել քաղցր կամ աղի:

6. Սինցյանյան տապակած նաան

Չինաստանի պատմական նյութերում արձանագրությունները վկայում են, որ Սինցյանի տապակած նաանը երկար դարավոր պատմություն ունի: Սինցյանի Ուկողուր ինքնավար մարզի թանգարանում, Թան դինաստիայի ժամանակաշրջանից պահպանվել են նաանի մնացորդները, որոնք հայտնաբերվել էին Տուրքանում, ինչը վկայում է այն մասին, որ ավելի քան 2000 տարի առաջ Տուրքանում մարդկանց հայտնի էր, ինչպես համեղ ու հիանալի նաաներ պատրաստել: Սինցյանում գոյություն ունի նաանի ավելի քան 50 տեսակ: Ամենահայտնի նաաներից են՝ ոչխարի մսով լցոնված նաանը, յուղով թխածը, վոլո նաանը, քնջութով տապակածը, կտրտած նաանը, սիման նաանը եւ այլն:

7. Շանդունյան տապակած նրբարլիթներ

Տապակած նրբարլիթն ի հայտ եկավ Թայ լեռնաստանում: Այն համարվում է Շանդունի միջին եւ հարավային հատվածների ավանդական ուտելիքը: Շանդունյան նրբարլիթները պատրաստում են ցորենի այսուրից ու շատ նուրբ են փաթաթում: Այս հիասքանչ նրբարլիթները թղթի պես բարակ են, մուգ ոսկեգույն, նուրբ ու ծամելի: Դրանք յուրահատուկ կրուրեն, եթե փաթաթեք մանրացրած կանաչ սոխով: Տապակած նրբարլիթները շատ արագ են պատրաստվում: Դրանք սննդարար են եւ դյուրամարս:

8. Պիտա հացը՝ գառան ապուրի մեջ



Բրդած հացի կտորներով գառան ապուրը Շենսիյան հայտնի աղանդերն է: Այս աղանդերի առանձնահատկությունն առատ հումքի, սուր հոտի, անմշակ մսի, կայչում սուափի, բուրավետության ու, վերջապես, ստամոքսը տաքացնելու հատկության մեջ է: Գառան մսով ու հացի կտորներով այս համեղ

արգանակը պատրաստելու համար հարկավոր է հատուկ խոհարարական ձիրքով օժտված լինել: Մսի հետ եփվող հացի կտորները փիխրուն ու անուշահոտ են եւ ապուրի մեջ դրանք չեն լուծվում: Մինչ ապուրը պատրաստելը հարկավոր է հացը ձեռքով բրդել: Եփելու ընթացքուն արգանակի համը որոշում են հացի կտորներով եւ արգանակին ավելացնում են համապատասխան բաղադրիչները: Այն արագ պատրաստելու համար կրակը պետք է ուժեղ լինի: Այսպես ապուրի մեջ տամկած հացը կլանում է յուրահատուկ ապուրի անուշ բույրն ու մեր քիմքն է քաղցրացնում:

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ ԱՊԱՆԴԵՐՆԵՐ

Աղանդերը ճաշից հետո մատուցվող թեթեւ ուտելիքն է: Բրնձային ճաշատեսակների ի հայտ գալուց հետո հատուկ սննդակարգային նորմեր սահմանվեցին եւ, ի վերջո, ձեւավորվեց իհմնական ուտեստները երկրորդական ուտեստներից առանձնացնելու մշակույթը: Արդեն ժողու դիմաստիայի ժամանակաշրջանում իհմնական ուտեստը տարբերվում էր ոչ իհմնականից: Մի խոսքով՝ աղանդերներն օժանդակ գործառույթ ունեն:

ԳԼՈՒԽ ՄԵԿ

ՀՐՈՒՇՎԱԿԵՂԵՆ

Խմորեղենը զանազան նյութերով ու համեմունքներով շաղախված խմորից պատրաստվող թխվածքների ամբողջությունն է: Խմորեղենի պատրաստման իհմնական բաղադրիչներն են այսուրը՝ ցորենի կամ բրնձի, շաքարավազը, յուղը, ձուն, սերուցքը, կաթը: Սկզբնական մշակում անցնելուց հետո խմորեղենները կարող են տարբեր ձեւեր ընդունել, այնուհետեւ դրանք անցնում են մշակման հետագա փուլերը՝ խառնում, գոլորշային մշակում, թխում: Չինաստանում խմորեղենը թխվածքների, խմորեղեն ուտելիքների ընդհանուր անվանումն է: Թխվածքները լինում են երկու տեսակի. մեկը պատրաստում են շոգեխաշնան եղանակով, ինչը կրակից որոշակի հեռավորության վրա է արվում: Մյուսը՝ ջեռոցում են թխում: Մ.թ.ա. 206 թվականին, Չան դինաստիայի իհմնադիր Վուզուի թագավորման տարիներին, գոյություն ունեին թխվածքների որոշ տեսակներ, որոնց անվանում էին կտրտած տորթեր: Դեռևս Սուն եւ Յուան դինաստիաների ժամանակաշրջանում թխվածքներն արդեն կատարելագործվելով՝ դարձել էին լայն սպառման ապրանք, եւ շուկայում բացվել էին խմորեղենի խանութներ: Ֆուչժոուի հայտնի Շոհիլու Զուան հրուշակեղենի խանութը ասպարեզ եկավ Յուան դինաստիայի ժամանակ: Մին եւ Ցին դինաստիաների ժամանակաշրջանում ամենուրեք կարելի էր տեսնել հրուշակեղենի խանութներ՝ գյուղերում թե քաղաքներում: Յուշակեղենի խանութներում

Խմորեղենի վաճառքի ծավալները հասնում էին մեծ մասշտաբների, ինչպես, օրինակ՝ Ֆուչժոուի Բաոլայի Քսուան արտադրամասը, Սյամենի Ցին-լան խանութը, Ցյուանչժոուի Քուաննատ հրուշակեղենի արտադրամասը, Շիշիի խին քաղցրավենիքների խանութը:

Չինաստանում խմորեղենների արտադրությունն երկար պատմություն ունի եւ այն շատ նուրբ աշխատանք է պահանջում: Խմորեղենների տեսակները բազմազան են, եւ մենք տարբերում են ութ հիմնական տեսակ՝ յուղով խմորեղեն, շաքարավազով խառնած խմորեղեն, կաշուն խմորեղեն, վառարանի խմորեղեն, գոլորշու վրա պատրաստած խմորեղեն, խրիստան խմորեղեն, տապակած խմորեղեն եւ այլ տեսակներ: Ավելին, հաշվի առնելով այն հանգամանքը, որ երկի տարբեր շրջաններում սովորույթները տարբեր են, եւ տարբեր են նաև արտադրանքները, թխվածքներն, ի վերջո, տարբերակվեցին ըստ տեղական համ ու հոտի: Այսպիսով՝ տարբեր շրջաններում կան տարբեր դպրոցներ եւ հիմնական դպրոցները Ցզին ոճի, Սու ոճի, Գուան ոճի, Մին ոճի, Չան ոճի, Յան ոճի, Նինշան ոճի եւ Չուան ոճի են: Չինաստանում կա խմորեղենի ավելի քան 3000 տեսակ:


1. Լվ դա գուր /կաշուն բրնձե ռուլետներ քաղցր սոյայի ալյուրով/

Լվ դա գուրը, կամ ինչպես ասում են՝ սոյայի ալյուրից պատրաստած խմորեղենը, Պեկինի ամենահին նախուտեստներից մեկն է: Լվ դա գուր պատրաստելու համար օգտագործում են դեղին գյուտինային բրինձ, դեղին ու կարմիր սոյայի հատիկներ եւ սոյայի քաղցր ալյուր: Որոշ մարդիկ այս խմորեղենն անվանում են «քաղցր սոյայի ալյուրով կաշուն բրնձե ռուլետ», սակայն այն ուրիշ հետաքրքիր անուն ունի՝ «քավալուն ավանակ»: Ինչու՞ լվ դա գուր՝ թավալուն ավանակ, որովհետեւ գրտնակելիս խմորի վրա ցանում են սոյայի փոշի, ինչը մարդկանց հիշեցնում է գետնի վրա թավալվող ավանակի, որ ոտքերով աքացիներ անելով՝ փոշու ամա է բարձրացնում: Դրանք պատրաստելու համար հարկավոր է հունցել, լցոնել ու ձեւավորել: Եցնը պետք է հավասարապես բաշխել, որպեսզի փաթաթելիս շերտերը



հավասար ստացվեն: Դրանք անուշահոտ են, քաղցր ու գյուտինային /կպչուն/ եւ սոյայի ալյուրի սուր հոտն ունեն: Պատրաստի լվ դա գուրները դրսից պատված են սոյայի ալյուրով եւ ոսկե-դեղնավուն տեսք ունեն: Սոյայի հատիկմերը բուրավետ են, եւ միջուկը քաղցր է, նուրբ ու արտակարգ համով: Այն ավանդական տեղական անուշեղեն է սիրված թե մեծերի եւ թե փոքրերի կողմից:

2. Սիսեռով անուշեղեն



Սիսեռով անուշեղենը, որի մեջ հիմնական բաղադրիչը սիսեռն է, յուրահատուկ քաղցրեղեն է Պեկինում: Այն ունի բաց դեղին գույն, նուրբ է ու հարթ, պարզ ու թափանցիկ, եւ բերանի մեջ հալչում է: Խաճելի համով այս քաղցրեղենն իսկապես հրաշալի է բուրում: Այս

շատ հայտնի է, քանի որ այրի կայսրուիկ Ցիսին դրանք ուտել շատ էր սիրում: Եւ որովհետեւ սիսեռը կարող է սպիացնել վերքերը, նվազեցնել բորբոքումները, նվազեցնել արեւի ուղիղ ճառագայթների բացասական ազդեցությունը, իջեցնել արյան ճնշումը, այրել ճարպերն ու քաշը նվազեցնել, սիսեռով անուշեղենը դարձավ սեղոնային ուտելիք՝ գարնանը, իսկ ամռանը՝ տապը մեղմելու դարման:

Պեկինում մարդիկ ամեն տարի մարտի 3-ին սովորության համաձայն սիսեռով անուշեղեն են ճաշակում:

Սիսեռով անուշեղենը Պեկինում լինում է երկու տեսակի՝ արքայական ու գյուղական: Արքայական սիսեռով քաղցրեղեն պատրաստելու համար, նախ, մաքրում են սիսեռը, լվանում, շոգեխաշում, այնուհետեւ դրանք քամելու /ֆիլտրելու/ համար օգտագործում են եղեգե կողով, հետո մի որոշ ժամանակով մի կողմ են դնում, որ նստվածք տա: Շոգեխաշելուց հետո ավելացնում են սպիտակ շաքարավազ եւ քաղցր բուրավետ օսմանթուս: Երբ այն սառչում է, շերտերով կտրում ու դասավորում են գեղեցիկ տուփերի մեջ: Ընկերներին ու բարեկամներին հյուրավիրելիս դրանք կարելի է նաեւ համադրել տարրեր տորթերի հետ եւ եղբերին շարել:

Գյուղական սիսեռ սիսեռով անուշեղեն պատրաստելու համար անհրաժեշտ է

հատակը հաստ ու հարթ կլոր կաթսա, որպեսզի սիսեռը լավ եփվի: Այնու-
հետեւ սիսեռաջուրը սառչելուց հետո ավելացնում են փոքր, հասած ար-
մագներ: Կաթսայից հանում են դոնդողանման զանգվածը, կտրտում եւ
ճաշակում են: Այս տեսակ անուշեղենը համեմատաբար կոպիտ է ստաց-
վում, բայց այն պահպահնում է սիսեռի բնական գույնն ու համը:

3. Տյանցգինի տասնութերորդ փողոցի տապակած հյուսաբլիթները

Տասնութերորդ փողոցի տապակած հյուսաբլիթները շատ արտասովոր
անվանում ունեն: Դրանց պատրաստման համար անհրաժեշտ է հատուկ
հումք. դրանք շատ նուրբ ու սքանչելի տեսք ունեն եւ ոսկեդեղին գույնի
են: Տապակած հյուսաբլիթները խրիստութան են, քաղցր ու շատ բուրավետ:
Դրանք շատ հայտնի են ինչպես Զինաստանում, այնպես էլ նրա սահման-
ներից դուրս: Խաօք լցոններով տապակած հյուսաբլիթները ոչ միայն
խրիստութան ու բուրավետ են, այլև՝ յուղոտ, բերանում հալվող ու համեղ:
Բացի դրանցից, հյուսաբլիթները լավ տապակված են, նրանց մեջ ջուր կամ
կոնսերվանտներ չկան: Աշնանն ու գարնանը դրանք կարելի է պահպանել
մինչեւ երեք ամիս, երկու ամիս էլ կարող է ամռանը պահպանվել, ինչը
շատ մարդկանց է զարմացնում: Չոր ու լավ օդափոխվող տեղերում պա-
հելու դեպքում դրանք իրենց բույրը չեն կորցնում, չեն փափկում եւ չեն
փշանում:

4. Էրդուոյանյան տապակած թխվածքաբլիթ

Էրդուոյանյան տապակած թխվածքաբլիթը համարվում է Տյանցգինի
երեք առանձնահատուկ ուտելիթներից մեկը: Այն ավելի քան հարյուր
տարվա պատմություն ունի: Ցին դինաստիայի օրոք, Գուանգսուի կառա-
վարման տարիներին, էրդուոյանյան տապակած թխվածքաբլիթների
ստեղծող Լյու Վանչունն իր ապրուստի միջոցը վաստակում էր տապակած
թխվածքաբլիթներ վաճառելով: Մշակած հումքի, նուրբ վարպետության,
լավ համի, յուրահատուկ ձեւի, էժան ու գրավիչ տեսքի շնորհիվ Լյու Վան-
չունի թխվածքաբլիթները կարծ ժամանակում իրենց արտակարգ համով
ու հոտով գերեցին մարդկանց եւ դարձան ժամանակի ամենահայտնի թխ-
վածքաբլիթները՝ բոլոր տապակած թխվախքաբլիթների մեջ: Ի վերջո, իր
յուրահատուկ ձիրքի շնորհիվ նա այդ թխվածքաբլիթներն այն աստիճան
կատարելագործեց, որ նրա բիզնեսն օր օրի ծաղկեց՝ արժանացնելով
նրան «Լյուի տապակած թլիթներ» պատվավոր անվանը: Նրա տապակած
թլիթների խանութը գտնվում էր Գիի եւ Նիոլ փողոցների անկյունում՝ գրա-

վատների, բանկերի, հագուստի, կոշկի, գլխարկների եւ մթերային խանութների հարեւանությամբ: Անկախ սոցիալական վիճակից, ուրախ առիթների ժամանակ, օրինակ՝ փառատոններ, ծննդյան օրեր, մարդիկ միշտ պատվիրում էին նրա թխվածքաբլիթները: Չինարենում «թխվածք» բառի արտասանությունը համահունչ է «ավելի բարձր» բառի արտասանածեւն, այդ պատճառով մարդիկ սիրում էին ուտել թխվածքաբլիթներ՝ լավ բախտ ունենալու համար, որպեսզի ավելի հաջողակ ու ավելի հարուստ լինեն: Այսպես, նրա գործը գնալով ծաղկում ու բարգավաճում էր: Ավելին, նրա տապակած թխվածքաբլիթների խանութը տեղակայված էր նեղլիկ ու երկար երդուոյանյան նրբանցքի մոտ, որի լայնությունն ընդամենը մեկ մետր էր, եւ իր հաճախորդներն այդ տապակած թխվածքաբլիթները ծաղրանքով «եղուոյանյան թխվածքաբլիթներ» էր անվանում, ինչը միայն նպաստում էր նրա բիզնեսին:

Լավագույն գյուտինային բրինձը երդուոյանյան տապակած թխվածքաբլիթի մաշկն է, սոյայի կարմիր փոքրիկ լորիներն ու շաքարավազը՝ նրա միջուկը, եւ դրանք տապակում են յուղի մեջ: Պատրաստի երդուոյանյան տապակած թխվածքաբլիթները գնդածեւ են, ուսկեդեղին գույնով, արտաքին մասը փիսրուն է, միջուկը՝ սեւ ու կարմիր, նուրբ ու մածուցիկ, համեղ ու քաղցր: Այն դարձել է Տյանցգինի իկոնային ուտելիքը, որը երկար ժամանակ մեծ համբավ էր վայելում:

5. Շաքիմա

Շաքիման Ման ազգության ավանդական անուշեղեններից է, որը հետագայում դարձել է նաև Ցին դինաստիայի երեք մատուցվող զոհաբերություններից մեկը: Ինաստնաբար այն նշանակում է՝ ալրաշաղախ շաքար: Երբ Ման ժողովուրդը Պեկին ներգաղթեց, շաքիման սկսեց հայտնի դառնալ:

Շաքիման Պեկինում չորս հայտնի սեղոնային թեթեւ ուտեստներից մեկն է համարվում: Նախկինում մարդիկ յուղի մեջ բովում էին այսուրը, այնուհետեւ ավելացնում էին շաքարավազ եւ մանր քառակուսիներով կտրում էին: Յետագայում շաքիմայի պատրաստման որակը բարձրացավ: Մարդիկ սկսեցին այսուրի մեջ ծու ավելացնել, տապակել եւ ստացված զանգվածին ավելացնել շաքարավազ, մեղր, սերուցք եւ այլն, մինչեւ որ դրանք չորանան: Շաքիմաները ոսկեգույն տեսք ունեն, փիսրուն ու թեթեւ, քաղցր ու բուրավետ են եւ ամբողջովին պատված են անուշաբույր օսմանթոսի մեղրով:

6. Բրնձե տորթեր

Բրնձե տորթը հան ազգության ավանդական ուտելիքն է: Սովորաբար այն պատրաստում են կայչուն բրնձի այսուրով: Ասում են, որ Գարնանային փառատոնին բրնձե տորթ ուտելու ավանդույթը գալիս է Չժոռ դինաստիայից, ինչը նշանակում է, որ այն ավելի քան 3000 տարվա պատմություն ունի: Այն ժամանակ աստվածների ու նախնական պատվին բրնձե տորթ էին զոհաբերում: Հետագայում այն դարձավ Գարնանային փառատոնին զոհաբերվող ուտելիքը: Բրնձը տարին մեկ անգամ է հասունանում, ուստի Գարնանային փառատոնին բրնձե տորթ ուտելու իմաստն այն է, որ հաջորդ տարվա համար մաղթում են լավ բերք ունենալ: Ավելին, չինարենում բրնձե տորթ բարի արտասանությունը շատ նման է մեկ այլ բարի արտասանությանը, որը նշանակում է «տարեցտարի բարելավում», ուստի Գարնանային փառատոնի ժամանակ բրնձե տորթ ճաշակելը բարի բախտ է կանխանշում՝ գալիք տարում եկամուտն ավելացնելու, պաշտոնի առաջնադաշտային կամ ընտանիքի բարեկեցության համար:

7. Չորամրգեր

Չորամրգը մի քանի փուլ անցնող աղանդերի տեսակ է: Չորամրգ պատրաստելու համար թարմ մրգերը կեղեւահանում են, դուրս են բերում միջուկը, եփում են շաքարավազով լցորած ջրի մեջ եւ թողնում են, որ մրգերը ջուրը ներծծեն՝ ջրարբեն: Այնուհետեւ դրանք չորացնում են եւ փաթեթավորում: Պեկինում ձեւավորված սովորույթի համաձայն՝ մարդիկ սակավաջուր ու հյութազուրկ մրգերին անվանում են «չորացրած միրգ»: Կան չորամրգերի բազմաթիվ տեսակներ, եւ հայտնի ավանդական չորամրգերից են՝ չորացրած ծիրանը, տանձը, դեղձը, չորացրած կանաչ սալորը եւ ալոճը: Թեեւ Չինաստանում գրեթե ամենուր չորացրած մրգեր կան, այնուհանդերձ՝ ամենահայտնիները Պեկինում են: Պեկինում պատրաստած չորամրգերին անվանում են Զին ոճի չորամրգեր, քանի որ դրանք պատրաստվում են ընտիր հումքից, եւ այդ արտադրանքը հարուստ է գունային բազմազանությամբ եւ համեղ է ու փափուկ: Զին ոճի չորամրգերը կոտրատված ու կայչուն չեն, դրանք աչքի են ընկնում իրենց նուրբ, քաղցր ու թթվաշ համերով:

8. Կանաչ սոյաբլիթներ

Կանաչ սոյաբլիթը սեզոնային ուտելիք է, որն ընդունված է ուտել ամառվա սկզբին: Սոյաբլիթները պատրաստում են սոյայի այուրից, սիսեղի այուրից, դեղին շաքարավագից, քաղցրահամ օսմանթուսից եւ որոշ այլ բաղադրիչներից: Այն շատ հիանալի ամառային խորտիկ է, որը կարող է թեթեւացնել ամառվա տորից եւ օրգանիզմից թույները հանել /դետոքսիկացնել/: Այն բարերար ազդեցություն ունի յարդի եւ երիկամների վրա: Դեղնականաչավուն սոյաբլիթը նուրբ համ ունի, անուշաբույր ու փափուկ է, եւ ատամներին չի կպչում: Կանաչավուն սոյաբլիթները լինում են երկու տեսակի՝ հյուսիսային ու հարավային: Յյուսիսային տեսակը Զին ոճով է, որն իր արտադրության մեջ յուղ չի օգտագործում: Այն փափուկ, բայց անյուղ է, ուստի դրան նաեւ չոր սոյաբլիթներ են անվանում: Յարավային կողմի կանաչ սոյաբլիթը Սյու եւ Յան ոճի է, եւ պատրաստելիս մի քիչ յուղ են ավելացնում: Այն փափուկ ու յուղոտ է:



ԳԼՈՒԽ ԵՐԿՈՒ

ԱՊՈՒՐՆԵՐ

Թանձրապուրի տարբերիչ առանձնահատկությունն առաջին հերթին այն է, որ այն շոգեխաշման կամ եռման արդյունքում դաշնում է կազուն կամ դոնդողային: Թանձր ապուրը լինում է երկու տեսակի՝ թափանցիկ, հիմնականում խմելու համար եւ՝ հինգ բաղադրիչների խառնուրդից, թանձր ապուր: Վերջին տարիներին թանձրապուր հասկացությունն ընդհանուր առճամբ վերաբերում է շոգեխաշման կամ եռացման արդյունքում ստացված կազուն ու դոնդողային արգանակին: Ճնում աղքատ մարդիկ կարող էին միայն բանջարեղենը ջրում խաշել եւ դրանից թանձր ապուր պատրաստել: Այսպիսի ապուրին անվանում են բանջարեղենային ապուր: Ապուրը հաճելի համ ու հոտով հյութեղ ընպելիք է, որը պատրաստվում է ջրում եռացնելու միջոցով: Այն պահանջում է ընթացքային որոշակի հմտություններ, ինչպես, օրինակ՝ եռացում, խաշում, շոգեխաշում, արագ խաշում եւ այլն:

Ապուրները լինում են քաղցր ու աղի: Լինում են նաև ապուրներ, որոնք ընդիանրապես համ ու հոտ չունեն:

1. Սոյայի կաթ

Չինացիները մեծ տեղ են տալիս սոյայի կաթին: Այն նաև սննդարար սնունդ է, հարմար թե՝ մեծահասակների, թե՝ երեխաների համար: Եվրոպյանում եւ Ամերիկայում այն, որպես «բուսական կաթ», մեծ համբավ է վայելում:

Սոյայի կաթ պատրաստելու համար սկզբում սոյայի հատիկները թրցում են ջրում, ապա աղում, դրանից փոշի են պատրաստում: Այնուհետեւ ճմելով սոյայի հյութը՝ քամում են ջրի մեջ ու եփում: Սոյայի կաթը շատ սննդարար է, քանի որ այն պարունակում է մեծ թվով բուսական սպիտակուցներ, ֆուֆոլիպիդներ, վիտամին B1, B2 եւ նիացին: Բացի դրանից, այն նաև պարունակում է հանքանյութեր՝ երկաթ, կալցիում եւ այլն:

Չին ավանդական բժիշկները սոյայի կաթը համարում են քաղցր ու դյուրին ընպելիք, որը կարող է ապահովել օրգանիզմի համար անհրաժեշտ կենսական սնուցիչներ՝ պաշտպանելով ջրազրկումից. «աշնանն ու ձմռանը մի բաժակ տաք սոյայի կաթ ընդունելով՝ մենք կտաքանանք ու

առողջ կլիմենք»: Մեր օրգանիզմի դիմադրողականությունը բարձրացնելու համար պետք է հաճախ սոյայի կաթ օգտագործել:

2. Քաղցր ապուր

Չինաստանում կան տարատեսակ քաղցր ուտելիքներ, որոնք, իսկապես, կարող են աշխարհում լավագույնը համարվել: Տարբեր վայրերուն կան երկու հիմնական տեսակի քաղցր ապուրներ, մեկը՝ Չառժոռու ոճն է, մյուսը՝ Գուանֆու: Գուանֆու քաղցր ապուրների շարքին են սովորաբար դասվում կանաչ լոբով քոնջին, քաղցր կարտոֆիլային մածուկը, գինգիկոն եւ չորացրած լոբու մածուկը, ձվի եւ լոտոսի մածուկը, քնջութի մածուկը եւ այլն: Չառժոռուի քաղցր ապուրը ներառում է դդում ու թարո-մածուկ, մածուցիկ բրնձային քոնջի, կանաչ լոբու մածուկ եւ այլն:

3. Առողջարար ապուր

Առողջարար ապուրը ջրալի կերակուրի այն տեսակն է, որը, ինչպես ենթադրվում է իր անվանումից, իր մեջ կրում է սննդային թերապիայի ֆունկցիա: Այս ապուրը սննդարար է եւ բաղկացած է մեկ կամ մի քանի քաղադրիչներից: Նրա առանձնահատկությունը կայանում է նրանում, որ նրանում առկա որոշ մթերքներ սպեղանի են բազմաթիվ հիվանդությունների դեմ: Իր բարերար ազդեցության շնորհիվ առողջարար ապուրը հարմար է թե՛ մարմնի կազմվածքի, թե՛ առողջության պահպանման համար: Չինական բուժական տեսությունում ասվում է, որ մենք մեր յարու ահտի սնուցենք գարնանը, սիրտը՝ ամռանը, թոքերը՝ աշնանը, իսկ երիկամները՝ ձմռանը: Այսպիսով, եթե ցանկանում ենք բարելավել մեր առողջությունը գարմանը, ապա պետք է ուշադրություն դարձնենք այնպիսի մթերքների օգտագործման վրա, որոնք կարող են օգնել մեր յարդին: Գարնան ժամանակահատվածում ապուրի բաղադրիչները պետք է հիմնականում լինեն այնպիսի մթերքներից, որոնք համեմատաբար թեթեւ են, փափուկ եւ օգտակար են մեր օրգանիզմի դիմադրողականությունը բարձրացնելու համար: Միեւնույն ժամանակ պետք է մեր օրգանիզմը սնուցենք՝ ելնելով մեր մարմնի կառուցվածքից: Ըստ ամռանը պետք է զովացնող ու թարմացնող ապուրներ ընդունենք: Զովացնող ապուրներ օգտագործելու նպատակը մեր օրգանիզմը թեթեւ սնուցելն է, փայծաղի տոնուսը բարձրացնելը, մարմնից ավելորդ ջերմությունը հեռացնելն ու խոնավության նվազեցումն է: Այսպիսով, ամռանը առողջարար ապուրի մեջ հիմնականում օգտագործում են թեթեւ, առողջարար սննդամթերքներ: Օրինակ, շոգեխա-

շաժ բաղր դրմի խյուսի հետ առողջարար ու սննդարար կերակուր է համարվում՝ ամռանը առողջությանը նպաստելու համար: Դրանից բացի, կան նաև որոշ այլ թերեւ կերակրատեսակներ, որոնք խորհուրդ է տրվում ուտել հատկապես ամռանը, օրինակ՝ մատղաշ խոզի միս, թարմ մրգեր, կանաչ լորի եւ այլն: Աշնանը առողջարար ապուրը պետք է մշակի մեր թոքերը եւ ազատի չորությունից: Աշնանը գերադասելի է ավելի սննդարար սնունդ ընդունել: Այսպիսով, աշնանը առողջարար ապուրի բաղադրության մեջ հիմնականում պետք է մտնեն քաղցր, սառը եւ թացավուն բաղդրիչներ, ինչպես, օրինակ՝ շուշան, սպիտակ սունկ, չինական յամս /քաղցր կարտոֆիլ/, տանձ, լոտոսի արմատներ, բաղի միս, արմավ, քնջութ եւ այլն: Առողջարար աշնանային ապուրը պետք է խոնավեցնի մեր թոքերն ու ազատի չորացումից:

Զնորանը առողջարար ապուրը պետք է սննդարար լինի: Այն պետք է ներդաշնակ լինի բնության հետ, համահունչ Յանի ոճին՝ հիմնականում չափավոր սննդարար: Չինական ավանդական բժշկության սկզբունքի համաձայն՝ «եթե թույլ եք, ապա ինքներդ ձեր օրգանիզմը խոնավեցրեք, եթե մրսում եք, ապա ձեզ տաքացրեք»: Բացի դրանից, տարբեր տարիքի, սեռի, զբաղվածության տեր մարդիկ ձմռանն առողջության պահպանման հետ կապված տարբեր մոտեցումներ ունեն:



4. Գետնանուշով ապուր

Գետնանուշով ապուրը բացառիկ քաղցրապուր է, որը ստեղծվել է Ֆուցզյանի ափամերձ շրջաններում: Այն կարող է սնուցել ու վերականգնել թոքերը: Գետնանուշով ապուրի հումքը շատ պարզ է, իսկ եփելու մեթոդը՝ շատ առանձնահատուկ: Գետնանուշով ապուր պատրաստելու համար գետնանուշը լցնում են եռացող ջրի մեջ ու կեղեւահան անում: Այնու-

ԴՈՆԳ ՔԻԱՆԳ

հետեւ կեղեւահան արված գետնանուշների վրա լցնում են մի քիչ ջուր ու մի փոքր մաքուր սոդայաջուր, հետո դնում են թեժ կրակին ու եփում: Որոշ ժամանակ անց կրակը մեղմում են եւ թողնում, որ դրանք ապուրի մեջ փափկեն: Ապուրի միջի գետնանուշները պետք է լավ եփած լինեն, բայց ոչ կոտրատված: Ճենց որ ապուրը կաթնագույն-սպիտակ է դառնում, այն հայտնվում է մեր բերանում՝ քաղցր ու համեղ: Կախված նրանից, թե ձեռքի տակ ինչ նթերքներ ունենք, կարող ենք գետնանուշով ապուրի նեզ ավելացնել նաև այլ բաղադրիչներ ու ստանալ տարբեր համերով ապուր՝ հավի տոտիկնորով գետնանուշապուր, լոնգամով գետնանուշապուր, բուխտակով գետնանուշապուր, ընկույզով գետնանուշապուր, կարմիր արմավներով գետնանուշապուր, խոզի աղիքներով գետնանուշապուր ու այսպես շարունակ:

ՄԱՍ ԵՐՐՈՐԴ

ԶԻՆԱՍՏԱՆԻ ՏԱՐԲԵՐ ՏԱՐԱԾՐՁԱՆՆԵՐԻ ՀԱՄՆ ՈՒ ՀՈՏԸ

Համային ու հոտային տարբեր դպրոցների կազմավորումն ու զարգացումը սերտողեն կապված են աշխարհագրական դիրքի, հումքի պաշարների, պատմական իրադարձությունների, սովորույթների, մշակույթի, կրոնական հավատքի հետ: Սույն գործոնների ազդեցությամբ պայմանավորված՝ Զինաստանի տարբեր տարածաշրջաններում գործում են տարատեսակ համուհոտային դպրոցներ, որոնք խորապես տարածվել ու զարգացել են ժամանակին համընթաց՝ ձեւավորելով իրենց բնորոշ առանձնահատկությունները:

ԳԼՈՒԽ ՄԵԿ

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԲՈՒՐՄՈՒՆՔ

1. Հյուսիս-արեւելյան Զինաստանի համն ու հոտը

Հյուսիսարեւելյան ուտեստները բաժանվում են՝ Լյաոնինյան, Ցզիլինյան եւ Յեյլունցզիանյան խմբի: Այսօրվա հյուսիսարեւելյան ուտեստների մեջ մասն ունեն Լյու ուտեստների առանձնահատկությունները, քանի որ երկար տարիներ առաջ Լյուից /Չանդունի հապավումը/ բազմաթիվ մարդիկ տեղափոխվեցին դեպի հյուսիս-արեւելք: Պատմական, աշխարհագրական եւ որոշ այլ գործոնների ներգործության հետ մեկտեղ դրանք ունեն նաեւ ման ազգության ինքնատիպ հատկությունները եւ անգամ որոշ ասպեկտներ ուսւական սննդակարգից: Դրանց մշակման մեթոդները նույնապես նմանվել են այլ ազգությունների ու տա-



րածաշրջանների առանձնահատկություններին՝ ձեւավորելով իրենց սեփական, տարբերվող առանձնահատկությունները, ներգրավելով՝ շոգեխաշման, խորովման, սոուսների պատրաստման, տապակման ու բազում այլ մեթոդներ: Իհարկե, հյուսիսարեւմտյան ուտեստները ոչ միայն հայտնի են իրենց գերազանց մշակման մեթոդներով, այլ նաև իրենց սննդային հումքով, տեղական մուգ կանաչ կերակրատեսակների հարուստ ներկապնակով: Այդ ուտեստները հյութեղ են, փխրուն, մի քիչ աղի, թարմ ու գունագեղ:



Կենդանական ճարպի բարձր խտություն պարունակող շոգեխաշած կերակուրներն օգտակար են ցրտից պաշտպանվելու համար: Հանրահայտ տեղական ութ շոգեխաշու կերակուրներն են՝ շոգեխաշած խոզի միսը՝ արիշտայով,

շոգեխաշած ոչխարի միսը՝ թթու դրած կաղամբով, շոգեխաշած տավարի միսը՝ շաղգամով, շոգեխաշած շնի միսը՝ տոֆույով, շոգեխաշած ճոի միսը՝ սմկով, շոգեխաշած ծածանը՝ խոզի ստամոքսով ու արիշտայով, եւ շոգեխաշած ձուկը՝ սմբուկով: Թարմ բանջարեղենի սղության պատճառով տեղացիները սովորաբար օգտագործում են հում միս, սխտոր, կանաչ սոխ, սառեցրած սննդամթերքներ եւ թթուներ: Հում մսի, սառեցրած սննդամթերքների եւ սառեցրած մրգերի օգտագործումը կարող է օրգանիզմ ապահովել անհրաժեշտ քանակի վիտամիններով: Այսօր շատ մարդկանց մոտ սառեցրած ուտելիք ուտելը դարձել է հոբբի: Կանաչ սոխ՝ սկալիոն ու սխտոր օգտագործելով՝ կարող եք նվազեցնել հում միս ուտելու վնասները, դրանով իսկ նպաստելով մարսողությանն ու մանրեների ոչնչացմանը: Բացի այդ, տարվա ցուրտ եղանակների պատճառով նույնպես թարմ բանջարեղենի պակաս է լինում: Այսպիսով ամեն մի ընտանիքում կարելի է տեսնել պահածոներ, թթուներ, սոուսի բանկաներ:

Լյաոնինյան հայտնի ուտեստներից են խոզի կտրատած միսը՝ արյան նրբերշիկներով, շառմային, խորոված մանր ծովախեցգետինները, թարմ սպիտակ ծովախեցգետինները, Լի-Լյանջի մեծ խոզապուխտե տորթը,

կարմիր սալորածեւ ձկան միզափամփուշտը եւ այլն: Ցգիլինյան հայտնի ուտեստներից են՝ տապակած խմորահյուսը՝ միջուկով, համեմված շան միսը՝ կորեական ոճով, բուսական տաք ուտեստները եւ այլն: Հեյլունցզի-անայան հայտնի ուտեստներից են՝ շղթեխաշած ճուտը՝ սմկով, շղթեխաշած խոզի միսը՝ արիշտաներով եւ այլն:

2. Հյուսիսային Չինաստանի համն ու հոտը

Հյուսիսային Չինաստանի ուտեստներն առանձնանում են իրենց անկրկնելի համեղ համ ու հոտով: Իր աշխարհագրական դիրքի շնորհիկ այն համատեղում է հյուսիսային ու հարավային համերը: Հյուսիսային Չինաստանի խոհանոցում հիմնականում կիրառում են եփման, թեթեւ տապակման, շղթեխաշման, արագ տապակման, կրակի վրա խորովման, թավայի մեջ տապակման խոհարարական հմտությունները: Շատ կարեւոր է նաև պատրաստման ժամանակ կերակուրների մեջ բաղադրիչների ավելացման հաջորդականության պահպանումը: Մի կարեւոր առանձնահատկություն եւս՝ հարկավոր է ուշադրություն դարձնել զերմաստիճանին: Հյուսիսային Չինաստանի հայտնի ուտեստներից են՝ շղթեխաշած ավանակի միսը, շղթեխաշած խոզի մսով կոլոլակները՝ թանձր արգանակում, խոզի տապակած որովայնը՝ ձվերով, կտրտած խոզի միսը՝ քաղցր լոբու սոուսում, շղթեխաշած խոզի մսից պատրաստած կոլոլակները՝ դարչնագույն սոուսում, եփած խոզի միսն արգանակում, սոուսապատ խոզի երիկամները, շղթեխաշած գառան միսը՝ դարչնագույն սոուսում:



Տապակած բաղ՝ պեկինյան ձեւով

Տապակած բաղը Պեկինի ամենահայտնի կերակրատեսակներից է: Այս ուտեստն ունի «աշխարհի ամենահամեղ կերակուրը» համբավը:

Բաղի միսը թարմ է ու փափուկ, արտաքինից այն փիսրուն է ու անուշաբույր: Տապակած բաղի միսը փափուկ է, բայց ոչ ճարպոտ ու նաև շատ

սննդարար է: Պեկինյան տապակած բաղի պատրաստման մեթոդները կարելի եք բաժանել երկու տեսակի՝ բաց վառարանային /փութ/ եւ փակ վառարանային: Աշխարհահիշակ «Պեկինյան Թուանջուտան»՝ տապակած բաղը, պատրաստվում է առաջին մեթոդով: Այս մեթոդի կիրառումը մեզ է փոխանցվել Ցին դինաստիայից, երբ այն ժամանակ կայսերական պալատում բաց վառարանային համակարգն էր գործարկվում: Այս եղանակով պատրաստված բաղերը արտաքինից խրթխրթան են, բայց՝ անյուղ: Ինչ վերաբերում է ուտելուն, ապա բաղը բարակ շերտերով կտրում են, երբ այն դեռ տաք է: Այնուհետեւ վերցնում են լոտոսի տերեւի ծեւ ստացած նրբարիթը, մի քիչ քաղցր սոուսի հետ, եւ ավելացնում են երկարավուն, բարակ կտրտած կանաչ սոխ, կտրտած վարունգ, բաղի կտրոներ ու այդ ամենը իրար հետ փաթաթում:

Արագ պատրաստվող ուտեստ՝ արագաեփ ոչխարի միս

Արագաեփ ոչխարի մսին ճաեւ ափսենով ոչխարի միս են անվանում: Այս ճաշատեսակը հայտնի է եղել դեռեւս Ցին դինաստիայի ժամանակ եւ ավելի մեծ տարածում է գտել Ման ազգության՝ Շանհայում հաստատվելուց հետո: Դեռեւս 18-րդ դարում, Կանսի եւ Ցյանլուն կայսերների կազմակերպած ճոխ խնջույքների ժամանակ մատուցում էին ափսենով ոչխարի միս: Յետագայում այն տարածվեց մոլուլմանական խանութներում եւ շուկաներում: 1854 թվականին Պեկինի ժենժանգ ռեստորանն իր բիզնեսը սկսեց ափսենով ոչխարի միս վաճառելով, եւ այն առաջինն էր, որ այդ արտադրանքը վաճառքի էր հանում խանութներում: 1914 թվականին Պեկինի Դոնլայշուն ոչխարի մսի խանութը բարձր աշխատավարձով վարձում է ժենժանգ ռեստորանի խոհարարին եւ սկսում իր սեփական արտադրության վաճառքն իրականացնել Պեկինի տարբեր խանութներում: Մի քանի տասնամյակ անց՝ ոչխարի մսի ընտրությունից մինչեւ կտրատման արվեստի հմտությունները, բաղադրիչների պատրաստման նախապատրաստությունից մինչեւ ափսեների մեջ շարելու տեխնիկան, Դոնլայշուն, բագմարիվ հետազոտություններ կատարելուց ու անընդհատ կատարելագործվելուց հետո, հայտնի է դառնում ամբողջ Պեկինում: Այս խանութի համբավն այնքան մեծ էր, որ երբ հարցնում էին, թե՝ «որտե՞ղ կարելի է համտեսել ամենալավ արագ պատրաստվող ոչխարի միսը, ասում էին՝ Դոնլայշունում»:

Ոչխարի միսը եփելուց առաջ այն բարակ շերտերով շերտատում եւ ափսեների մեջ են դնում: Այնուհետեւ փոքր տարաների մեջ առանձնացնում են սոյայի կաթնաշոռ, պյասի /սոխի/ տեսակ/ փոշի/, քնջութի սոուս,

պղպեղի ձեք եւ որոշ այլ բաղադրիչներ: Երբ պատրաստվում են այն ճաշակել, կաթսայի մեջ մի քիչ ջուր են լցնում, ավելացնում են մի քիչ կոճապղպեղ եւ կանաչ սոխ, սպասում ենք մինչեւ որ ջուրը եռա, այնուհետեւ ոչխարի միսը լցնում են դրա մեջ: Երբ այն սկսում է ջրի մեջ լողալ ու տեղտեղ սպիտակել, հանում են կրակից եւ, ըստ ճաշակի, համեմում: Ոչխարի միսը կարելի է մատուցել տարբեր եղանակներով: Կարելի է մսի արգանակի մեջ տարբեր բաղադրիչներ լցնել, բայց պետք է ուշադիր լինել, որ դրանք լավ խառնվեն:

3. Յյուսիս-արեւմտյան բուլընունք

Յյուսիս-արեւմտյան Զինաստանի կազմի մեջ են մտնում Շենսին, Գանսուն, Նինսիան, Ցինհայը, Սինցյանը եւ այլ տարածաշրջաններ: Այս տարածաշրջանին բնորոշ խոհարական ոճերն են՝ շենսինյան ոճի ուտեսները, գանսունյան ոճի ուտեստները եւ սինօյանյան ոճի ուտեստները: Այս ոճերին պատկանող ուտեստները հիմնականում երեք առանձնահատկություն ունեն. առաջինն



այն է, որ դրանցում հիմնական բաղադրիչները տավարի եւ ոչխարի մսերն են: Յատուկ աշխարհագրական դիրքի շնորհիվ այստեղ կարելի է տեսնել նաեւ այլ նրբախորտիկներ ու վայրի խաղեր: Երկրորդն այն է, որ ուտեստները բավական շատ համեմունքներ են իրենց մեջ ներառում: Երրորդ առանձնահատկությունը կայանում է նրանում, որ այն, որպես գլխավոր համեմունք, օգտագործում է քեմոնը /չաման/: Այստեղ հիմնականում ուտում են տաք եւ թթու ուտեստներ: Ինչ վերաբերում է պատրաստման խոհարարական հմտություններին, ապա դրանք հիմնականում օգտագործում են շոգեխաշման, թեթեւակի տապակման ու փակ խուփով շոգեխաշման, թխման, ձեռքի մեջ խաղացնելով տապակման, արագ եփման եւ եռացման ձեւերը: Ուտելիքները, շոգեխաշած թե տապակած, պահպա-

նում են իրենց ձեւն ու առանձնանում են իրենց առատ, թանձր իյուրով ու սուր բոլյրով: Այս տարածաշրջանի հայտնի յուրահատուկ ուտեստներն են՝ կտրտած, շոգեխաշած ձկան կտորները, եփած վայրի ճուտը, խաշած ծածանը, ջիաղզին, ճտով կալաբաշը /դդմի տեսակ/, ոչխարի եւ տավարի մսից պատրաստած արգանակը, եւ գառան մսով կերակուրը, որը ճաշակում են ձեռքերով: Գյուղական վայրերում պատրաստվող կերակուրները տնտեսող ու օգտակար են՝ ընդգծված գյուղական համ ու հոտով, ինչպես, օրինակ՝ ոչխարի գլխի կտրտած միսը, կտրտած-եփած միսը սմբուկով, կալաբաշ դդմով ուտեստը եւ շատ ուրիշ ուտեստներ:

Ներկայացնենք Սինցօյան ոժին բնորոշ որոշ կերակրատեսակներ:

Սինցօյանում մի շատ հայտնի կերարատեսակ կա, որին բառացիորեն ասում են՝ «ճանկելու ոչխարի միս»: Ամենահամեղ ոչխարի մսով ուտեստը թարմ գառան մսից պատրաստած սպիտակ արգանակն է, որը ճաշակում են մի քիչ աղ ավելացնելով: Այսպես դուք կարող եք վայելել մսի բնական հյուրը եւ ընբոշխնել գառան մսի խևական համն ու հոտը: Այս ուտեստի հաջողման ամենակարեւոր գործոնը մսի որակն է: Ոչխարի միսը կտրտում են մեծ կտորներով, հիմնականում՝ տարբեր մասերը, օրինակ՝ տոտիկները, կողերը, կրծքամիսը եւ այլ մասեր, եւ եփում են մեծ կաթսայի մեջ: Կիսով չափ եփելուց հետո վերցնում են կրակից: Այնուհետեւ մի քիչ սոխ ու պղպեղ են մանրացնում եւ մի մեծ կտոր սոխ ավելացնում: Հետո միսը տեղափոխում են շոգեխաշելու կաթսայի մեջ եւ վրան սոխ, պղպեղ ու աղ են շաղ տալիս: Միսը լավ եփելուց հետո քամում են ջուրը:

Եթե ցանկանում եք զգալ այս ուտեստի իրական համը, փորձեք այն ճաշակել ձեռքերով ու կիամնզվեք, որ այն խևապես հրաշալի է: Կարող եք նաեւ միսն ուտելուց հետո դրա համեղ արգանակն ըմպել, իրագործելու «յուրօրինակ արգանակը յուրահատուկ ուտելիքով» արտահայտությունը: Այս պարզ, յուրահատուկ ու հնաշունչ ուտեստը մեզ հնարավորություն է տալիս վայելելու հրաշալի դելիկատեսն ու գնահատելու փափուկ ու նուրբ ոչխարի միս ճաշակելու հաճույքը:

ԳԼՈՒԽ ԵՐԿՈՒ

ՀԱՐԱՎԱՅԻՆ ԲՈՒՐՄՈՒՆՔ

1. Կենտրոնական Չինաստանի համն ու հոտը

Կենտրոնական Չինաստանի տարածքը գտնվում է լավագույն աշխարհագրական դիրքում՝ բարեխառն կլիմայով ու տեղատարափ անձրեւներով: Այն հարուստ է բրնձով, ջրային մթերքներով, կենդանիներով, միրգ ու բանջարեղենով: Հունանում մարդիկ ավելի շատ նախընտրում են ուտել տաք ու թթու կերակուրներ. դա պայմանավորված է լեռնային դիրքով եւ խոնավ կլիմայով: Այսպիսով, տաք եւ թթու կերակուրներն օգնում են մարդկանց տաքացնել ստամոքսն եւ փայծաղն առողջ պահել: Ցզյանսիյան սննդակարգը շատ նման է հունանյան սննդակարգին, մինչդեռ հուբեյյանը, որը հայտնի է որպես «ողջ Չինաստանն իրար հետ կապող գլխավոր մայրուղի», հարուստ է քաղցրահամ ջրի ձկներով ու ծովախեցգետիններով, ուստի այս շրջանին բնորոշ ուտեստներից են՝ ձուկը, բրինձը, ապուրները: Հուբեյի խոհանոցի համը հիմնականուն աղի է, թարմ, մի քիչ կծու եւ թթու:



ՀԵՆԱՄՅԱՆ ՈԾԻ ՈՒՏԵՍՈՒՆԵՐ

Քաղցր ու թթվաշ ձուկ՝ արիշտաներով

Հենամյան ոծի ուտեստները շատ նման են Յու ոծի ուտեստներին, որոնք ներկայացնում են Լոյան /արդյունաբերական քաղաք Հենան նահանգում/ ու Կայֆենը /հարավային Չինաստանի հնագույն քաղաքներից է, Հենան նահանգ/: Ինչ վերաբերում է Յու ոծի ուտեստներին, ապա դրանք առանձնանում են իրենց թթու, կծու, քաղցր, դաշնավուն համերով, ինչպես նաև տաք կերակուրներով:

Արիշտաներով քաղցր ու թթվաշ ձուկը Յու ոծի տասը ամենահայտնի ուտեստներից է: Այն երկու տարբեր ուտեստների համադրություն է՝ քաղցր ու թթվաշ ձուկ եւ եփած արիշտաներ: Այս ուտեստի մեջ օգտագործում են ծածան, հատկապես Շեղին գետի ծածանը: Զուկը մշակելուց հետո դնում են յուղով տաքացրած տապակի մեջ եւ կարմրացնում: Այնուհետեւ վերցնում են անհրաժեշտ բաղադրիչները՝ շաքարավագ, քացախ, ծեծած կոճապղպեղ, գինի, աղ եւ պատրաստում են սոուսը: Այդ բաղադրիչները լցնում են քիչ քանակությամբ եռացող ջրի մեջ եւ հավասարաչափ խառնում են: Երբ սոուսը եփում է, ավելացնում են մի քիչ տաք յուղ եւ լցնում տապակած ձկան վրա: Ընթացքում պատրաստում են արիշտաները, որի համար սպիտակ ալյուրի մեջ ավելացնում են երեք գրամ աղ, մի պտղունց սողա եւ ջուր: Հետո ստացված զանգվածը լավ հունցում են: Երբ խմորը բարձրանում է, այն գնդում են՝ բաժանելով տասներկու հավասար մասերի: Գնդերը երկարությամբ բացում եւ երկարացնում են այնքան, մինչեւ որ մազաչափ բարակ լինի: Վերցնում են մեջտեղի հատվածը, դրանք տապակում են յուղով եւ ձկան հետ մատուցում: Այժմ քաղցր ու թթվաշ սոուսապատ ձուկն արիշտաների հետ պատրաստ է մատուցման: Այն մուգ կարմիր տեսք ունի, հաճելի նուրբ համ եւ շատ անուշ է բուրում: Տապակած արիշտաները մազի չափ բարակ են, փափուկ ու փխրուն:

ՉՈՒԲԵՋՅԱՆ ՈԾԻ ՈՒՏԵՍՈՒՆԵՐ

Շոգեխաշած թուանֆուանգ ձուկ

Դեռեւս հնագույն ժամանակներից ի վեր Չուբեյը փառաբանվել է որպես հազարավոր լճերի նահանգ, մի երկիր, ուր կաթ ու մեղր է հոսում: Այս նահանգն ունի հարուստ ջրային մթերքներ: Չուբեյյան ոծի ուտեստները ներակայանում են հենց ի ոճում: Դրա պատրաստման մեթոդներն են՝ կարմիր շոգեխաշումը /շոգեխաշելիս ջրի մեջ գինի, կոճապղպեղ եւ այլ կարմրագույն համեմունքներ են ավելացնում/, եռացումը, արագ եփումը,

խորը տապակումը, խորովումը եւ ձեռքի մեջ խաղացնելով տապակումը: Նրա հիմնական բաղադրիչները ծովամթերքներն են, որոնց պատրաստման համար շատ կարեւոր է կրակի ջերմաստիճանի ճշգրիտ կիրառումը: Այս ոճի յուրաքանչյուր ուտեստ բազմաթիվ տեսակներ ունի: Այսպիսի մի ասացվածք կա. «Համեղ ուտելիքները Սիչուանում են, իսկ նուրբ խորտիկները /դելիկատես/ հոլբեյում»:

Ծոգեխաշած թուանֆուանգ ձուկը համարվում է հոլբեյյան ոճի ներկայանալի ուտեստը: Դրա պատրաստման համար որպես հիմնական բաղադրիչ օգտագործվում է թարմ թուանֆուանգ ձուկը՝ համակցված



օճի մսով, ձմեռային եղեգի ցողուններով, հավի թափանցիկ արգանակով եւ այլ անհրաժեշտ բաղադրիչներով: Այս ուտեստը պատրաստման յուրահատուկ ձեւ ունի: Խախի լվանում են ձուկը, այնուհետեւ, մեջքի վրա թեք նախշաձեւ կտրվածքներ անելուց հետո, ձուկը համեմում են աղով, դեղին գինիով, լոտոսի չորացրած-մանրացրած ծաղիկներով: Այնուհետեւ կտրատում եւ իրար հետ եփում են եղեգի ցողունները, խոզապուխտը եւ օճի միսը: Դրանք եփելուց հետո վերցնում են կրակից եւ նախապես պատրաստած կոճապղպեղի ու կանաչ սոխի հետ լցնում են ձկան վրա, հետո վրան լցնում են հավի արգանակ եւ նի գդալ տաքացրած խոզի յուղ: Այս ամենն անելուց հետո ձուկը դնում են կաթսայի մեջ ու շոգեխաշում: Մոտ տասը րոպե անց, երբ ձկան աչքերը սպիտակում են, վերցնում են կրակից: Մատուցելիս ավելացնում են սոյայի սոուս՝ համեմված քացախով ու պղպեղով: Պատրաստի ձուկը մատուցվում է ամբողջությամբ: Այն փայլուն, սպիտակ գույն ունի եւ զարդարված է կարմիր, սեւ ու սպիտակ բաղադրիչներով, որոնք այս ուտեստին նրբագեղ ու գրավիչ տեսք են հաղորդում:

Հունանյան ոճի ուտեստներ Շոգեխաշած չորամթերքներ



Հունան ոճի ուտեստները ներկայանում են Սյան ոճում: Սա Չինաստանի ութիայտնի խոհարարական ոճերից մեկն է: Այս ոճի ուտեստներն ունեն դարավոր պատմություն եւ հիմնականում ներկայացնում են տեղական ար-

տաղրանքը: Ղեռեւս Հան դինաստիայի ժամանակաշրջանում Սյան ոճի խոհարարական դպրոց էր գործում, եւ նրա խոհարարական արվեստն այսօր բավական բարձր մակարդակի վրա է: Սյան ոճը հայտնի է իր կտրատման տեխնոլոգիայով, համային ճիշտ համադրության անզուգական վարպետությամբ: Այն հատկապես հայտնի է իր թթու, կծու եւ տաք ուտեստներով ու չորացրած մսամթերքներով: Հունանի խոհարարները հմտորեն կիրառում են շոգեխաշելու, արագ տապակելու, խորովելու, եռացնելու մեթոդներն ու տիրապետում են բազում նուրբ խոհարարական հմտությունների:

Իրար հետ շոգեխաշած չոր մթերքներով ուտեստը Հունանի ամենահայտնի ավանդական կերակրատսակներից է: Այս ուտեստի պատրաստման համար օգտագործում են բացառապես չոր հոլմք՝ չորացրած միս, չորացրած ծուկ, չորացրած հավ եւ այլն: Ուտեստը պատրաստելու համար կաթայի մեջ լցնում են չոր մթերքները՝ չորացրած միս, չորացրած ծուկ եւ որոշ այլ բաղադրիչներ, որից հետո վրան պելացնում են մի քիչ հավի արգանակ եւ այդ բոլորը միասին եփում են: Այս ուտեստը յուրահատուկ համ ունի. չորացրած բաղադրիչները սուր հոտ են հաղորդում ուտեստին: Այն եւ աղի է, եւ քաղցր, վառ կարմրագույն, նուրբ ու անյուղ, իսկ նրա հյութը մի քիչ կպչուն է: Նրանում առկա համերը փոխլրացնում են մինյանց, ինչն իրոք հրաշալի է:

2. Արեւելյան Զինաստանի համն ու հոտը

Արեւելյան Զինաստանի կազմի մեջ են մտնում Շանդուն, Զիանսու, Զիանգսի, Զժեցյան, Անհույի, Ֆուշիան նահանգները, Թայվանի տարածքն ու Շանհայի ինքնավար քաղաք-շրջանը: Բարեխառն կլինան, հրաշալի բնական միջավայրն ու հարուստ ռեսուրսների առայությունն իրենց ազդեցությունն ունեն այս տարածաշրջանի ուտեստների վրա:

Զժեցյան ոճի ուտեստներ

Զժեցյան ոճի ուտեստները ձեւավորվել են Զժեցյան նահանգում: Այս ոճը Զինաստանի խոհարարական ութ հայտնի ոճերից է: Նրանում ներառված են ուտեստների բազմաթիվ տեսակներ՝ ընդգրկելով չորս լոկալ /տեղային/ համեր՝ հանչժողովան, վենչժողովան, շաոսինգյան եւ նինբոյան: Այս ոճի ուտեստները շատ առանձնահատուկ են, դրանք թարմ են, փափուկ, նուրբ ու համեղ: Զժեցյանը հարուստ է ձկներով ու խեցգետիններով եւ այն հայտնի զբոսաշրջային նահանգ է: Այստեղի գեղատեսիլ բնությունը՝ բարձրաբերձ լեռներով ու չնաշխարհիկ լճերով, գրավում է ոչ միայն չինացիների, այլև բազմաթիվ զբոսաշրջիկների ուշադրությունը, ուստի այստեղի կերակրատեսակներն արտացոլում են այդ զարմանահրաշ համայնապատկերը:

Ուտեստների շատ հայտնի տեսակներ գյուղական վայրերից են վերցված՝ վարպետորեն ու աննշան փոփոխություններով: Այստեղի խոհարարները հմտորեն տիրապետում են ձեռքի մեջ խաղացնելով տապակելու, շոգեխաշելու, արագ տապակելու, եփելու ու թխելու խոհարարական նուրբ արվեստին: Այս ոճի հայտնի ուտեստներից են՝ շոգեխաշած ծածանը քացախասողուսում, տիկին Սոնգի ձկնապուրը, Դոնգպու /Սյու Դոնգպուն է հնարել այս կերակրատեսակը/ խոզի տապական, տապակած մանր ծովախեցգետինները՝ Լոնգջինգ թեյի հետ, Ֆենդուայի /շրջան/ կոլկասը՝ թարոն, շոգեխաշած խոզապուխտը մեղրասողուսում, խոլորձի եւ բամբուկի ցողուններով ուտեստը, որը ընդունված է պատրաստել գարնանը:

Զիանսույան ոճի ուտեստներ

Ծովախեցգետնիններով ու խոզի մսով շոգեխաշած գնոհիկներ /կոլոլակներ/

Զիանսուն հարուստ է բնական ռեսուրսներով: Այս վայրը հայտնի է նաև իր խոհանոցի համեղ կերակրատեսակներով: Զիանսույան ոճի ու-



տեստներին կրծատ անվանում են Սյու ոճի ուտեստներ: Քանի որ Սյու ոճի ուտեստները նման են ժի ոճի ուտեստներին, մենք այդ երկուսը միացնելով հաճախ կրծատ ասուն ենք՝ սու-ժի ոճի ուտեստներ: Սյու ոճն իր մեջ ներառում է չորս ենթա-ոճ՝ ջինլին, հուայիյանգ, սյուքսի, սյուհայ:

Ջինլին ձեւավորվել է Նանկի-նում. առանձնանում է իր խոհարա-ռական նուրբ մշակմանք եւ նուրբ համերով: Նրա մեջ առատորեն օգ-տագործում են խոտաբույսեր, եւ այն հայտնի է իր ջինլինյան երեք բույսերով՝ ոսկեծաղիկ, դիզապ-տուղ եւ մարրոն, ինչպես նաև վաղ գարնան վայրի խոտաբույսերով՝ մանանեխի տերեւներ, ջրեղեւնա-խոտ եւ վայրի սխտոր:

Հուայիյանգը ձեւավորվել է Յանչտոյում: Այս տեսակին բնորոշ է հա-տուկ մթերքների օգտագործումն ու կտրատման ճշգրիտ տեխնիկան: Այն իրենից ներկայացնում է բանջարեղենային ապուրի շարք եւ աչքի է ընկ-նում գունային նուրբ երանգներով:

Սյուքսիի անվանումն առաջացել է Սուչժոու, Ռւսի եւ Չանչժոու չինա-կան քաղաքների անվանումներից: Չաճախ օգտագործվում է բրնձի գի-նին՝ համերը հարմարեցնելու համար, որը քաղցր է լինում եւ հաջողու-թյամբ համադրելի է ամեն տեսակ ջրային մթերքների հետ:

Սյուհայի անվանումը առաջացել է Սյուչժոու եւ Լյանյունգան քաղաք-ների անվանումներից: Այս տեսակի ուտեստները սուր հոտ ունեն եւ ներ-դաշնակ համադրվում են ծովամթերքների ու բանջարեղենի հետ:

Ներկայացնենք «ծովախեցգետնի եւ խոզի մսով շոգեխաշած գնդիկ-ներ» կերակրատեսակի բաղադրատոմսը: Ուտեստը պատրաստելու հա-մար հարկավոր է խոզի միսը կտրտել, աղալ եւ լցնել տարայի մեջ: Աղա-ցած մսին ավելացնել մի քիչ կանաչ սոխ, սխտոր, եւ մանրացրած ծովա-խեցգետիններ: Այնուհետեւ վերցնել մի փոքր աղ, բրնձի լիկյոր, չոր օսլա եւ այդ ամենը միասին խառնելով՝ սոուս պատրաստել: Որից հետո սոուսը միացնել ստացված զանգվածին եւ գնդիկներ պատրաստել: Կաթսայի մեջ

լցնել մի քիչ խոզի յուղ եւ տաքացնել, ավելացնել մի քիչ հազար ու տապակել, մինչեւ որ հազարը զմրուխտագույն դաշնա: Տապակած հազարի վրա լցնել մի քիչ մանր ծովախեցգետին եւ աղ: Կրակի վրա ջուր եռացնել: Այնուհետեւ եռացող ջրի մեջ լցնել տապակած ծովախեցգետիններով հազարը, եւ մեկը մյուսի ետելից ավելացնել խոզի մսից ու ծովախեցգետիններից պատրաստած գնդիկները եւ այդ ամենը միասին եփել: Մոտ մեկ ժամ շոգեխաշելուց հետո գնդիկները տեղավորել ափսեի մեջ, դրանց վրա կտրտած-պահածոյացրած ծովախեցգետիններ դնել եւ ձեւավորել հազարի թարմ տերեններով: Մատուցելուց առաջ վրան մի քիչ արգանակ լցնել:

Լյու ոճի ուտեստներ Խաշած աղիքները դարչնագույն սոուսում

Լյու ոճի ուտեստներն առաջացել են քի եւ Լյու շրջաններում՝ Գարնան, Աշնան եւ Պատերազմող երկրների ժամանակաշրջանում: Այս ոճը շատ հայտնի է Շանդունում եւ ձեւավորվել է քին եւ Յան դինաստիաների ժամանակ: Սուն դինաստիայի անկումից հետո Լյու ոճը հանդիսացավ հյուրսիսային կերակրատեսակների ներկայացուցիչը եւ այն Չինաստանի ուրիշ հայտնի սննդային ոճերից մեկն է: Լյուական ոճը ներկայացնում է Չինաստանի տեղական կերակրատեսակների շարքը: Այս ոճի ուտեստները լայնորեն տարածված են Չինաստանի տարբեր նահանգներում:



Լյու ոճի ուտեստների պատրաստման ավելի քան 30 մեթոդ գոյություն ունի: Այս ոճի ուտեստների պատրաստման համար հիմնականում կիրառում են արագ տապակման եւ շոգեխաշման տեխնիկան: Պատրաստելիս կարեւոր է թեժ կրակի վրա արագ տապակումը: Շոգեխաշումը յուրօրինակ ստեղծագործություն է Լյու ոճում: Մշակված մթեղքների վրա ավելացնում են աղ, համեմունքներ եւ տապակում են յուղի մեջ, մինչեւ երկու

Կողմերը կարմրեն, այնուհետեւ իջեցնում կրակը, որպեսզի դրանք շոգեխաշվեն եւ հյութեղ ստացվեն: Շոգեխաշումից հետո պատրաստի, ախորժելի հոտով մթերքները իրարից առանձնացող եւ կոկիկ տեսք են ունենում: Դրանք նաեւ լցված են լինում կաշուն հյութով: Լյու ոճի հայտնի է իր ապուրմերով՝ թափանցիկ ու կաթնագույն, որոնց տասնյակ տեսակները հաճախ հայտնվում են բարձրակարգ խնջույքների ժամանակ եւ բարձրակարգ ճաշկերույթների ամենահամեղ կերակրատեսակների ցանկն են համալրում:



Լյու ոճի ու տեստները հայտնի են նաեւ ծովային ուտելեղենի բազում տեսակներով, որոնք պատրաստվում են տարբեր ծովամթերքներից: Չանդունում ծովային լորձնամուլուսկները, շնաձկան թեւերը, թռչնի բույնը,

խեցեմորթիները կամ ձկան թեփուկները կարող են տեղի բարձրակարգ հմուտ խոհարարների կողմից վերածվել զարմանահրաշ նուրբ խորտիկների: Միայն խարտոցաձկից /տափակաձուկ/, որն աճում է Ցզյառդունի ափի մոտ, տասնյակ տարբեր կտրաձեւերի ու խոհարարական տեխնիկայի շնորհիվ կարելի է տասնյակ համեղ խորտիկներ պատրաստել, իսկ նրա համը, գույնը, բույրը, ձեւն իրենց յուրահատուկ առանձնահատկություններն ունեն: Զկան միայն մեկ տեսակից կարելի է հարյուր տեսակի ու տեստ պատրաստել: Կան նաեւ ծովային մթերքներով պատրաստվող այլ հատուկ խորտիկներ, ինչպես, օրինակ՝ արագ տապակվող գույզ ծաղիկները, դարչնագույն սոուսով շոգեխաշած խխունջը, տապակած ոստրեները, որոնք պատրաստվում են ծովում ապրող կենդանիներից, ինչպես նաև՝ շոգեխաշած շնաձկան թեւերը ծովախեցգետնի դեղնուցով, շոգեխաշած գալիոտիսը խեցիով եւ խեցեգնդիկները:

Յատկանշական է, որ Լյու ոճի ուտեստներում որպես համեմունք շատ հաճախ սկոլիոն /կանաչ սոխ/ են օգտագործում: Ուտելիքներ պատրաստելիս, անկախ նրանից՝ արագ տապակման, շոգեխաշման, եփման կամ սոուսի պատրաստման ժամանակ, օգտագործում են կտրատած կամ

ծվեն-ծվեն արած սկոլիոն: Շոգեխաշելու, տապակելու, եփելու կամ թխելու ժամանակ օգտագործում սկոլիոն՝ ուտեստին սուր հոտ հաղորդելու համար: Լյու ոճի խոհարարներից շատերը որպես համեմունք օգտագործում են թակած սկոլիոնը:

Ներկայացնենք դարչնագույն սոուսում խաշած աղիքների պատրաստման եղանակը: Առաջին հերթին մաքրել աղիքները, հատվածներով կտրել, լցնել կաթսայի մեջ եւ մարմանդ կրակի վրա եփել: Այնուհետեւ պատրաստ լինելուն պես աղիքները հանել կաթսայից: Որից հետո թափայի մեջ մի քիչ խոզի յուղ լցնել եւ տաքացնել, ավելացնել մի քիչ շաքարավագ եւ մարմանդ կրակի վրա բովել, մինչեւ որ այն կարմրավուն տեսք ստանա: Խաշած աղիքները լցնել պատրաստի շաքարասոուսի մեջ, այնուհետեւ ավելացնել մի քիչ սկոլիոն, կոճապղպեղ, թակած սխտոր, քացախ եւ եփել թեժ կրակին: Մի քանի րոպե անց կրակն իջեցնել եւ վերջում ավելացնել մի քիչ գինի, աղ, սոյայի սոուս, մի քիչ ջուր, որպեսզի դրանք մարմանդ կրակի վրա հանգիստ շոգեխաշվեն: Երբ սոուսը թանձրանա, ավելացնել մի փոքր աղացած պղպեղ եւ պղպեղի յուղ, ապա դրանք վերցնել կրակից եւ դնել ափսեի մեջ:

Ֆուջյան ոճի ուտեստներ Ֆուտիառքիանգ

Ֆուջյանը գտնվում է Չինաստանի հարավ-արեւելքում: Այն շրջապատված է լեռներով ու ծովերով: Այստեղ կլիման մեղմ է, իսկ առատ տեղացող անձրեւների պատճառով այստեղ ասես տարին տասներկու ամիս գարուն է: Այս վայրը գերազանց աշխարհագրական դիրքում է գտնվում, ինչը նշանակում է, որ այս Ֆուջյանում առկա է թե ցամաքային, թե ծովային նուրբ խորտիկների հոյակապ ընտրանի, եւ այդ ուտեստների հարուստ տեսականին ներկայանում է մին ոճուն:

Մին ոճը Չինաստանի ութ հայտնի կերակրատեսակային ոճերից մեկն է: Այս ոճի ուտեստները կարելի է ըստ առանձին շրջանների բաժանել մի քանի ենթատիպերի՝ Ֆուչչոուի, Մինքսիի, Քվանժուի, Խիամենի, Չժանչժոուի: Վերջին երեքը հավաքական կոչվում են Մինանյան ոճ:

Մին ոճը ժառանգել է հարավային Չինաստանի խոհարարական տեխնիկայի հոյակապ ավանդույթները: Թեեւ ուտեստի ամեն տեսակ ունի իր ուրույն առանձնահատկությունները, այնուհանդերձ դրանք մինչ օրս միասնական ոճի են: Մին ոճուն մեծ ուշադրություն են դարձնում կտրատման տեխնիկային: Այն իհմնականում օգտագործում է ծովային եւ հողուն աճեցրած մթերքներ: Այն բացառիկ է արգանակների պատրաստման բազ-

մազանության մեջ: Այս ոճի կերակուրները թարմ ու նույր համ ունեն, անսպիռ, բայց սքանչելի բույր:

Սովորական բաղադրիչներից բացի մին ոճում կան նաեւ այլ՝ արտասովոր բաղադրիչներ, ինչպես, օրինակ՝ ծովախեցգետնի յուղ, ծովախեցգետնի սոուս կամ՝ թթու դրած ծիրան, եւ այս ոճում առկա է բրնձային ուտեստների բազմահամ ու բազմերանգ տեսականի:

Խնջույքների ժամանակ մատուցվող վերջին ուտեստը սովորաբար լինում են սեղոնային կանաչ բանջարեղեննը: Ապուր պատրաստելիս ընդունված է «տասը մթերք մեկ հիմնական ապուրում» կարգախոսը: Զեռքով պատրաստելու ամենատարածված եղանակներից են՝ սահեցնելով կտրատելը, շոգեխաշելը, ձեռքի մեջ խաղացնելով տապակելը, խաշելը: Դայտնի կերակուրներն են՝ ֆուտիառքիանգը, ֆուչժոյան ձկան կոտլետները, ճուտը բրնձով՝ կարմիր գինու սոուսում, կտրտած ծովախխունջները՝ թույլ գինու սոուսում, եփած ծովախեցին՝ հավի արգանակով:

Ֆուտիառքիանգը հայտնի ավանդական ուտեստ է, որ պատրաստում են տարատեսակ նրբախորտիկներն իրար միացնելով: Այս ուտեստն ավելի քան հարյուր տարվա պատմություն ունի: Այն ներառում է բազմաթիվ բաղադրիչներ՝ խոզի աղիքներ, կճղակի ծայրեր, տավարի ջիլ, ծովային վարունգ, գալիոտիս, շնաձկան թեւեր, չորացրած խեցի, շնաձկան շուրթեր, ձկան ստամոքս, ծովախեցու բերան, խոզապուխտ, ոչխարի ունացլեր, բարի չորացրած միս, հավի կոկորդ, բարի կոկորդ, չորացրած սունկ, ձմեռային բամբուկի ցողուններ եւ այլն: Այս ուտեստի պատրաստման համար հատուկ վարպետություն է պահանջվում: Հումքը պատրաստվում է տարբեր մեթոդներով՝ խաշելով, շոգեխաշելով, տապակելով, լավ կարմրացնելով եւ այլն: Այնուհետեւ այդ բոլոր բաղադրիչները շերտ առ շերտ դասավորում են սափորի մեջ: Դետո ավելացնում են մի քիչ ապուր՝ ըստ ճաշակի եւ դեղին գինի: Սափորը կապարակնքում են, դնում կրակին ու եփում են: Կրակով եփելու ժամանակ մենք օգտագործում ենք պինդ փայտածուխը: Սկզբում այն եփում են թեժ կրակի վրա, այնուհետեւ մեղմում կրակը եւ թողնում, որ այդ ամենը մարմանդ կրակի վրա շոգեխաշվի:

Թայվանյան ոճի ուտեստներ

Թայվանյան ոճի ուտեստներում հիմնականում օգտագործում են ծովանթերքներ: Այս ոճի ուտեստներն առաջացել են մին ոճի, յու ոճի եւ հակասա ոճի ուտեստների միախմբումից. այն, բացի իր տեղական խոհանոցի ավանդույթներից, նաեւ ճապոնական խոհանոցի ազդեցությունն է կրում: Թայվանյան ոճի կերակուրները շատ բազմազան են: Դրանք կարե-

Ղի է ճաշակել սառը եւ հում վիճակում, ինչը շատ համեղ է: Թայվանյան ոճը առանձնանում է իր թեթեւությամբ, թարմությամբ ու հյութեղությամբ: Այս ոճի ապուրներում շատ են օգտագործում ծովային կենդանիներ ու բանջարեղեն, օրինակ՝ կարմիր եփած կաղամբ, տապակած ութունուկ եւ այլն: Թայվանյան խոհանոցը հայտնի է նաեւ իր թքու եւ քաղցր կերակուրներով: Դրա հիմնական պատճառը տեղի տոք կլիմայական պայմաններն են: Ամռան տապին մի քիչ թքու, կծու եւ քաղցր սմնդի ընդունումը իրոք օգնում է մարսողությանը: Թայվանյան ոճն առանձնանում է նաեւ թքու դրած մթերքների լայն կիրառությամբ: Թայվանում մարդիկ նախընտրում են թքուները համադրել տարբեր ուտեստների հետ: Դրանց համն խևապես առանձնահատուկ է, եւ մինչ օրս այն մեծ ժողովրդականություն է վայելում:

Թայվանյան ոճի մյուս առանձնահատկությունն այն է, որ այն օգտագործում է բուսական խոհանոցը: Տարատեսակ ուտեստներ պատրաստելու համար նրանք կիրառում են չի-



նական ուտելի դեղաբույսերի շղթեխաշման մեթոդը: Չնայած բազմաթիվ կերակուրների մեջ չինական ոճով օգտագործում են ուտելի դեղաբույսեր, այնուհանդերձ դրանք թայվանյան ոճի ուտեստների պես նրբագեղ չեն, որն ամենասիրված բուսական խոհանոցն է համարվում:

3. Յարավային Չինաստանի համն ու հոտը

Յարավային Չինաստանը ներառում է Գուանդունը, Գուինգին, Հոնկոնգը, Մակաոն, Ֆուչյանի կենտրոնական եւ հարավային հատվածները, հարավային Ցզյանսին եւ հարավային Հունանը: Յարավային Չինաստանը հարուստ է բերրի հողերով: Այստեղ անձրեւների առատությունն ու բարեխառն մեղմ կլիման նպաստում են հարուստ բուսականությանը: Յարավային Չինաստանում մթերքների առատություն է. ամեն մի մթերք իր առանձնահատկությունն ունի:

**Գուանդումյան ոճի ուտեստներ
Խաշած-կտրտած հավ**



Յու ոճը չինական ութ կերակրային ոճերից մեկն է: Այն ներառում է Գուանդումյան, Չառչժույյան եւ Դոնգցզյանյան ոճի ուտեստները: Գուանդումյան ոճի ուտեստների ավելի քան 21 տեսականի կա, որոնց պատրաստման համար կիրառում են խոհարարական տարրեր մեթոդներ՝ ձեռքի մեջ խաղացնելով տապակում, թավայում տապակում, շոգեխաշում, խորովում, էտապներով եփում եւ այլն: Այս ոճը մեծ ուշադրություն է դարձնում կրակի ջերմաստիճանին: Պատրաստի կերակուրներն աչքի են ընկնում են իրենց գույնով, համով, հոտով ու ձեւով: Համային տեսակետից այս ոճում գերադասում են թթեւությունը, թարմությունը, նրբությունն ու փխրունությունը: Այն ունի խիստ սեզոնային հատկություններ: Ամռանն ու աշնանը հետեւում են պարզ ու թթեւ սննդակարգին, գարնանն ու ձմռանը՝ մածուցիկ ու սուր համերն են գերադասում: Գուանդումյան ոճի ամենահայտնի ուտեստներից են՝ խաշած կտրտած հավը, շոգեխաշած մանր ծովախեցգետինները, կարմրացրած խոզի գոճին, տապակած բաղր, օձով ապուրը, յուղով տապակած մանր ծովախեցգետինները, շոգեխաշած ծովամթերքները եւ այլն:

Չառչժույյուն ուտելու սովորույթները նման են հարավային Ֆուջյանի սովորույթներին: Միեւնույն ժամանակ այն կրում է նաև Գուանդուն շրջանի ազդեցությունը: Ի վերջո, այն վերցրել է այս երկու շրջանների առավելություններն ու ձեւավորել է իր սեփական ուրույն ոճը: Նոր ոճի չառ ուտեստները կլանել են ամբողջ աշխարհի դիետիկ կերակուրների առավելությունները: Վերջին տարիներին այն մեծ հռչակ է վայելում ինչպես Չինաստանում, այնպես էլ նրա սահմաններից դուրս: Չառ ոճը հայտնի է իր կտրատման տեխնիկայով ու ձեւավորմամբ: Այստեղ ամենահայտնի ու-

տեստները պատրաստվում են ծովամթերքներից, հայտնի են նաեւ ապուրներն ու քաղցր, նուրբ խորտիկները: Դրանք հիմնականում լինում են թարմ, կպչուն, բայց ոչ յուղոտ: Այս ոճի խոհարարները նախընտրում են օգտագործել այնպիսի բաղադրիչներ, ինչպես, օրինակ՝ ձկան սոուս, խորոված բանջարեղենով սոուս, սալորի մածուկ, կարմիր քացախ եւ այլն: Այստեղի հայտնի ուտեստներից են՝ եփած վայրի սագը, ծովախեցգետնի գնդիկները՝ սպիտակ արգանակում, եփած խեցին՝ յուղով եւ այլ ուտեստներ:

Դոնզգզյան ոճի ուտեստներին նաեւ անվանում են հակկա ուտեստներ եւ այն գուանդունյան ոճի ուտեստի սկզբնաղբյուրն է հանարվում: Հակկա ժողովրդի նախնիները նանիուի նվաճումից հետո բնակություն էին հաստատել կենտրոնական հարթավայրում: Այս ժողովուրդը մինչ օրս պահպանել է իր նախնյաց սննդակարգային հին ավանդությները: Այստեղ ուտելիքների զգալի մասն են կազմում՝ միս, թթու դրած մթերքներ, ապիտած ձուկ եւ տեղական թարմ ձուկ է: Նրանց խոհանոցը հարուստ է անուշաբույր ու կպչուն ուտեստներով, եւ սովորաբար նրանք իրենց կերակուրներում առատ յուղ են օգտագործում: Այս խոհանոցի հայտնի ուտեստներից են՝ աղի մեջ եփած ծուտը, ապիտած բաղը, պահածոյացված բանջարեղենով շոգեխաշ խոզի միսը, տավարի մսով կոլոլակները, ծովալորտուի մսից պատրաստած գնդիկները եւ այլն:

Խաշած կտրտած հավը այս ոճի ուտեստները ներկայացնելու լավագույն օրինակներից է: Նախ՝ կտրտած հավի վրա մի քիչ աղ են ցանում, այնուհետեւ լցոնում են այն, նրա մեջ լցնելով կտրտած սկալիոն եւ մանրացրած կոճապղպեղ, հետո մոտ երկու ժամ թողնում են, որ հավի միսը համերը ներծծի /բաստուրմա են դնում/: Այնուհետեւ կաթսայի մեջ լցնում են օղակածեւ կտրտած խոզապուխտ, ջրաշագանակներ, ստեպղին, խեցի, կոճապղպեղ եւ այլ բաղադրիչներ եւ ջրի մեջ եփում են: Կիսաեփ դաշնալուց հետո կրակի ջերմաստիճանն իջեցնում են եւ թողնում, որ սոուսը մարմանդ կրակի վրա եփվի: Քաջորդիվ մարինացված հավը դնում են կաթսայի մեջ եւ եփում: Այնուհետեւ եփած հավը սոուսապատում են եւ մոտ 20 րոպե թողնում այդպես, որից հետո այն կտրտում են: Ուտեստը կարելի է ճաշակել նաեւ սոյայի սոուսով:

Գուանսինյան ուտեստներ



Գուանսին ինքնավար մարզ է, որը գտնվում է հարավ-արեւմտյան Չինաստանում եւ սահմանակից է Վիետնամին: Այս միակ էթնիկ փոքրամասնություններով ինքնավար մարզն է, որը մոտ է գտնվում ծովին ու հարթավայրերին: Ողջ ինքնավար մարզը մեծամասամբ բնակաեցված է էթնիկ փոքրամասնություններով՝ Չժուա, Չան, Յաո, Միաո, Դինգ, Չուի, Ցիին, Յի, Շուի եւ այլն: Ինչ վերաբերում է գուանսինյան ուտելիքներին, դրանք կներկայացնենք ըստ ենթաշրջանների: Գուլյեյի շրջանում հայտնի ուտեստներից է՝ շոգեխաշած մողեսը՝ Յանշոյում, խաշած ծածանը՝ Ցյուանչժոյում, շոգեխաշ խոզի միսը թարոյով /արեւադարձային ասիական բույս/՝ Լիպույում, շան միսը՝ Լինչուանում, բաղր լոտոսի տերեւմերով՝ Գույլինում, գինկոյով /ձարիխոտ/՝ շոգեխաշ բաղր ու տապակած սալմոնի միսը՝ Լոնգենգում եւ այլն: Գույնան շրջանը հայտնի է հետեւյալ ուտեստներով՝ Նանինի խորոված բաղրով, Յեպույի մարգարտագույն եւ պարույրաձեւ խեցու ապուրով, Լոնչժոյուի շոգեխաշած ծովախնեցիներով ու քնջութապատ խաշած հավով, Յոնգչենգի տապակած, խրթխրթան հավով եւ այլ ուտեստներով: Գուիդոնգ շրջանը հայտնի է Վուչժոյուի՝ թղթի մեջ փաթաթած հավով, Լուչուանի խորոված խոզի գոճիով, Յուլինի տավարի մսից պատրաստած ապուրներով, Ունգ քաղաքի շոգեխաշած տոֆույով, Վուչժոյուի տապակած ձկով եւ Յուլինի տավարի մսից պատրաստած կոլուակներով: Գուիքսի շրջանը հայտնի է շոգեխաշ սոուսապատ տոֆուներով, Չինսիյում ընդունված են չորացրած բաղր, յուղոտ ձկները եւ այլն: Դուն ազգային պատկանելությունն ունեցող մարդիկ սիրում են թու դրած ձկնեղեն ուտել, չժուն ազգային պատկանելության մարդիկ նախընտրում են ձկնապուրները, միան ազգության մեջ հարգի կերակուր է ոչխարի մսով ապուրը, յատ ազգային պատկանելության մեջ՝ ոչխարի աղացած ոսկորներից պատրաստած գնդիկները:

Գուանսիյում ներկայացուցչական խորտիկներն են՝ Գուիլինի բրնձե

արիշտաները, Նանինի յուղու մսով ցունցիները /խմորագնդիկներ/, գյուտինային բրնձե տորթերը, Բինկուանի սոյայի կաթը, Չժառապինի դեղին շաքարը, գարուց պատրաստած բլիթները, լոբադոնդորը, Վուչտուի մեջ տորթերը, Լյուչտուի խորխորան ուտեստներն ու Չժուանի տապակած բադը:

Հոնկոնգյան ուտեստներ

Հոնկոնգին ուտելիքների դրախտ են անվանում: Մքանչելի սոցիալական միջավայրի շնորհիվ այստեղ օգտագործում են Չինաստանի տարբեր նահանգների, այդ թվում՝ Ասիայի, Եվրոպայի եւ Ամերիկայի հայտնի ուտեստները: Բացի դրանից, այստեղի ուտեստները բարձրորակ ու մատչելի են, եւ ասում են. «Հոնկոնգում կարող եք վայելել ամենաբազմազան ու ամենահամեղ նուրբ խորտիկներն այնքան, որքան կամենում եք»:

Այստեղի խոհանոցին հատուկ են բուսական թեյերը, մածուցիկ դոնդողը, տավարի մսով կոտլետները, մանր ծովախեցգետիններով արիշտաները, ձկան խավիարի փոշին, սուկի /միս/ բիֆշտեքսը, լցոնած-տապակած պղպեղները, ձվով փքաբլիթները եւ այլն:

Մակաոյան ուտեստներ

Մակաոյում ապրող օտարերկրացիներից շատերը մակաոյեցիների մասին ասում են. «Մակաոյի ժողովուրդը հյուրասիրությունից չի վախենում»: Սա խոսում է այն մասին, որ Մակաոյում մարոկկ հյուրերին տուն հրավիրելիս ուտելիքների համար չեն անհանգստանում եւ վստահ են, որ իրենց հյուրասիրած ուտելիքներից նրանք ուրիշ ոչ մի տեղ չեն ճաշակել: Դրա պատճառն այն է, որ Մակաոն իր ուտելիքների հարուստ տեսականին հավաքել է աշխարհի բոլոր անկյուններից: Այստեղ դուք կարող եք ճաշակել ինքնատիպ պորտուգալական ուտեստներ, ինչպես նաև մակաոյան, գուանդունյան, շանհայյան, ճապոնական, կորեական, թայվանական ուտեստներ: Եթե դուք չինական ուտեստների սիրահար եք, ապա այստեղ կարող եք դրանցից գտնել Մակաոյի բազմաթիվ ռեստորաններում՝ ավանդական կարմրացրած հավից, շոգեխաշած ձկնից մինչեւ հանրահայտ պեկինյան լցոնված բաղը, շնաձկան թելիկներով ապուրը, խորոված գոճին, մանր ծովախեցգետիններով լցոնված խմորագնդիկները, շաոմային եւ ուրիշ շատ ուտեստներ: Այստեղ դուք իսկապես կարող եք լավ քեֆ անել: Ֆուլայիի գլխավոր պողոտայի վրա գտնվող չինական ռեստորաններն ամենահայտնիներն են: Եթե որոշել եք հարմար ու մատչելի վայրում ճա-

շակ զարգացնել, ապա կարող եք փորձել դա ֆուլայիի գլխավոր ճանապարհի վրա տեղակայված ինքնասպասարկվող ճաշարանում: Այստեղ դուք կարող եք փորձել տարատեսակ քոնջիներ, արիշտաներ, վոնտոններ /խոզի աղացած մսով լցոնված խմորագմդիկներ՝ ապուրի մեջ եփած/, ջի-առզի, կոճապղպեղով կաթնաշոռներ եւ այլն: Այս ամենը կարող եք ճաշակել անհամենատ ցածր գներով: Այստեղ բուսակերների համար եւս լայն ընտրության հնարավորություն է ընձեռնված. Նրանք կարող են զանազան գումնեղ ու համեղ թեթեւ բանջարեղենային ուտեստներ ճաշակել: Գիշերը Մակար թերակղզու հին շրջաններում գործում են սառը խորտիկների բազմաթիվ խանութներ, ռեստորաններ, որոնք իրոք շատ աղմկոտ են: Տավարի աղիքներով արգանակի, հավի տոտիկների, տավարի կողերի, լորի, ոչխարի մսով պատրաստած ապուրների նուրբ բույրերը տարածված են շուրջբոլորը:

Այս ամենը շատերի մոտ կարող է անըդիատ ուտելու ցանկություն առաջացնել:

4. Հարավ-արեւմտյան Չինաստանի համն ու հոտը



Չինաստանի հարավ-արումտյան մասը ներառում է Սիչուան նահանգը, Ցունան նահանգը, Գուչժու նահանգը, Չունցինի ինքնավար մարզը, Տիբեթի ինքնավար մարզի մեջ մասը եւ Շենսին նահանգի հարավային մասը: Հարավ-արեւմտյան ուտեստների հիմնական մասը սիչուանյան ոճի է:

Սիչուանյան ոճը Չինաստանի ուր մեծ սննդառային խմբին է պատկանում եւ չինական խոհանոցի պատմության մեջ իր կարեւորագույն տեղն է զբաղեցնում: Այս ոճը մեծ ուշադրություն է դարձնում ուտեստների բազմազանությանը: Դրանք աչքի են ընկնում իրենց թարմությամբ, հյութեղությամբ եւ ընդգծված համ ու հոտով. այն հայտնի է նաև

իր կծու համերի համադրությամբ: Չուանի /Սիչուանի/ ուտեստները իրենց

յուրօրինակ խոհարարական արվեստի եւ նուրբ համի շնորհիվ հայտնի են ոչ միայն Չինաստանի տարբեր շրջաններում, այլև նրա սահմաններից դուրս: Այն խառնում է տարբեր տարածարչանների առանձնահատկություններն ու օգտագործում է տարբեր դպրոցների առավելությունները, մինչեւ որ նորարարական լուծումներն ուտեստին նոր շունչ են հաղորդում:

Չուանյան ուտեստների վեց հիմնական համերն են՝ կոշտ, տաք, քաղցր, աղի, թթու եւ դառը: Այս վեց հիմնական համերը հիմք ընդունելով՝ նրանք տարբեր բաղադրիչներից, տարատեսակ խոհարարական մեթոդների՝ աղալու, տարբեր ձեւերով կտրատելու, ինչպես նաև զանազան եփման տեխնոլոգիաների կիրառման միջոցով, ստանում են հաճելի գույնով, բույրով, համով ու տարբեր ձեւերով տեսակ-տեսակ ուտեստներ: Չուանյան ուտեստներ ունենում են հաճելի բույր, գեղեցիկ երանգներ, ախորժելի համ եւ աներեւակայելի հրաշալի տեսք:

Չուանյան կերակուրները հայտնի են իրենց բազմազանությամբ, եւ իրենց մեջ ներառում են չորս առանձնահատկություն՝ ճիշտ ընտրված բաղադրիչներ, նուրբ կտրման տեխնիկա, պատշաճ դասավորում եւ խնամքով պատրաստում: Եվ այդ ամենն իրոք մեծ նշանակություն ունեն ուտեստների պատրաստման գործում: Այս ոճի ուտեստների մեջ մասի համար օգտագործում են բարձր ջերմաստիճանի ներքո արագ տապակման մեթոդ: Սա էլ իր հերթին ներառում է չորս հիմնական հատկություն՝ կարծ ժամանակում պատրաստում, թեժ կրակի վրա պատրաստում, թանձրության ապահովում եւ կերակրի թարմ հոտի առկայություն: Ինչ վերաբերում է այս ոճի ընդիհանուր եփման մեթոդներին, ապա դրամցից են՝ թեժ կրակի վրա արագ պատրաստելը, սահեցնելով եփումը, խաչումը, արագ տապակումը, կարմրացնելը, շոգեխաշումը, բլբթացնումը, թխումը եւ այլն: Տապակի մեջ տապակումը, չոր տապակումն ու չոր շոգեխաշումը՝ բոլորն իրենց յուրահատուկ առանձնահատկություններն ունեն: Սկսած հանդիսավոր խնջույքների ուտեստներից մինչեւ առօրեական ուտեստներն այս ոճն առաջարկում է կերակրատեսակների բազում ընտրանի՝ համային, հոտային ու գունային նուրբ համադրությամբ, բաղադրիչների ֆանտաստիկ դասավորությամբ ու բազմածեւ կտրվածքներով:

Չուանյան ոճը կարելի է բաժանել երկու դպրոցի՝ Ռոնգ եւ Յու: Ռոնգ դպրոցը սովորաբար համարվում է ավանդական Սիչուն խոհանոցի դպրոց, մինչդեռ Յուն նոր դպրոց է: Ռոնգ դպրոցում մարդիկ մանրախնդրութեն են օգտագործում համապատասխան բաղադրիչները՝ խստորեն հետեւելով ավանդական ճաշացուցակներին: Նրա բույրը նուրբ է, եւ այն հաճախ կապված է որոշ պատմությունների հետ: Յայտնի ուտեստներն են՝

մապի տոֆուն /տապակած տոֆուն՝ տաք ու կծու սոուսում/, հավլվ քունզ պան /կծու, տապակած չինական ուտեստ՝ պատրաստված հավի մսից, գետնանուշից, բանջարեղենից եւ չիլի պղպեղից/: Յու դպրոցը համարձակ է բաղադրիչներն օգտագործում: Այն իր ուտեստներում լայնորեն օգտագործում է տարբեր տեսակի չինական եւ ոչ չինական համեմունքներ, որոնց սովորաբար ասում են ջիանգիու ուտեստներ: Դայտնի կերակրատեսակներից են՝ խաշած ձուկը թթու դրած կաղամբով ու չիլիով, եփած արյան կտորները, շոգեխաշած հավը չիլի պղպեղի սոուսով, շոգեխաշուկների շարքը՝ չորացրած ու պահածոյացված մթերքներով /հիմնականում օգտագործում են չոր, սեւ սիսեռ/: Շոգեխաշած ուտեստները ներկայացնում են՝ կտրատած խոզի միսը կծու չիլիի յուղում, կտրատած ձուկը կծու չիլիի յուղում եւ այլն: Կծու պղպեղով ուտեստները ներկայացնում են՝ հավի միսը չիլիով ու պղպեղեվ, խոզի հաստ աղիքները չիլիով: Իսկ չոր ուտեստները ներկայանում են՝ ճուտը թարոյով /կոլկաս բույս/ եւ գարեջրի մեջ շոգեխաշած բաղը:

ՄԱՍ ԶՈՐՌՈՐԴ

ԶԻՆԱԿԱՆ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՈՒՏԵՍՏՆԵՐԻ ՍՆՍԴԱԿԱՐԳԱՅԻՆ ՍՈՎՈՐՈՒՅԹԱԾՆԵՐԸ

Զինական ավանդական փառատոները Զինաստանի դարավոր պատմության ու հարուստ մշակույթի անբաժանելի մասն են կազմում: Սննդակարգերն անփոխարինելի դեր ունեն ավանդական տոների հարուստ բազմազանության մեջ: Գրեթե ամեն մի խոշոր փառատոն ունի իր համապատասխան ճաշացանկը: Ուստի յուրաքանչյուր փառատոնի համար ձեւավորել է առանձին դիետիկ սովորույթ:

ԳԼՈՒԽ ՄԵԿ

ԳԱՐՍԱՆԱՅԻՆ ՓԱՌԱՏՈՆԻ ՍՆՍԴԱԿԱՐԳԱՅԻՆ ՍՈՎՈՐՈՒՅԹԱԾՆԵՐԸ

Գարնանային փառատոնի ավանդական անվանումներն են՝ Նոր տարի, Մեծ տարի, Նոր դարաշրջան, իսկ բերանացի՝ «հրաժեշտ տալ իին տարուն», «նշել Նոր տարին» եւ «Գարնանային փառատոնը տոնել»: Յնագույն ժամանակներում լուսնային օրացույցում այն հիշատակվում էր որպես գարնան սկիզբ՝ խորհրդանշելով գալիք տարվա սկիզբը: Յետագայում լուսնային օրացույցում փոխեցին հունվարի մեկը՝ որպես նոր տարվա առաջին օր, որը կոչվում էր նաև Յուանդան:

Գարնանային փառատոների ժամանակ՝ Յան ազգության մարդիկ սովորաբար ուտում են բրնձով տորթեր, ջիաղի, կաշուն բրնձով թխվածքներ, տանջուանգ /նածուցիկ բրնձե կոլոլակներ/, խաշած ձվեր, մեծ բուրգերներ, չմասնատված ձկներ, ընտիր գինիներ, անուշաբույր նարինջներ, խնձորներ, ընկույզներ, սեխի սերմեր, կոնֆետներ ու բազմաթիվ այլ ուտելիքներ: Նրանք նաև մի շարք՝ ավանդույթ դարձած գործեր են անում՝ մաքրում են փոշիները, լվանում անկողնային պարագաները, պատրաստում են Նոր տարվա ուտելիքները, փակցնում Նոր տարվա նկարները, թղթե բացիկներում բարենադրական խոսքերը են գրում ու կախում, վառում են մոմերը, քարածուխ են այրում, հրավառություններ անում: Նոր տարին դիմավորելու համար նրանք, Ամանորի նախօրեին արթուն են մնում, հաջողություն բերող փող են միմյանց նվիրում, ամանորյա զանգեր են կատարում, այցելում իրենց ազգականներին, երկրապագում են նախնիների հիշատակը, շրջում շուկաներում եւ այլն:



Նոր տարվա սեղանի շուրջ հավաքվելու համար հարկավոր է մի շարք կարեւոր հանգամանքներ հաշվի առնել: Նախ, ամբողջ ընտանիքը պետք է միասին լինի: Եթե որեւէ մեկը ինչ-որ պատճառով չի կարողանում տուն վերադառնալ, ապա ընտանիքը բացակա անդամի համար պետք է նրա տեղուն ու ճաշի սպասքը պատրաստ պահի: Երկրորդ, այդ օրը պիտի խնջույքի վերածվի եւ մարդիկ պետք է լուրջ ուշադրություն դարձնեն «Երջանկի բառերին»: Մենք հաճախ բրնձով թխվածքներին վերագրում ենք որպես՝ «քայլ առ քայլ ավելի բարձրանալ», ջիազդին՝ «լինել հաջողակ ամեն ինչում», իսկ սեղանի գլխավոր խորտիկ ամբողջական ձկանը՝ «ամեն տարի հարուստ լինել» ինաստները: Ավելին, սեղաններին ձկան առկայությունը պարտադիր է: Յյուսիսային Չինաստանի որոշ վայրերում, որտեղ ձկներ չկան, մարդիկ սեղանը զարդարում են փայտե ձկներով: Չինարենում ձուկ բարի արտասանությունը համահունչ է հավելյալ /մնացորդ/ բարի արտասանաձեւին, եւ չին ժողովուրդը կարեւորում է ձկան առկայությունը տոնական սեղաններին: Երրորդ, մարդիկ պետք է հետեւեն նստելու կարգին: տատիկներն ու պապիկները պետք է սեղանի գլխին՝ ամենահարգված տեղում նստեն, ծնողները՝ նրանց կողքին, իսկ բոռնիկները՝ ավելի ցածր տեղերում: Անկախ նրանց՝ կին թե տղամարդ, ահել թե ջահել, բոլորը պետք է խմեն: ճաշելու ժամանակ նրանք պետք է փակեն դուրս ու ազատ վայելեն տոնը:

Նոր տարվա նախօրեին տարբեր ճաշատեսակներ են պատրաստում:

Դիմ ժամանակներում, Պեկինում, Թիանջինում հասարակ մարդիկ պատրաստում էին բրինձ, շոգեխաշած խոզի, տավարի, ոչխարի միս, շոգեխաշած ճտեր եւ ուրիշ շատ եփած ու տապակած ճաշատեսակներ: Շենսիում ընտանեկան տոներն ընդգրկում են՝ չորս մեծ ափսեներ եւ ութ մեծ թասեր: Չորս մեծ ափսեներն են՝ տապակած ճաշատեսակներն ու սառը խորտիկները: Ութ մեծ թասերը հիմնականում լինում են շոգեխաշած ու եփած կերակուրները: Անհոյի հարավային մասում ուտում են կարմիր եփած խոզի միս, շոգեխաշած վագրի գծերի պես զոլավոր խոզի միս, մսային գնդիկներ, կտրտած-սոուսապատ խոզի միս, սեւ սնկով ծվեր, շոգեխաշած խոզի միսը գյուտինե /կպչուն/ բրնձով, շոգեխաշ միս եւ խոզի յարդ, խոզի սիրտ, խոզի շոգեխաշած աղիքներ եւ այլն: Յուրեյի արեւելյան մասում ուտում են՝ երեք շոգեխաշ ուտեստ, երեք թխվածք եւ երեք գնդիկավոր ուտեստ: Երեք շոգեխաշ ուտեստներն են՝ ամբողջական ձուկը, ամբողջական հավն ու ամբողջական բաղը: Երեք թխուկներն են՝ ձկնով թխուկը, խոզի մսով թխուկն ու ոչխարի մսով թխուկը: Իսկ երեք գնդիկավոր ուտեստներն են՝ ձկնով գնդիկները, մսով եւ լոտոսով գնդիկները: Յերբին շրջանում մարդիկ սովորաբար պատրաստում են ութ, տասը, տասներկու կամ նույնիսկ տասնվեց տարատեսակ խորտիկներ: Սովորաբար նրանց ուտեստներում հիմնական բաղադրիչներն են հավը, բաղը, ձուկը, մսերն ու բանջարեղենը: Չժեզյանի որոշ վայրերում մարդիկ պատրաստում են տասը մեծ ուտեստ, քանի որ «տաս» թիվը չինարենում եւս մեկ նշանակություն ունի՝ կատարելություն: Նաեւ նրանք հիմնականում ուտում են հավ, բաղ, ձուկ, միս եւ բանջարեղեն: Նանչանգում, Զիանսինի շրջանում նրանք սովորաբար ունենում են տասից ավելի ուտեստներ, եւ հատկապես կարեւորում են չորս տաք եւ չորս սառը ուտեստները, ինչպես նաև երկու տեսակ ապուրների մատուցումը:

Ամեն շրջանում կան մեկ կամ մի քանի ուտեստներ, որոնք տարեմուտի ճաշին հաջողություն են խորհրդանշում: Օրինակ, Սուչժոու քաղաքում մարդիկ կանաչ բանջարեղեն են ուտում, ինչը նշանակում է խաղաղություն ու երջանկություն, կանաչ սոյայի ծիլեր՝ ցանկություններն ի կատար ածելու համար, նեխուր՝ աշխատասիրության ու ջանասիրության համար: Յունանի հարավային ու կենտրոնական մասերում մարդիկ պետք է մեկ կիլոգրամանոց ծածան պատրաստեն, եւ նրանք դա անվանում են՝ «միասնության ձուկ», խոզի զինգ՝ երեք կիլոգրամ, որին ասում են «միավորման հոդ» եւ այլն: Անհոյի կենտրոնական եւ հարավային մասերում մարդիկ իրենց սեղանին երկու տեսակ ձուկ են դնում: Մեկը ամբողջական ծածան ձուկն է, որին կարելի է միայն նայել, բայց չուտել: Սրանով նրանք իրենց հարգանքն ու նվիրվածությունն են արտահայտում իրենց նախնի-

Աերի հանդեպ, եւ դա նաեւ «տարեցտարի ավելի հարուստ լինելու» խորհուրդն ունի: Մյուսը կապուտձուկն է, որը կարելի է ուտել եւ այն խորհրդանշում է «շատ որդիներ ու թռներ ունենալ, ամբողջ ընտանիքի բարգավաճում»:



Լուսնային օրացույցով հունվարի մեջի առավոտից մարդիկ սկսում են իրենց ամանորյա տնային զանգերը կատարել, ինչը տեսում է մոտ տասը օր: Ամանորյա տնային զանգեր կատարելը Գարնանային փառատոնի եւ չինական ավանդույթի կարեւ-

որագույն մասն է կազմում: Պատմության երկար գետը մինչ մեր օրերն է հոսում տնային զանգեր կատարելը մարդկանց մեջ դարձնելով փոխադարձ ողջույնի ու օրինանքների երանելի շղթա: Երբ Նոր տարվա զանգեր են կատարում, մարդիկ սովորաբար բերում են ամանորյա տորթերը: Չինաստանում Նոր տարվա տորթերը երկար պատմություն ունեն, դրանք ամեն տարի իրենց հետ նոր հույսեր են բերում: Ամանորյա տորթերը հաճախ պատրաստում են կաչուն /կլեյկավինով հարուստ/ բրնձի ալյուրից, որը յուրահատուկ ուտեստ է Չանցզյան գետի հարավային մասում: Չինաստանի հյուսիսում մարդիկ հնագույն ժամանակներից ի վեր օգտագործում են /չմշակված/ կոչտ բրինձը: Բրնձի այս տեսակը լինում է դեղին, կաչուն ու քաղցր, եւ շոգեխաշում են քիչ ջրով: Այնտեղ ամանորյա թխուկների բազմաթիվ տեսակներ կան: Յատկանշականներն են՝ սպիտակ կարկանդակները հյուսիսային շրջանում, դեղին կարկանդակները՝ Չինաստանի Մեծ պատի հյուսիսային հատվածի գյուղական ընտանիքներում, մանր աղացած բրնձի ալյուրով ամանորյա տորթը՝ Չանցզյան գետի հարավային մասում, կարմիր կրիաներով թխուկները թայվանում եւ այլն: Յյուսիսային մասի ամանորյա թխուկները տարբերվում են հարավայինից: Յյուսիսային մասում ամանորյա թխուկների պատրաստման երկու միջոց կա՝ շոգեխաշում ու խորը տապակում: Դրանք քաղցր են: Յարավում ամանորյա թխուկներ պատրաստելու համար նրանք ոչ միայն շոգեխաշման ու տապակման մեթոդներն են կիրառում, այլև կարող են եփել կտորներով

Եւ ապուրներ պատրաստել: Եվ դրանք ոչ միայն քաղցր են, այլև՝ առի: Երբ մարդիկ հյուր են գնում, տանտերը հյուրերին պետք է սեխի սերմեր, գետնանուշ, կոնֆետներ ու տարբեր տեսակ քաղցրավենիքներ հյուրասիրի: Նրանք դա գույզի են աճվանում, եւ նույնիսկ աղքատ ընտանիքները պետք է թեթեւ ուտեստներով սեղան բացեն իրենց հյուրերին հյուրասիրելու համար, եւ դա Նոր տարվա հաջող մեկնարկ է համարվում: Եթե հյուրերը հյուրընկալող ընտանիքից ոչինչ չեն ստանում, այդ երկու ընտանիքները դժգոհ են մնում, եւ նրանք մտածում են, որ գալիք տարում իրենց անհաջողություններ է սպասվելու: Ամանորի ամենաերջանիկ պահը գինի խմելն է: Անկախ նրանից, գինին լավն է, թե վատը, անկախ կերակուրների որակից, երբ հյուրերը ժամանում են, նրանք պետք է նստեն ու խմեն: Եթե նրանք մի բաժակ խմելով ցանկանում են հեռանալ, տանտերը նրանց չպետք է ետ պահի: Իսկ եթե նրանք շատ են խմում եւ հեռանալու մտադրություն չունեն, տանտերը նրանց չպետք է ընդհատի, որն ունի իր հատուկ խորհուրդը՝ «հավերժ հոսել»: Ազգականների եւ ընկերների շրջանում նրանք, Նոր տարվա գինի խմելու պատրվակով, միմյանց տուն են գնում, եւ դա սովորաբար անվանում են «միասին հավաքվել» կամ՝ «գարնան գինի խմել»:

Հունվարի 7-ը
Մարդկության օրն է:
Ասում են, երբ Նյուվա աստվածուիին ստեղծում էր աշխարհը, նա հավերին, շներին, խոզերին, կովերին, ձիերին եւ այլ կենդանիներին ստեղծելուց հետո յոթերորդ օրն արարել է մարդկային ցեղը, այսպես



այդ օրը դարձել է մարդկության ծննդյան տոնը: Դան դիմաստիայից ի վեր՝ մարդիկ սկսեցին տոնել հունվարի 7-ը, իսկ Վեյ եւ Ցզին դիմաստիաներից հետո մարդիկ սկսեցին դրան ավելի լուրջ վերաբերել: Թանգ դիմաստիայից հետո մարդիկ նույնիսկ արժեւորեցին այս տոնը: Ամեն տարի, մարդկության տոնին, կայսրը իր ստորադասներին գումագեղ նվերներ էր ընծայում, իսկ բարձրաստիճան պաշտոնյաների հրավիրում էր մասնակցելու այդ խնջույքին: Այդ օրը մարդիկ «տուփով ուտելիք» /եփած մսով ուտես-

Եթե/ Են ճաշակում, եւ իրենց բակերում նրաբալիքներ տապակում, որի խորհուրդը «Երկինքը օրինանքներով ողողելն» է: Ավելին, որոշ վայրերում մարդիկ ուտում են յոթ տարբեր բաղադրիչներից բաղկացած խառը ապուրմեր: Ասում են, որ այս տեսակ կերակուրը կարող է ջնջել չարիքն ու բուժել իիվանդությունները: Տարբեր վայրերում ուտեստները տարբեր են, ասել է թե՝ տարբեր են մտադրությունները: Չառշանում, Գուան-Շունում մարդիկ օգտագործում են մաճանեխ, սխտոր, խիտ ծաղկատերեւներով բանջարեղեն եւ այլն: Յակկայի տեղաբնակներն օգտագործում են նեխուր, սխտոր, կանաչ սոխ, բուրավետ ծաղկած սխտոր, ծուկ եւ միս: Թայվանում եւ Ֆուցզյանում մարդիկ օգտագործում են սպանախ, նեխուր, կանաչ սոխ ու սխտոր, հովկի քսակ /դեղաբույս/ եւ այլն: Դրանցից նեխուրն ու կանաչ սոխը լավ են խելացի լինելու համար, սխտորը՝ հաշիվները լավ անելու, իսկ մաճանեխը՝ մարդկանց երկար կյանք պարզեցնելու համար:



Չինացիները հաճախ ասում ենք. «Չիառզիի համին ոչինչ չի հասնի»: Յուրսիսային Չինաստանի շատ տարածաշրջաններում Ամանորի նախաշեմին ջիառզի պատրաստելը ամենակարեւոր սովորույթն է: Տարեմուտին ջիառզին ոչ միայն լոկ ու-

տեստ է, այլև չինական մշակույթի մի մասնիկը: Նոր տարվա շեմին ջիառզին մարդկանց սեղանի հիմնական ուտեստն է, որն արտահայտում է մարդկանց՝ ավելի լավ կյանքով ապրելու փափագը: Յատկանշական է, որ ջիառզի պատրաստելիս մարդիկ օգտագործում են տարբեր բաղադրիչներ՝ սառնաշաքար, գետնանուշ, ընկույզ եւ այլն: Այն մարդիկ, ովքեր ուտում են շաքարով պատրաստած ջիառզի, գալիք տարում ավելի քաղցր կյանք են ունենում, ովքեր ուտում են գետնանուշով ջիառզի, երկար կյանքի են ունենալու ու առողջ են լինելու, ովքեր ուտում են յուլյուբայով ու ընկույզով ջիառզի՝ շատ շուտով երեխա են ունենալու: Որոշ շրջաններում մարդիկ աղանդերներ պատրաստելիս ներառում են ջիառզին՝ լավ բախտի արժանանալու համար: Օրինակ, տոֆուի հետ պատրաստում են նաեւ ջիառզի, որը նշանակում է, որ ամբողջ ընտանիքը երջանիկ կլինի, չորաց-

ուած արմավճերն իմաստավորում է, որ գալիք տարում ամեն ինչ կիամապատասխանի իրենց ցանկություններին, երեք բարմ բանջարեղենը իմաստավորում են՝ գալիք տարվա բարեհաջող սկիզբը: Թայվանում մարդիկ հաճախ պատրաստում են ձկան ու մսի գնդիկներ եւ բանջարեղենի տարբեր տեսակներ՝ միասնության ու բախտավորության արժանանալու համար:

Անանորի շեմին Զիառզիի ձեւը նույնակա որոշակի պահանջներ ունի. շատ շրջաններում այն պատրաստում են ավանդական կիսալուսնաձեւ պատկերով: Որոշ ընտանիքներում նրանք զիառզիի երկու ծայրերն իրար են սեղմում՝ կոշիկի ձեւ տալով, այնուհետեւ դնում են բամբուկե տախտակին կամ խուզի վրա, ակնկալելով տան համար ոսկի կամ արծաթ: Որոշ ընտանիքներում զիառզիները զարդարում են տարատեսակ ձեւերով, ինչպես, ասենք՝ ցորենով զիառզիի վրա լիքոտ, մեծ ականջ են պատկերում, ինչը խորհրդանշում է, որ հաջորդ տարում ցորենի մեծ բերք են ստանալու: Սակայն հիմնականում նրանք զիառզիին զանազան կերպարանքներ են տալիս՝ մատնացույց անելու, որ գալիք տարում հաջողությունը նրանց կժպտա, եւ որ նրանքը տարեցտարի կբարգավաճի:

ԳԼՈՒԽ ԵՐԿՈՒ

ԼԱՊՏԵՐՍԵՐԻ ՓԱՌԱՏՈՆԻ ՍՆՆԴԱԿԱՐԳԱՅԻՆ ՍՈՎՈՐՈՒՅՑԹՆԵՐԸ

Լապտերների փառատոնը, կամ ինչպես ասում են՝ Շանգյուան փառատոնը, Չինաստանի ավանդական փառատոններից մեկն է: Մարդիկ լուսնային օրացույցի առաջին ամիսն անվանում են սյաո, իսկ 15-րդ օրը տարվա առաջին լիալուսնի օրն է, ուստի հունվարի 15-ը նրանք կոչում են Յուանյան փառատոն: Նոր տարվանից հետո դա առաջին կարեւոր փառատոնն է համարվում:



Ժողովուրդը յուանյան տոնում է հունվարի 15-ին /գյուտինային բրնձե գնդիկներ են ճաշակում այդ օրը/, որը եկել է դեռ շատ հնուց: Սուն դինաստիայի ժամանակ ի հայտ եկած նոր ուտեստը, որն ուտում էին Լապտերների փառատոնի ժամանակ, արդեն իսկ շատ ժողովուրդների մոտ մեծ տարածում էր գտել: Այդ ուտեստը, որին գործարարները ակամայից ուսկե ծովլվածք անվանումով էին կնքել, հետագայում կոչվեց յուանյան: Յուանյան պատրաստելիս որպես խճողակ օգտագործում են սպիտակ շաքար, վարդ, քնջութ, լոբամածուկ, յուգլանդիսի /թիթեռի տեսակ/ սպերմա, ընկույզ եւ այլն, իսկ դրանք կլոր ծեւավորելու համար օգտագործում են գյուտինային բրնձի այսուր: Յուանյաները կարող են լինել մսով կամ առանց մսի, տարբեր յուրահատուկ համերով: Դրանք կարող են խաշել, տապակել, շոգեխաշել. սնոտիապաշտական ինաստով այն միասնություն ու երջանկություն է խորհրդանշում:

Վերջին հազարամյակի ընթացքում յուանյանի պատրաստման եղանակներն ավելի են կատարելագործվել: Դրա արտաքին ծածկույթը կազմված է գետի բրնձի այսուրից, սորգոյի այսուրից, դեղին բրնձի այսուրից ու եղիպտացորենի այսուրից: Լցոնը կարելի է տարբեր մթերքներից պատրաստել: Յյուսիսային եւ հարավային շրջաններում պատրաստման եղա-

նակները տարբեր են: Յյուսիսային հատվածում յուանսյառի պատրաստման համար նրանք հիմնականում օգտագործում են այուրը մաղով գնդիների վրա լցնելու, կամ այուրը թափայի մեջ լցնելուց ու գնդիկներն այնտեղ տեղափոխելուց հետո ձեռքի մեջ թափան խաղացնելու /այնպես, որ գնդիկները այսուրով պատվեն թափայի մեջ/ տարբերակը, մինչդեռ հյուսիսային հատվածի ժողովուրդը ձեռքերով է այսուրով գնդիկներ գնդում: Յուանսյառն կարող է ընկույզի չափ մեծ եւ դեղին լոբու պես փոքր լինել: Դրանք պատրաստվում են տարբեր մեթոդներով՝ ապուրի մեջ եփելով, տապակելով, յուղի մեջ եփելով, շոգեխաշելով եւ այլն: Լցոնված յուանսյառների համն ավելի յուրահատուկ կստացվի, եթե եռացնելիս դրանց հետ մի քիչ ֆերմենտացված բրինձ, շաքար եւ քաղցրահամ օսմանթուս ավելացնենք: Այս ուտեստը նաեւ լավ է առողջության համար: Ներկայում այս գյուտինային բրնձե գնդիկները դարձել են աղանդերներ, որոնք համեղ են տարվա բոլոր չորս եղանակներին:

ԳԼՈՒԽ ԵՐԵՔ

ԳԵՐԵԶՄԱՆՆԵՐ ՄԱՔՐԵԼՈՒ ՓԱՌԱՏՈՆԻ ՍՆՆԴԱԿԱՐԳԱՅԻՆ ՍՈՎՈՐՈՒՅԹԸՆԵՐԸ

Քինմինը (պայծառություն) լուսնային օրացույցի 24 արեգակնային տերմիններից մեկն է: Չինաստանում ավանդական դարձած գերեզմաններ մաքրելն (նաեւ ասում են Քինմին փառատոն) ի հայտ եկավ Չժոու դինաստիայի ժամանակաշրջանում, որն ավելի քան երկու հազար հինգ հարյուր տարվա պատմություն ունի: Գերեզմաններ մաքրելու փառատոնից հետո ջերմաստիճանը բարձրանում է, ինչը իսկապես բարենպաստ ժամանակահատված է գյուղատնտեսության համար, եւ հին ասացվածքն ասում է. «Քինմինի ժամանակ սեխս ու լորի աճեցրեք»: Ավելին, գերեզմաններ մաքրելն արտահայտում է նախնիների հանրեալ ունեցած խորին երախտագիտությունն ու նախնիների հիշատակը պատվելու ձեւերից մեկն է: Այն ընտանիքները ներդաշնակ է դարձնում եւ որդիական բարեպաշտության ձեւ է համդիսանում: Գերեզմաններ մաքրելու փառատոնը նշում են գարնան կեսերին կամ վերջին, նաեւ ձմռան կեսից հարյուր վեց օր հետո:



Ինչ վերաբերում է Գերեզմաններ մաքրելու փառատոնի դիետիկ սովորույթներին, տարբեր տարածաշրջաններ իրենց հատուկ փառատոնային ուտեսաներն ունեն: Եվ քանի որ Սառը խորտիների փառատոնն ու Գերեզմաններ մաքրելու փառատոնը միավորվեցին ու դարձան որպես մեկ ընդհանուր հանդիսաւություն, որոշ վայրերում պահպանվում է Գերեզմաններ մաքրելու փառատոնի ժամանակ սառը խորտիկներ ճաշակելու սովորույթը: Զինոյում եւ Շանդունում մարդիկ ձվեր ու սառը

ու գարնան կեսերին կամ վերջին, նաեւ ձմռան կեսից հարյուր վեց օր սառը խորտիկների փառատոնն ու Գերեզմաններ մաքրելու փառատոնը միավորվեցին ու դարձան որպես մեկ ընդհանուր հանդիսաւություն, որոշ վայրերում պահպանվում է Գերեզմաններ մաքրելու փառատոնի ժամանակ սառը խորտիկներ ճաշակելու սովորույթը: Զինոյում եւ Շանդունում մարդիկ ձվեր ու սառը

խմորեղեն են ուտում: Լայանում, ժույանում եւ Չարգայում մարդիկ ծու եւ սառը սորգո բրինձ են ուտում: Ասում են, որ եթե այդպես չանեն, նրանք կարկտամրիկից կտուժեն: Թայվանում մարդիկ դառը դեղաբույսերով փաթաթված տապակած նրբարիթներ են ճաշակում: Ասում են՝ այդ ուտեստը բարելավում է նրանց տեսողությունը. աչքերի լույսը պայծառանում է: Զինի /Շանսի/ կենտրոնական շրջանում մարդիկ դեռեւս պահպանում են Գերեզմաններ մաքրելու փառատոնից մեկ օր առաջ ծոմ պահելու սովորությը: Շանհայում Գերեզմաններ մաքրելու փառատոնի օրը մարդիկ բրնձե կանաչ գնդիկներ են ուտում: Նրանք օգտագործում են սանդղաբակ՝ գյուտինային բրինձը եւ բրոնձ /ժահին/ թակելու համար, այնուինետու այդ երկուսից ստացած հյութը խառնում են իրար հետ, վրան ավելացնում են լոբու մածուկ, արմավի թանձրուկ ու այլ բաղադրիչներ եւ ստացված լցոնը փաթաթում են եղեգի տերեւներով ու շոգեխաչում են շոգեփակարանում: Շոգեխաչ կանաչ բրնձե գնդիկներն ունենում են վար գույն ու շատ անուշաբույր են, եւ այն դարձել է Գերեզմաններ մաքրելու փառատոնի, ամենայուրահատուկ ուտեստը: Նաեւ Շանհայի որոշ ընտանիքներում ընդունված է այդ օրը դեղձի ծաղիկներով քոնչի պատրաստել, իսկ երբ նրանք պատրաստվում են գերեզմանները մաքրելու գնալ կամ ընտանեկան ճաշկերույթ կազմակերպել, նախընտրում են անձրուկ /անչուս՝ ձկան տեսակ/ օգտագործել: Վենչոյում՝ /Զգեցզյան նահանգ/, մարդիկ նուրբ թիվածքաբլիթներ ուտելու սովորույթ ունեն: Եվ ինչպես անվանությունը շատ նման է փափուկ բանջար արտասանելու ձեւին: Այդ տեսակ խոտաբույսեր կարելի է տեսնել միայն Գերեզմաններ մաքրելու փառատոնի ժամանակ: Հյուզուում՝ Զժենջում, Գերեզմաններ մաքրելու փառատոնին ընտանիքները զոնզգի /չինական ավանդական ուտեստ է՝ լցոնված բրնձով ու տարբեր բաղադրիչներով/ եւ փաթաթված է բամուկի, եղեգի եւ ուրիշ մեծ, հարթ տերեւներով/ են պատրաստում: Այն կարող է հանդիսանալ եւ որպես զոհաբերության ուտեստ, երբ նրանք երկրպագում են իրենց նախնիներին, եւ որպես հարմար սնունդ, որ կարող են իրենց հետ վերցնել գարնանային զբոսանքների ժամանակ: Ասացվածքում նշվում է. «Գերեզմաններ մաքրելու փառատոնի ժամանակ իշխունջներն ավելի սննդարար են, քան սագերը»: Ավելի հասարակ ընտանիքներն այդ փառատոնի ժամանակ իշխունջներ են ուտում: Այդ օրը նրանք ասեղներ են օգտագործում, որպեսզի իշխունջի միջից հանեն միսն ու եփեն: Դրանից բացի, նրանք ճոխ հացկերույթ են կազմակերպում: Ցրված ընտանիքները հա-

ԴՈՆԳ ՔԻԱՆԳ

Վաքվում են իրենց նախնյաց սրահում: Այն մարդիկ, որոնք տոհմասրահ չունեն, հավաքվում են իրենց զավակների ու թոռների հետ: Այդ փառատոնի հիմնական ուժեստը տոֆուն է եւ կանաչ բանջարեղենը: Դրանց հետ միասին կարող են ճաշակել նաև միս ու ձուկ, իսկ խմիչքներից հիմնականում նախընտրում են խնել տնային պատրաստած քաղցր գինիներ:

ԳԼՈՒԽ ՉՈՐՍ

ՎԻՇԱՊԱՆԱՎԱԿՆԵՐԻ ՓԱՌԱՏՈՆԻ ՍՆՍԴԱՎԱՐԳԱՅԻՆ ՍՈՎՈՐՈՒՅԹԸՆԵՐԸ



Ամեն տարի լուսնային օրացույցով մայիսի հինգին տոնում են Վիշապանավակների փառատոնը: Նախկինում այդ փառատոնը նշվում էր ամռանը՝ ծանր հիվանդություններից ազատվելու համար: Ավելի ուշ Զու թագավորության հոչակավոր բանաստեղծ Քուին, Վիշապ նավակների փառատոնի օրը, ցատկելով գետի մեջ՝ ինքնասպան է լինում: Այդ ժամանակից ի վեր հիշյալ օրը դարձավ փառատոնային՝ ի հիշատակ նրա: Վիշապանավակների փառատոնի առաջին չինարեն տառը՝ Դուան, նշանակում է սկիզբ: Յինգ ամսաթիվը՝ Յանգ, թիվ է /չինական փիլիսոփայության մեջ՝ տիեզերքի ակտիվ արական սերի սկզբունքը, որը հատկանշվում է որպես տղամարդ ու ստեղծարար եւ զուգորդվում է երկնքի, ջերմության եւ լույսի հետ/՝, ուստի այն նաեւ կոչում են Դուանյանգ փառատոն: Վիշապանավակների փառատոնի ժամանակ զոնգզի /բամբուկի տերուներով փաթաթված բրինձ/ ուտելը մեկ այլ չինական ավանդական սովորույթներից է: Զոնգզին, նաեւ՝ Զիառշուն կամ Թոնգ Զոնգը դարավոր պատմություն եւ բագմարիվ տեսակներ ունի: Ըստ արձանագրությունների՝ դեռեւս Գարնանային եւ Աշնանային փառատոներից առաջ, մարդիկ վայրի բրնձի տերեւներ

ԷՒՆ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ՝ ԲՐԱՆՃԱԼԳՆՈՒԹ ՎԻԱԹԱԹԵԼՈՒ ՀԱՄԱՐ, Եւ այդ տերեւներին ցլի եղջյուրի ծեւ էին տալիս, որին անվանում էին Զիառշու: Նրանք նաեւ եփում էին բամբուկե զլանակներ, որի մեջ բրինձ էին լցոնում եւ կոչում էին Թոնգ Չոնգ: Հան դինաստիայի անկումից հետո նրանք սկսեցին օգտագործել վայրի բրնձի տերեւներ՝ բրնճային խճողակները վիաթաթելու եւ դրանց քառակուսի ծեւ տալու համար, որոնք այնուհետեւ ջրի մեջ մի պտղունց սողա լցնելով՝ եփում էին: Գուանդունում դրանց ասում են՝ սողայաջրով զոնգզիներ: Զին դինաստիայի ժամանակաշրջանում զոնգզին պաշտոնապես դարձավ Վիշապանավակների վիառատոնի ուտեստը: Այն ժամանակ բացի բրնձից նրանք դրա մեջ ավելացնում էին նաեւ չինական սեւ հիլ եւ զոնգզիներին նաեւ Սպեղանի զոնգզի անվանումն էին տալիս: Յյուսիսային եւ հարավային դինաստիաներում մարդիկ բրնձի հետ զոնգզիների մեջ տարբեր բաղադրիչներ էին խառնում՝ միս, շագանակ, կարմիր դժնիկի, կարմիր լորի եւ այլն: Թան դինաստիայից առաջ զոնգզի մեջ օգտագործվող բրինձը նեֆրիտի պես սպիտակ էր, իսկ դրանց ծեւը նման էր կամ մոմի, կամ՝ աղամանդի: Սուն դինաստիայի ժամանակ զոնգզիների բաղադրության մեջ ավելացավ քաղցրահամ միսը:

Յուան եւ Մին դինաստիաների օրոք փոխվեցին բրինձը վիաթաթող տերեւներու ու զոնգզիները նորից սկսեցին վիաթաթել եղեգի տերեւներով: Նորացված զոնգզիներն այժմ արդեն ավելի բազմազան են եւ դրանք ներկայանում են մաժուկով, խոզի մսով, կաղնու միջուկով, յույուբայով, ընկույզով եւ այլ տարատեսակ բաղադրիչներով: Ամեն տարի մայիսի 5-ին չինացիները թրջում են բրինձը, զոնգզիի համար լվանում են տերեւներն ու ճոխ ծեւավորումներ են անում: Զինաստանում զոնգզիներ ճաշակելու սվորույթը հազարավոր տարիների պատմություն ունի եւ այն տարածում է գտնել նաեւ Յյուսիսային Կորեայում, ճապոնիայում եւ Յարավ-արեւելյան Ասիայի մի շարք այլ երկրներում:

Ուելգար /Չնարակ/ (As2S2) / լիկյորը սպիտակ կամ դեղին բրնձից ու ռեալգարի փոշուց պատրաստած գինու մի տեսակ է, որը սովորաբար խմում են Վիշապանավակների վիառատոնի ժամանակ: Ավանդական չինական բժշկության մեջ այն օգտագործում են որպես հակաթույն, կամ միջատասպան միջոց: Յնում մարդիկ հավատացած էին, որ ջնարակով լիկյորը կարող է դուրս քշել չար ուժերն ու կանխել հիվանդությունները: Երկարատեւ կրվում, երբ մարդիկ պայքարում էին տարբեր հիվանդությունների դեմ, նրանք եկան այն եզրահանգման, որ լիկյորի հաճախակի օգտագործումն ու անուշահոտ փոքրիկ պարկեր կրելը կարող է հիվանդություններ կանխել: Այս անուշահոտ պարկերը դարձան չինական բժշկության հոտավետ մի մասնիկը, որի բարերար տարրերի շնորհիվ մարդու

մարմնում հղվում են ուղիներն ու արյունատար երակները՝ դարձնելով մարդուն ավելի առողջ: Ուալգարը /մկնդեղային սուլֆիդային հանքանցիւթ, որը հայտնի է նաեւ որպես «սուտակագույն ծծումբ» կամ «մկնդեղի սուտակ»/, ջրեղենախոտը եւ ծխախոտները յուրահատուկ հոտ ունեն, որոնք պաշտպանում են օձերից ու միջատներից: Այսպիսով, մենք ոչ միայն կարող ենք սպանել մանրէներն ու ազատվել ոտքերի տհաճ հոտից, այլեւ նրանց շնորհիվ կարող ենք թարմ ու առույգ մնալ:

Բացի զոնզգիից, որը հայտնի է ողջ Չինաստանուն, տարբեր շրջաններում կան ուրիշ ճոխ փառատոնային ուտեստներ:

Բրնձով օձաձկներ

Չինաստանի Ֆիհանթան հարթավայրի բնակչները Վիշապանավակների փառատոնին ուտում են բրնձով օձաձկներ: Դրանք միշտ յուղոտ, համեղ ու շատ սննդարար են:

Հովհարաձեւ հացեր

Գանսու նահանգի Մինցին քաղաքում Վիշապանավակների փառատոնի ժամանակ մարդիկ ուտում են հովհարաձեւ հացեր: Դրանք պատրաստում են այսուրից եւ հնգաշերտ հովհարի ծեւ տալով շոգեխաշում են: Ամեն մի շերտում մանրացրած բարակ բիբար են դնում: Յացի չորուկը զարդարում են գույնզգույն դեկորատիվ նախշերով: Ասում են, որ նմանօրինակ հացեր պատրաստելու ավանդույթը եկել է Վիշապանավակների փառատոնի ժամանակ հովհարներ պատրաստելու, վաճառելու ու նվիրելու սովորույթից:

Թեյով ներկված ձվեր

Ցզանսի նահանգի Նանչան քաղաքում, ինչպես նաեւ Յուբեյի որոշ վայրերում, մարդիկ Վիշապանավակների փառատոնը տոնում են թեյով ներկած ձվերով: Նրանք օգտագործում են հավի, բաղի եւ սագի ձվերը: Կարմիր ներկված ձվերը փաթաթում են գույնզգույն տոպրակների մեջ եւ կախում են երեխաների վզից՝ ցանկանալով նրանց հեռու պահել չար փորձանքներից:

Սիստոր ու ձվեր

Հենանում, Հուբեյում ու Չինաստանի մի շարք այլ նահանգներու տնային տնտեսութիմերը Վիշապանավակների փառատոնի օրը կանուխ են արթնանում: Նրանք ամբողջ ընտանիքի նախաճաշի համար սխտոր ու ձվեր են եփում: Որոշ վայրերում սխտորն ու ձվերը եփելիս մի քիչ ջրեղեգախոտ են ավելացնում:

Կաչուն բրնձե տորթեր

Վիշապանավակների փառատոնը Զիլին նահանգի կորեացի ժողովողի համար չափազանց արարողակարգային է: Այդ օրվա ամենաքննորոշ փառատոնային ուտեստը թարմ հոտով կաչուն բրնձե տորթն է: Մարդիկ ջրեղեգախոտն ու բրինձն իրար են խառնում եւ լցնում փայտե թորիծի մեջ: Այնուհետեւ այդ ամենը երկարակոր փայտե մուրճով թակում են: Այսօրինակ ուտեստը ազգային առանձնահատկություն ունի եւ բարձր տոնական մքնոլորտ է ապահովում:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳ

ՍԻՐԱՀԱՐՆԵՐԻ ՏՈՆԻ ՍՍՆԴԱԿԱՐԳԱՅԻՆ ՍՈՎՈՐՈՒՅԹԱՆԵՐԸ



Ամեն տարի լուսնային օրացույցով հուլիսի 7-ին Հան ազգության մարդիկ նշում են Սիրահարների տոնը: Այս տոնի գլխավոր մասնակիցներն աղջիկներն են, ուստի տոնը նաև անվանում են՝ «Երիտասարդ աղջիկների տոն» կամ «Դուստրերի տոն»: Չինական Սիրահարների տոնը չին ավանդական փառատոններից ամենառոմանտիկն է, եւ անցյալում այդ տոնն ավելի շատ արժեւորում էին աղջիկները: Սիրահարների տոնի գիշերն աղջիկները ցուցադրում են իրենց հմտություններն ու աղորում են լավ բախտի արժանանալու, երկար կյանք ունենալու, առողջ լինելու համար: Նրանք պատվում են Յոթերորդ փերի անունով աստծուն եւ շատ հաճախ նրանց աղոթքներն անկեղծ ու սրտաբուխ են լինում: Չինաստանի Սիրահարների տոնի փառատոնային քաղցրավենիքներից ամենահայտնին «ճկուն քաղցրանուշներ»-ն են: Այս քաղցրավենքի հիմնական բաղադրիչներն են՝ այուր, շաքարավազ ու քնջութ: Ճկուն քաղցրանուշները պատրաստվում են հետեւյալ կերպ: Նախ՝ տաք տապակի մեջ քաղցր շաքարավազ լցնել ու բովել այնքան, մինչեւ որ օշարակ ստացվի: Հետո ստացված զանգվածը խառնել այուրի եւ քնջութի հետ եւ դնելով տախտակի վրա՝ բարակ գրտնակել: Այնուհետեւ սառչելուց հետո դրանք դա-

ԴՈՆԳ ՔԻԱՆԳ

նակի օգնությամբ երկարավուն կտրատել: Երբեմն կարող եք դրանք ոլորելով տարբեր ձեւեր ստանալ: Վերջում անուշեղենը լցնում են յուղով լի տապակի մեջ ու տապակում են մինչեւ ոսկեգույն դաշնալը: Հմուտ աղջիկները կարող են այդ քաղցրանուշներին չինական հեքիաթների տարբեր մոդելների, որոնք այդ տոնին են վերաբերում, ձեւ հաղորդել:

Ունչենում այս տոնն աղջիկների մասնակցությամբ ու հատուկ աղջիկների համար շատ յուրահատուկ են նշում: Աղջիկները գինու գավաթների մեջ ածիկ եւ տարատեսակ ուտելիքներ են պատրաստում՝ վրան ծաղիկներ:

ԳԼՈՒԽ ՎԵՅ

ՄԻԶԱԾՆԱՍԱՅԻՆ ՓԱՌԱՏՈՒԻ ՍՆՆԴԱԿԱՐԳԱՅԻՆ ՍՈՎՈՐՈՒՅԹԱՆԵՐԸ

Լուսնային օրացույցով օգոստոսի տասնհինգին չինացիները տոնում են ավանդական տոներից մեկը՝ Միջաշնանային փառատոնը։ Այն հան ազգության չորս ավանդական փառատոներից մեկն է։ Լուսնին երկրպագելը Չինաստանի հին ավանդույթներից է։ Պատմական արձանագրություններով՝ դեռեւս Չժոու դինաստիայի ժամանակաշրջանում, Երջանկահիշատակ կայսրը գարնան գիշերահավասարին երկրպագում էր արեւը, ամռան արեւադարձին՝ հողը, աշնան գիշերահավասարին՝ լուսինը, իսկ ձմռան արեւադարձին զոհաբերություններ էր մատուցում աստծուն։ Պեկինում գտնվող լուսնի տաճարը մի վայր է, որը նախագծել են Մին եւ Ցին դինաստիաների կայսրերը՝ լուսնին նվիրաբերություններ մատուցելու համար։

Հնում հան ազգության ներկայացուցիչները Միջաշնանային փառատոնի ամենաշքեղ խնջույքներն անցկացնում էին պալատում։ Մին դինաստիայի օրոք ընդունված էր այդ տոնին պալատում ծովախեցգետիններ ընթրչնելը։ Նրանք ծովախեցգետինը փաթաթում



էին եղեգի տերեւներով, շոգեխաչում էին եւ մարդիկ իրար հետ միասին նստում ու վայելում էին դրանք՝ լիկյորով ու քացախով։ Ծովախեցգետիններ ճաշակելուց հետո նրանք խնում էին բույսերի տերեւներից պատրաստած ապուրը։ Ցին դինաստիայի ժամանակ նրանք առագաստակալի արեւելյան ծայրին միջնորմ էին ամրացնում՝ երկու կողմից զարդարելով այն աքաղաղի կատար ծաղիկներով, կոճողով, գետնանուշներով, գաղարներով ու լոտոսի արմատներով։ Միջնորմի առաջ դնում էին մի քառակուսի սեղան, որի վրա դրված էին լուսնաձեւ թխվածքներ, եւ դրա չորս կողմը զարդարում էին թագմազան թխվածքներով, սեխներով ու մրգերով։

Լուսնին մատաղ մատուցելուց հետո նրանք այդ լուսնաձեւ թխվածքները բաժանում էին ներկաներին: Արքունիքի բոլոր անդամները պետք է համտեսեին դրանցից, եւ նրանք դա անվանում էին «միասնության թխվածքներ ճաշակել»:

Գյուղական վայրերում մարդիկ ամեն Միջաշնանային փառատոնին, սովորության համաձայն՝ երկրպագում են լուսինը: Նրանք Լուսնային աստվածուհուն են նվիրաբերում իրենց պատրաստած լուսնաձեւ թխվածքները: Յետագայում մարդիկ վերջնականապես միացրեցին Միջաշնանային փառատոնին լուսինը վայելելու եւ լուսնաձեւ կարկանդակներ ընթացիչներու հաճույքն եւ ընդունեցին դա որպես խորհրդանշ՝ ողջ գերդաստանով հավաքվելու: Յետզիետեւ լուսնաձեւ թխուկները դարձան Միջաշնանային փառատոնի հիմնական նվերը:

Ցին դինաստիայի ժամանակաշրջանում լուսնաձեւ թխվածքարլիքներ ուտելը համատարած սովորույթ դարձավ եւ դրանց պատրաստման եղանակներն ավելի բարդացան ու կատարելագործվեցին: Ուսումնասիրելով պատմությունը՝ նկատում ենք, որ Չինաստանում արդեն իսկ առկա էին հինգ համային կատեգորիաներ՝ Զինգ, Զին, Սու, Գուանգ եւ Չաո: Իսկ ինչ վերաբերում է նվիրաբերություններին, Լուսնին ու լուսինը վայելելուն, ապա Չանջյան գետի հարավային մասում արդեն իսկ գոյություն ունեին բազմաթիվ տեղային սովորույթներ, ինչպես, օրինակ՝ «գուշակիր, թե ով է համար մեկ գիտակը» եւ այլն: Նրանք լուսնաձեւ թխվածքը բաժանում էին երեք մասի՝ մեծ, միջին ու փոքր. մեծ կտորը դնում էին մեկ թվանշանի կողքին, միջինը՝ երկու թվանշանի, իսկ փոքրը՝ երեք թվանշանի կողքին: Յետո ընտանիքներով իրար հետ զառ էին խաղում եւ վերջում ի մի էին բերում արդյունքները: Այն ընտանիքը, որն ամենաշատ միավորներն էր հավաքում, դառնում էր համար մեկ գիտակը, ստանալով մեծ կտորը, հաջորդ բարձր միավորներ գրանցած ընտանիքն արժանանում էր երկրորդ մրցանակին՝ միջին կտորին, իսկ ամենաքիչ միավորներ վաստակած ընտանիքը հավակնում էր երրորդ տեղին՝ ստանալով ամենափոքր կտորը:

Մեր օրերում լուսնի տակ խաղալու սովորույթը այնքան հայտնի չէ, ինչպես հին ժամանակներում: Բայց մինչ օրս ընդունված է խնջույքներ կագմակերպել ու հիասքանչ լիալուսինն ընթացինել: Մարդիկ գինով լի գավաքները ձեռքին փառաբանում են իրենց սքանչելի լուսնին, տոնում են իրենց գեղեցիկ կյանքը, կամ օրինում են իրենց հեռավոր ազգականներին, ընկերներին՝ մաղթելով նրանց առողջություն ու երջանկություն:

ԳԼՈՒԽ ՅՈԹ

ԿՐԿՆԱԿԻ ԻՆՆԵՐՈՐԴ ՓԱՌԱՏՈՆԻ ՍՆՍԴԱԿԱՐԳԱՅԻՆ ՍՈՎՈՐՈՒՅԹԱՆԵՐԸ

Չինաստանում լուսնային օրացույցով սեպտեմբերի ինը նշվում է որպես Կրկնակի իններորդ փառատոն եւ հայտնի է նաեւ մեկ այլ՝ «Երեցների փառատոն» անվամբ: Ինչպես հիշատակվում է Այ Չինգ գրքում՝ վեցը լուսնային թիվ է, իսկ ինը՝ արեգակնային: Սեպտեմբերի ինը այն օրն է, երբ եւ ամիսը, եւ օրը նույն թիվն ունեն /իններորդ ամսվա իններորդ օր/: Այդ երկուսն արեգակնային են, երկուսն էլ ինն են, ուստի այս օրը կոչվում է «Կրկնակի իններորդ փառատոն» կամ «Կրկնակի արեգակնային փառատոն»: Զեւավորվելով Պատերազմող Երկրների ժամանակաշրջանում՝ Թան դինաստիայի օրոք այն պաշտոնապես հոչակվեց որպես ազգային փառատոն: Այն ժամանակից մինչ օրս այդ տոնը շարունակում է զարգանալ: Կրկնակի իններորդ փառատոնին, սովորության համաձայն՝ ոսկեծաղկի գինի են խնում: Ոսկեծաղկի գինին երջանկաբեր գինի է համարվում, որը պետք է խմել Կրկնակի իններորդ փառատոնի ժամանակ՝ դժբախտություններից ազատվելու, ծախորդությունները կանխելու, ինչպես նաեւ լավ բախտի արժանանալու համար: Յնում ոսկեծաղկի գինին պատրաստում էին նախապես՝ խմելուց մեկ տարի առաջ, եւ մարդիկ մեկ ուրիշ շիշ էլ պատրաստում էին խմելուց հետո՝ գալիք տարվա տոնի համար: Սեպտեմբերի 9-ին նրանք ընտրում էին ոսկեծաղկի կոկոններն ու կանաչ տերեւները եւ խառնում էին բրնձի հետ, այնուհետեւ այդ զանգվածից գինի էին պատրաստում ու մթերում, որպեսզի մյուս տարվա սեպտեմբերի 9-ի տոնի առիթով խմեն: Ասում են, որ գինու այս տեսակը կարող է երկարացնել կյանքն ու բարելավել առողջությունը: Բժշկագիտության տեսանկյունից ոսկեծաղկի գինին ունի տեսողությունը բարելավելու, գլխապտույտը բուժելու, արյան ճնշումը իջեցնելու, քաշը նվազեցնելու, մաշկը հարթելու, յարդը սնուցելու, աղիքներն ու ստամոքսը հանգստացնելու եւ արյունը հարստացնելու հատկությունները: Կրկնակի իններորդ փառատոնին ոսկեծաղկի, եգիպտացորենի գինիներ օգտագործելուց ու ոսկեծաղկից պատրաստած այլ ուտեսաներից բացի, կա նաեւ մեկ այլ դիետիկ սովորույթ՝ թխվածքներ ուտելը: Յյուսիսային տարածաշրջանում Կրկնակի իններորդ փառատոնին թխվածքներ ճաշակելն ավելի մեծ տարածում ունի: Կրկնակի իններորդ փառատոնի տորթերին նաեւ կոչում են

«ոսկեծաղկով տորթեր», «հնգագույն տորթեր» եւ այլն։ Դրանք պատրաստելու համար ոչ մի առանձնահատուկ պահանջ չկա, եւ կարող եք պատրաստել այնպես, ինչպես կամենաք։ Սեպտեմբերի 9-ի լուսաբացին մարդիկ իրենց երեխաների ճակատին տորթ են քսում ու բարեմաղբանքներ ասում, պարզապես ցանկանալով իրենց երեխաներին բարի բախտ եւ որ ամեն ինչ նրանց կյանքում հարթ ընթանա։ Որոշ մարդիկ Կրկնակի իններորդ տորթի վրա դնում են փոքր կարմիր դրոշակ եւ մոմեր են վառում։ Այն նաեւ խորհրդանշուն է հաջողություն, կրկնելով այն նույն չինարեն բառերի արտասանությունը, ինչպես՝ «ավելի բարձր մագլցել»։



1989 թվականին Չինաստանը Կրկնակի իններորդ փառատոնը հոչակեց որպես Մեծահասակների տոն։ Սեպտեմբերի 9-ին տարբեր շրջաններում մեծահասակների համար կազմակերպում են լեռնարշավներ՝ մեծահասակների մտահորիզոնն ընդլայնելու, ճանապարհորդությունից ստացած տպավորություններով միմյանց հետ կիսվելու, ֆիզիկական վարժություններ կատարելու, բնության նկատմամբ սեր տածելու, ինչպես նաեւ ժողովրդի հանդեպ ավելի խոր սեր ունենալու նկատառումով։ Կրկնակի իններորդ փառատոնը տարվա հենց այն ժամանակաշրջանում է, երբ Շենսիի հյուսիսային մասի բնակիչները վայելում են իրենց ցանած բերքի պտուղները։ Կրկնակի իններորդ փառատոնի գիշերը Շենսիի հյուսիսային մասի բնակիչները զվարճալի տոնախմբություններ են կազմակերպում։ Մինչեւ լուսաբաց նրանք իրենց ամբողջ հունձը պետք է վերջացրած լինեն։ Գիշերը, երբ լուսինը հասնում է բլրի կատարին, մարդիկ ոչխարի մասով արիշտաներ են պատրաստում։ Ընթրիքից հետո նրանք երկու-երկու կամ երեք-երեք դուրս են գալիս իրենց տներից, բարձրանում են մոտակա բլրի գագաթը, կրակ են անում եւ մինչեւ աքլորականչ զրուցում են իրար հետ։ Գիշերը լեռներ բարձրանալիս շատերն իրենց հետ ոսկեծաղկով պսակներ են տանում եւ տուն վերադառնալիս դնում են իրենց դուստրերի գլխին՝ չար ոգիներին ետ մղելու համար։

սիի հյուսիսային մասի բնակիչները վայելում են իրենց ցանած բերքի պտուղները։ Կրկնակի իններորդ փառատոնի գիշերը Շենսիի հյուսիսային մասի բնակիչները զվարճալի տոնախմբություններ են կազմակերպում։ Մինչեւ լուսաբաց նրանք ամբողջ հունձը պետք է վերջացրած լինեն։ Գիշերը, երբ լուսինը հասնում է բլրի կատարին, մարդիկ ոչխարի մասով արիշտաներ են պատրաստում։ Ընթրիքից հետո նրանք երկու-երկու կամ երեք-երեք դուրս են գալիս իրենց տներից, բարձրանում են մոտակա բլրի գագաթը, կրակ են անում եւ մինչեւ աքլորականչ զրուցում են իրար հետ։ Գիշերը լեռներ բարձրանալիս շատերն իրենց հետ ոսկեծաղկով պսակներ են տանում եւ տուն վերադառնալիս դնում են իրենց դուստրերի գլխին՝ չար ոգիներին ետ մղելու համար։

Շանդուն նահանգի հյուսիսային մասում մարդիկ Կրկնակի իններորդ փառատոնի օրը պատրաստում են բողկի ապուր, ինչպես ասացվածքում է ասվում՝ «Բողկի ապուր ուտելով՝ ամբողջ ընտանիքը չի տառապի»: Յուան քաղաքի բնակչությունը Կրկնակի իններորդ փառատոնն անվանում է հարստության աստծո ծննդյան օր: Այնտեղ բոլոր ընտանիքները նրբարձրներ են պատրաստում եւ երկրպագում են հարստության աստծուն: Չոփինգում մարդիկ Կրկնակի իններորդ փառատոնի օրը Ֆան ժոնգանին զոհաբերություններ են մատուցում: Յնում ներկատներն ու գինետները սեպտեմբերի 9-ին նույնպես երկրպագում էին սպասքեղենի աստծուն: Դեն-ժոույում ամուսնությունից հետո երեք տարի աղջիկները չեն կարող այցելել իրենց մայրերին, քանի որ նման մի ասացվածք կա. «Վերադառնալն ու Կրկնակի իններորդ փառատոնին ընտանիքի հետ զվարճանալը հարազատներից մեկի կյանքի վախճանը կլինի»:

Նանկինում ընտանիքները հինգ գույնզգույն թղթե կախազարդ են պատրաստում եւ դրոշակաների պես կախում են իրենց բակում: Ուսի գավառում մարդիկ Կրկնակի իններորդ փառատոնին ճաշակում են Կրկնակի իններորդ տորթեր եւ ինը միրգ-քոնչի:

Շառսինում մարդիկ Կրկնակի իններորդ փառատոնի օրը այցելում են միմյանց միայն այն դեպքում, եթե տանտերը վերջերս է կորցրել իր ազգականին, այնուհետեւ նրանք գնում եւ իրար հետ լաց են լինում: Թոնզլու քաղաքի բնակիչներն իրենց նախնիներին պատվելու համար ոչխարի ու խոզի մսից ուտեստներ են պատրաստում: Նրանք դրան տալիս են «Աշունը երկրպագելու» անվանումը: Միեւնույն ժամանակ նրանք Կրկնակի իններորդ փառատոնի համար գրնզգի են պատրաստում եւ որպես ընծա՛ իրար նվիրում: Նրանք դա անվանում են «Կրկնակի իններորդ զոնզգի»:

Յուբեյում մարդիկ Կրկնակի իններորդ փառատոնի առթիվ գինի են պատրաստում: Ասում են, որ այդ գինին շատ նուրբ ու թեթև է լինում եւ երկար ժամանակ չի փշանում: Յինգշենի շրջանում Կրկնակի իններորդ փառատոնը մարդկանց համար իրենց տված խոստումները կատարելու օրն է: Այդ օրը բոլոր ընտանիքները տաճար են գնում աստծուն երկրպագելու համար: Ֆուցյան նահանգի Չանտինգ քաղաքում մարդիկ իրենց դաշտերից կանաչ սոյայի հատիկներ են հավաքում եւ նվիրում իրենց ընկերներին ու բարեկամներին: Նրանք դա անվանում են Կանաչ սոյայի փառատոն: Յեյչենգում մարդիկ Կրկնակի իններորդ փառատոնին օդապարուկներ են թոցնում:

ԳԼՈՒԽ ՈՒԹ

ԶՄԵՌԱՅԻՆ ԱՐԵՎԱԴԱՐՁԻ ՓԱՌԱՏՈՆԻ ՍՆՆԴԿԱՐԳԱՅԻՆ ՍՈՎՈՐՈՒՅԹԸՆԵՐԸ

Զմեռային արեւադարձը չինական լուսնային օրացույցում կարեւորագույն օր է, որը համընկնում է ավանդական փառատոնի հետ: Դեռևս 2500 տարի առաջ չինացիները նեֆրիտ փոքրիկ տախտակներ էին օգտագործում արեգակին հետեւելու եւ ձմեռային արեւադարձը նշան անելու համար, որը 24 արեգակնային փուլերի /օր՝ գիշերահավասար/ միջից ամենավաղ հայտնաբերվածն է: Դա լուսնային օրացույցով դեկտեմբերի 21-ից մինչեւ դեկտեմբերի 23-ը ընկած ժամանակահատվածն է:



Զմեռային արեւադարձի փառատոնի կերակուրներն իրենցում ձմեռային հատկություններ են պարունակում: Վաղ անցյալում, Պեկինում ասում էին. «Վոնտոնները /աղացած խոզի մսով լցոնված խնորագնդիկներ/ ձմռան արեւադարձին, արիշտաները՝ ամռան»: Յյուսիսային մասում Զմեռային արեւադարձի փառատոնի օրը շատերը նախընտրում են ուտել շան, ոչխարի միս եւ տարատեսակ սննդարար կերակուրներ, որպեսզի գալիք տարին նրանց համար արգասաբեր լինի: Յարավային շրջանում մարդիկ սիրում են ձմեռային արեւադարձին ընտանիքով միասին հավաքվել եւ կարմիր լոբով բրինձ ճաշակել:

Սինսիայի ինքնավար մարզում

մարդիկ նախընտրում են ուտել ջիաոզիներով ոչխարի ապուր: Նրանք նույնիսկ այդ ոչխարի ապուրին հատուկ անուն են տալիս՝ գլուխ: Ֆուցգյանում մարդիկ Զմեռային արեւադարձի փառատոնի օրը բրնձով գնդիկներ են ուտում: Չառշանի շրջանի շատ քաղաքներում նրանք համաննանք բարեկ ունեն, ինչպես՝ նախնիներին երկրպագել, քաղցր գնդիկներ ու-

տել, գերեզմաններ մաքրել եւ այլն: Ընդհանրապես Շառուինի ժողովուրդը գինին նախքան Զմեռային արեւադարձի փառատոնն է պատրաստում: Նրանք դրան ծնորան գինի են ասում: Այդ գինին անուշահոտ ու բարձրակարգ է եւ լավ է պահպանվում:

Հյուսիսում ժողովուրդը Զմեռային արեւադարձին հաճույքով կաղամք է մարինացնում, որը կարող են ճաշակել Գարնանային փառատոնին կամ ավելի ուշ: Հարավային շրջանում մարդիկ Զմեռային արեւադարձին ձուկ կամ միս ապհատելու սովորություն ունեն: Զմեռային արեւադարձից հետո թեւակոխում է ավելի ցուրտ ժամանակաշրջան, ուստի աղի սնունդ պատրաստելու ճիշտ ժամանակն է: Պատճառներից մեկն էլ այն է, որ այս մթերքները հեշտ է պահպանել՝ շնորհիվ դրանց աղիության, եւ բացի այդ, դրանք խոզապուխտի համ ունեն:

ԳԼՈՒԽ ԻՆՆ

ԼԱԲԱ ՓԱՌԱՏՈՆԻ ՍՍՆԴԱԿԱՐԳԱՅԻՆ ՍՈՎՈՐՈՒՅԹԱԾԵՐԸ

Լաբա փառատոնը նշելը կապված է բավական հին սովորույթի հետ: Զինացիները դա անվանում են նաեւ «Լաբա զոհաբերություն» կամ «Բուղդիզմի հաջողակ օր»: Զինատանում ամեն դեկտեմբերի Լա ամիս է եւ դեկտեմբերի 8-ը կոչվում է Լաբա: Յնում նրանք դա անվանում էին նաեւ Լա օր, սակայն մենք նախընտրում ենք Լաբա անվանել:

Լաբա փառատոնի ժամանակ մարդիկ երկրպագում են իրենց նախնիներին եւ աստվածներին՝ հայցելով առատ բերք ու երջանկություն: Նաեւ մարդիկ կատարում են հատուկ մի արարողակարգ, որի նպատակը չար ոգիները քշելն ու հիվանդություններից ձերբազատվելն է: Նախապատմական ժամանակաշրջանում թմբուկներ զարկելը բուժական նպատակ էր հետապնդում, քանի որ այն հիվանդությունները բուժելու համար քշում էր չար ոգիները: Այս հնարքի կիրառումը այսօր էլ կարելի է տեսնել Յունանի որոշ շրջաններում, օրինակ՝ Սինհիուայում: Ասում են, որ դեկտեմբերի 8-ը նաեւ այն օրն է, երբ բուղդիզմի հիմնադիր Շաքիանունին աստված դարձավ: Այսպիսով, սեպտեմբերի 8-ը դարձել է բուղդայականների փառատոն եւ այն կոչվում է «բուղդայական հաջող օր»: Լաբա փառատոնի ավանդական ուտեստը Լաբա քոնջին է /ընկույզով ու չորացրած մրգերով քոնջի/, որը նաեւ կոչվում է «յորգանձ-հինգ-համ քոնջի»: Լաբա քոնջի ուտելու սովորույթը փոխանցվել է Սուն դինաստիայից: Ամեն տարի դեկտեմբերի 8-ին, անկախ սոցիալական պատկանելությունից, բոլորը պետք է լաբա քոնջի պատրաստեն: Ցին դինաստիայի ժամանակ լաբա քոնջի պատրաստելու ավանդույթը ավելի ու ավելի նոր բափ ստացավ: Աղքունիքում կայսրը, կայսրուհին ու նրանց



Երեխաներն իրենց նախարարներին, ուղեկցողներին ու աղախիններին լաբա քոնջի էին ուղարկում, եւ բոլոր տաճարներին բրինձ ու նրգեր էին նվիրաբերում: Ծայրամասերում նույնպես բոլոր ընտանիքները լաբա քոնջի էին պատրաստում՝ իրենց նախմիներին երկրպագելու համար: Միեւնույն ժամանակ ողջ ընտանիքը միասին հավաքվում ու ճաշում էր: Ավելի ուշ նրանք այդ ուտելիքներից բաժին էին հանում իրենց ազգականներին ու ընկերներին եւ որպես նվեր էին ուղարկում: Մին դիմաստիայի մասին պատմող մի գրքում արձանագրված է. «Մին դիմաստիայի պալատում մարդիկ կարմիր արմավներ էին քաղում եւ դեկտեմբերի 8-ից մի քանի օր առաջ նախապես ջրում թրջոց էին դնում: Դեկտեմբերի 8-ի առավոտյան նրանք այդ արմավները, իղկված բրինձը, գինգկոն /բույսի անուն/՝ թրթուրի սերմը եւ շագանակները միասին խառնում, եփում ու դնում էին աստծոն հուշատախտակի առաջ: Յետո նրանք այդ քոնջին տանում էին իրենց տները ու դնում ամենուր, ուր որ պատահեր՝ բակում, խոհանոցում, հյուրասենյակում»: Այսօր էլ լաբա քոնջին դեկտեմբերի 8-ի գլխավոր զարդն է համարվում: Բրնձի հետ խառնվող բաղադրիչներն այնքան բազմազան են՝ կարմիր արմավներ, լոտոսի սերմեր, ընկույզներ, շագանակներ, նուշ, կաղին, խաղող, գինգկո, ջրաշագանակ, կանաչ լոբի, կարմիր լոբի, վարդ, գետնանուշ եւ այլն՝ ներառելով ավելի քան 20 բաղադրիչ: Երբ ջուրը եռում է, այդ բոլոր բաղադրիչները թույլ կրակի վրա շղթիսաշում են: Ամբողջ գիշեր թողնում են մարմանդ կրակին, իսկ առավոտյան այն պատրաստ է ուտելու համար: Որոշ ընտանիքներում, որոնք ամենայն զգուշությամբ հետեւում են ավանդույթներին, մրգերին տարբեր ձեւեր են տալիս, ինչպես, օրինակ՝ կենդանիների, մարդկանց ու ծաղկների:

Տյանցգինում ու Պեկինում Լաբա քոնջին միանման են պատրաստում: Մարդիկ մեծ ճշգրտությամբ են բաղադրիչներ ավելացնում: Լաբա քոնջին հաճելի համ ու հոտ հաղորդելու, ինչպես նաև գունավետ տեսք հաղորդելու համար հարկավոր է լոտոսի սերմ, շուշան, գարի, կեղեւահան բրինձ, կազուն դեղին բրինձ, կանաչ լոբի, լոնգամի պտղամիս, գինգկո, կարմիր արմավ, քաղցր օսմանթուս: Վերջին տարիներին որոշ շրջաններում քոնջիի մեջ ավելացնում են նաև սեւ բրինձ: Շանդունում լաբա քոնջիի պատրաստման երկու եղանակ կա: Մեկը պատրաստում են՝ կեղեւահան բրնձով, լոնգամով, լոտոսով, շուշանով, շագանակով, կարմիր արմավով եւ այլ բաղադրիչներով: Մատուցելուց առաջ լաբա քոնջին ձեւավորում են մրգերով: Այս տեսակ քոնջին պատրաստում են հյուրերի եւ ընտանիքի անդամների համար: Մյուս տեսակը պատրաստում են բրնձով, մսով, կտրատած կաղամբով, տոֆույով ու այլ բաղադրիչներով՝ հիմնականում ծառաների համար: Ինչ վերաբերում է սննդառական հատկություններին,

Լաբա քոնջին բարերար ազդեցություն ունի երիկամների վրա: Այն խթանում է ախտրժակը, օգնում է սնուցել կենսական օրգանները, լավացնում է սրտամկանի աշխատանքն ու կարգավորում է արյան շրջանառությունը: Բացի դրամից, այն կարող է տաքացնել մարդկանց: Այդ իսկ պատճառով դարերից եկած ու մինչ օրս գոյություն ունեցող Լաբա քոնջին, իրոք, հրաշալի սննդարար կերակուր է հատկապես ձմռանը:

Լաբա քոնջի պատրաստելուց բացի, Զինաստանի հյուսիսի բնակիչները նաեւ սխտորը քացախի մեջ ընկղմելու սովորություն ունեն: Նրանք դա «լաբա սխտոր» են անվանում: Լաբա սխտոր պատրաստելու համար նրանք ընտրում են մանուշակագույն կեղեւով սխտորները, այնուհետեւ հեռացնում են կեղեւը եւ, մինչ փոքր կարասի մեջ լցնելն ու բերանը փակելը, սխտորներն ընկղմում են բրնձի քացախի մեջ: Մինչեւ Նոր տարի նրանք այդ կարասը չեն բացում: Այդ ժամանակ ջիազգի ուտելիս այն լավագույն թարմ ու կանաչ համեմունքն է: Նաեւ կարող եք այն համադրել սառը խորտիկների հետ: Լաբա սխտորն իսկապես յուրահատուկ համ ունի:

Լաբա քոնջից բացի Յի նահանգում պատրաստում են նաեւ Լաբա տոֆու: Լուսնային օրացույցով դեկտեմբերի 8-ին՝ Գարնանային փառատոնից առաջ, Յի նահանգի ընտանիքները մի քիչ տոֆու են դուրս տանում ու դնում արեւի տակ: Նրանք այս տեսակ տոֆուն Լաբա տոֆու են անվանում: Զինաստանի հյուսիսային մասի որոշ հատվածներում մարդիկ Լաբա արիշտաներ են ուտում: Բրնձով սակավ որոշ վայրերում, մարդիկ Լաբա քոնջի չեն պատրաստում: Փոխարենը նրանք դեկտեմբերի 8-ի նախորդ օրը պատրաստում են արիշտաներ, որոնց հետ խառնում են մրգերի ու բանջարեղենի զանազան տեսակներ: Դեկտեմբերի 8-ի առավոտյան նրանք իրենց ընտանիքի անդամների հետ վայելում են այդ հրաշալի Լաբա արիշտաները:

ՄԱՍ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԶԻՆԱՍՏԱՆՈՒՄ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԱՇԱՏԵՍԱԿՆԵՐ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ԶԵՎԵՐՈԾ

Պատրաստելու տարբեր եղանակներ կան: Յիմնական վեց մեթոդները, որոնց նաեւ ասում են «ջեռացման վեց տեխնիկաներ», հետեւյալն են՝ ձեռքում խաղացնելով տապակում, խորը տապակում, եռացում, հասարակ տապակում, շոգեխաշում եւ խորովում: Յիմնական խոհանոցում այս վեց խոհարարական մեթոդներն իրար փոխլրացնում են՝ առաջացնելով բարդ ջեռացմող տեխնիկա: Որոշ վիճակագրության համաձայն՝ ճաշ պատրաստելու մեթոդները կարող են բաժանվել ավելի քան դասերի եւ հարյուրից ավել տեսակների: Ըստ տարբեր ջերմային աղբյուրների ու ջերմափոխանցման միջոցների՝ կերակրատեսակների պատրաստման տեխնիկան ընդհանուր առնամբ կարելի է հիմնադրամական բաժանել, ներառյալ՝ ջրառացում, յուղի մեջ տապակում, շոգեխաշում, ջեռոցում թխում եւ այլն:

ԳԼՈՒԽ ՄԵԿ

ԶԵՌՔԻ ՄԵԶ ԽԱՂԱՑՆԵԼՈՎ ՏԱՊԱԿԵԼԸ

Դասական չինական կերակրատեսակներ պատրաստելու կարեւորագույն մեթոդը ձեռքի մեջ խաղացնելով տապակելու հմտությունն է, այն ներկայումս ամենաշատն է տարածված: Կերակրության ջերմությունը փոխանցելու հիմնական միջոցը յուղն է համարվում: Ձեռքի մեջ խաղացնելով տապակելն այն ձեւն է, երբ օգտագործում են միջին կամ բարձր ջերմաստիճանի կրակ՝ բաղադրիչները կարծ ժամանակում տաքացնելու կամ եփելու համար: Այն լայնորեն կիրառվում է կենդանական ու բուսական ծագման սննդամթերքներ պատրաստելիս, հատկապես այս մեթոդի շնորհիվ պահպանվում է վիտամին C-ն: Օգտագործելով բարձր ջերմաստիճան սնունդն արագ տապակելու համար՝ 60-80 տոկոսով պահպանվում է վիտամին C-ն: Արագ տապակելիս թավայի մեջ մի քիչ յուղ են լցնում եւ բարձր ջերմաստիճանի ներքո արագ տապակում են: Այս գործընթացի ժամանակ բաղադրիչները պետք է անընդհատ շարժման մեջ գտնվեն: Այսպես միսն ավելի հյուրեղ է ստացվում, իսկ բանջարեղենը՝ թարմ ու փխուն:

Չեզքի մեջ խաղացնելով տապակելու ծեւերը բաժանվում են հետեւյալ խմբերի՝ նորմալ արագատապակում, կիսաեփ արագատապակում, չոր արագատապակում, թաց արագատապակում, խորը արագատապակում, խառնելով արագատապակում եւ այլն: Խոկ այժմ մանրամասնենք:

Նորմալ արագատապակնան համար հարկավոր է ընտրել այնպիսի մթերքներ, որոնք տապակին չկացեն: Նախ՝ հիմնական բաղադրիչները տեղավորել թափայի մեջ, եփել այնքան ժամանակ, մինչեւ որ 50-60 տոկոսով եփվեն, այնուհետեւ դրանց վրա ավելացնել մյուս բաղադրիչները: Կարեւոր է հիշել, որ եթե բաղադրիչները հեշտ չեն եփվում, ապա պետք է դրանք եփել հենց սկզբից՝ հիմնական մթերքների հետ: Եթե բաղադրիչները հեշտությամբ են եփվում, ապա դրանք կարելի է ավելի ուշ ավելացնել: Որից հետո ավելացվում են համեմունքներն ու շարունակում եփել: Եթե արդեն ուտելի լինի, այն պատրաստ է: Այս տեսակ պատրաստումը պահպանում է սննդի թարմությունը եւ դրա հետ օգտագործում են փոքր քանակությամբ սոուս կամ ապուր:

Կիսաեփ արագատապակումը պատրաստման այն եղանակն է, եթե տապակի միջի բաղադրիչները կիսաեփ են եւ մանր կտրատված: Դրա պատրաստման համար հարկավոր է թափայի մեջ քիչ յուր լցնել եւ ավելացնել մանր կտրտած բաղադրիչները: Կարծ ժամանակով եփել, որից հետո ավելացնել համեմունքներ եւ այլ բաղադրիչներ: Ուշադրություն դարձնել թափայի միջի բաղադրիչների հավասարաչափ խառնելուն ու տարածվելուն:

Չոր արագատապակման, կամ ինչպես ընդունված է ասել՝ չափազանց տաք արագ տապակման մեթոդը կայանում է նրանում, որ մթերքները տապակվում են կարծ ժամանակում՝ քիչ քանակությամբ յուղով եւ շատ բարձր ջերմաստիճանի ներքո: Սովորաբար նրա բաղադրիչները լինում են փոքր ու կոշտ: Չոր տապակման համար հարկավոր է շատ քիչ ժամանակ եւ սնունդը պետք է կրակի վրա անընդհատ պտտեցվի: Գոյություն ունի չորս սահմանափակում. բաղադրիչները չպետք է աղի լինեն, մածուկ կամ սուաչ չպետք է օգտագործվի, յուղը պետք է շատ չլինի եւ եգիպտացորենի օսլայի ու ջրի խառնուրդ չպետք է օգտագործվի: Չոր տապակման ընթացքում հաճախ ձեռքի մեջ



թավան խաղացնելով՝ արագորեն շրջում ենք բաղադրիչները, որպեսզի խոնավությունը ներսում մնա եւ մթերքների բարմությունն ու փխրունությունը պահպանվի: Այս մեթոդի եռթյունը կայանում է նրանում, որ ավելի շատ ժամանակ են հատկացնում, որպեսզի նրա միջի ջուրը գոլորշիանա, ինչը ավելի բուրումնավետ ու փխրուն է դարձնում ուտեստը եւ պահպանում է մթերքների յուրօրինակ համն ու հոտը:

Խոնավ արագատապակման ժամանակ սկզբում լավ թակած բաղադրիչների վրա մի քիչ յուղ են լցնում եւ դրանք օսլայում, այնուհետեւ դրանք դնում են քիչ յուղ լցրած կաթսայի մեջ եւ բարձր ջերմաստիճանի ներքո արագ-արագ շրջում: Վերջում դրա վրա մի քիչ արգանակ են ավելացնում, եւ ուտեստը պատրաստ է: Կարեւոր է, որ բաղադրիչները օսլայի շերտով պատվեն մինչ կաթսայի մեջ դրանք շրջելը, եւ հարկավոր է հիմնականում օգտագործել թարմ կենդանական ծագման մթերքներ: Այս մեթոդի կիրառումը թույլ է տալիս հեշտությամբ ազատվել անդուր հոտից, ընդգծել յուղի հոտը եւ սնունդը դարձնել հյութեղ, նուրբ ու փափուկ:

Խորը արագատապակումը պատրաստման այն եղանակն է, երբ նախապես մարինացվում են բաղադրիչները եւ ապա, կախված սննդի առանձնահատկություններից, կարող եք ուղղակիորեն լավ տապակել կամ այսուրի մեջ թաթախել ու տապակել, կամ դրանք մածուկ դարձնել ու լավ տապակել: Այնուհետեւ դրանց վրա ավելացնում են մի քիչ թափանցիկ հյութ կամ օսլայաշատ սոուս, եւ ուտեստը պատրաստ է: Այս հյութը ներծծվում է բաղադրիչների մեջ, եւ սնունդն ավելի փխրուն ու համեղ է դարձնում:

Խառնելով արագատապակումը տապակման այն ձեւն է, երբ բաղադրիչներին ավելացնում են որոշ հեղուկներ, ինչպես, օրինակ՝ կաթ, եւ դրանք միասին խառնում են: Եւս մի տարբերակ կարելի է մածուկ պատրաստել՝ բաղադրիչները հավասարապես խառնելով մի փոքր ջրի կամ արգանակի հետ, տաքացնել եւ եփել ցածր կամ միջին ջերմաստիճանի կրակի վրա: Վերջում ուտեստը պատրաստ է: Եթե բանջարեղենով ձվածեղ եք նախըտրում, ապա կարող եք ձուն հարել եւ ավելացնել մնացած բաղադրիչները՝ առանց յուղ ավելացնելու: Կարող եք օգտագործել օսլայածուր կամ սոուս, որպեսզի բաղադրիչները ուտեստի մեջ խտացվեն: Այս եղանակը կարելի է նաեւ «ջրապատրաստում» անվանել: Այս եղանակով բաղադրիչները ներծծում են օսլայի կամ սոուսի համը: Դրա չորուկը այրված է, մինչդեռ ներսից այն փափուկ է եւ հաճելի սուր հոտ ունի:

ԳԼՈՒԽ ԵՐԿՈՒ

ՇՈԳԵԽԱԾՈՒՄ



Շոգեխաշումը շոգու տարբեր ջերմանակարդակներում խաշելն է: Խեցե ամանների ի հայտ գալուց ի վեր չինացիների նախնիները հայտնաբերեցին շոգեկաթսաները, ինչը վկայում է այն մասին, որ չորս կամ հինգ հազար տարի առաջ

մարդիկ գոլորշին որպես տաքացման միջոց էին օգտագործում՝ սնունդը շոգեխաշելու համար: Պատմությունից հայտնի է մարդկանց՝ ձուկ, հավ եւ այլ մթերքներ շոգեխաշելու մեթոդների մասին: Սուն դիմաստիայից հետո մեկը մյուսի ետեւից ի հայտ եկան շոգեխաշման այնպիսի եղանակներ, ինչպիսիք են գինով շոգեխաշումն ու փաթաթված բաղադրիչներով շոգեխաշումը: Մին եւ Ցին դիմաստիաներից հետո լայն տարածում գտավ ալյուրով շոգեխաշումը:

Շոգեխաշած ուտեստը, շնորհիվ նրանում առկա խոնավության, ամբողջովին պահպանում է իր ձեւը, համն ու հոտը: Այն նաև պահպանում է սննդամթերքում եղած սննդարար նյութերը: Քանի որ շոգեխաշման հիմնական միջոցը ջուրն է, շոգեխաշելիս սնունդը չի ջրազրկվում եւ եփված վիճակում այն համեղ է, նուրբ ու փափուկ: Այս եղանակով կարելի է շատ մթերքներ եփել, սակայն հիմնականում շոգեխաշում են մսեղենը՝ հավ, բար, ձուկ, ծովախնեգետին, որոշ կոշտ բանջարեղեն՝ ծովավարունգ եւ թարմ խմորային զանգվածներ:

Շոգեխաշուկները մեծ պահանջարկ ունեն: Դրանք պատրաստելու համար հարկավոր է մեծ ուշադրություն դարձնել մթերքների որակին, համոզվելու համար, որ դրանք թարմ են եւ անուշ են բուրում: Շոգեխաշման ընթացքին հետեւելը նույնպես կարեւոր է: Չի կարելի շոգեխաշել շատ կարծ կամ շատ երկար ժամանակահատվածում: Ընդհանրապես շոգե-

խաշելիս կրակը պետք է թեժ լինի, սակայն նուրբ մթերքների դեպքում պետք է պատրաստել միջին կամ ցածր ջերմատիճանի տակ:

Ծոգեխաշման բազում մեթոդներից ելնելով՝ սովորաբար շոգեխաշուկ-ները բաժանում են մի քանի տիպի՝ թափանցիկ ապուրի մեջ շոգեխաշում, այսուրով շոգեխաշում, փաթաթած մթերքների շոգեխաշում, գինով շոգե-խաշում, գունավոր ու նախշազարդ մթերքների շոգեխաշում, պտղա-բա-ժակներով շոգեխաշում, կոկոնների շոգեխաշում եւ այլն:

Թափանցիկ ապուրի մեջ շոգեխաշման նպատակը մթերքի համային հատկությունների պահպանում է: Այս եղանակով պատրաստված արգա-նակը նուրբ ու համեղ համ ունի, եւ նաեւ մթերքի բնական, գեղեցիկ տեսքն է պահպանվում: Ուստի եթե ցանկանում են շոգեխաշել ձուկը, նախընտրե-լի է կիրառել շոգեխաշման այս եղանակը: Սակայն շատ կարեւոր է, որ պատրաստելուց առաջ այն լավ լվացվի ու արյունոտ չլինի: Բնորոշ ուտեստը՝ մանդարին ձուկն է:

Այսուրով շոգեխաշելը պատրաստման այն ձեւն է, երբ շոգեխաշելուց առաջ բաղադրիչներն ալրապատում են: Այս տեսակ ուտեստները կպչուն, նուրբ, անուշաբույր ու համեղ են ստացվում: Տիպիկ ուտեստը՝ լոտոսի տերեւներով փաթաթված խոզի միսն է:

Փաթաթած բաղադրիչների շոգեխաշումը պատրաստման այն եղա-նակն է, երբ բոլոր բաղադրիչներն աղով են անում, փաթաթում են լոտոսի, եղեգի կամ բանանի տերեւներով, եւ խաշում են շոգեկաթսայի մեջ: Այս-պես պահպանվում է բաղադրիչների բնական համն ու հոտը, ինչպես նաեւ համ ու հոտ և հաղորդվում այն բաղադրիչներին, որոնցում դրանք փա-թաթված են:

Գինու մեջ շոգեխաշումը այն գործընթացն է, երբ եփելուց առաջ շոգե-խաշուկների մեջ մի քիչ գինի կամ հատուկ յուղ է պելացվում: Այս ձեւով պատրաստած ուտեստը գինու եզակի բույրը կամ յուղի դուրեկան համն է ունենում: Սակայն շոգեխաշումը չպետք է երկար տեսի, այլապես մթերքը կքրվի:

Պտղա-բաժակներով շոգեխաշումը պատրաստման այն եղանակն է, երբ նախապես հեռացվում է պտուղների միջուկը՝ դրանց բաժակի ձեւ տալու համար, այնուհետեւ մշակված բաղադրիչները լցնում են պտղա-բաժակների մեջ ու դնում են շոգեկաթսայի մեջ: Դիմնականում ընտրում են ձմերուկները, տանձերն ու պապայաները: Պտղա-բաժակներով շոգե-խաշումը ներառում է կտրատած բաղադրիչների հերթականությամբ դա-սավորումը պտղա-բաժակների մեջ եւ շոգեկաթսայի մեջ շոգեխաշումը: Բնորոշ ուտեստը պահածոյացրած բանջարեղենով խոզի միսն է:

Զեւավոր ու գունավոր շոգեխաշումը մեկ ուրիշ անուն ունի՝ «լցոնված

ԴՈՆԳ ՔԻԱՆԳ

շոգեխաշում»: Այն հատուկ իմտություն է պահանջում: Նախապես մշակած բաղադրիչները լցնում են տարայի մեջ եւ կարծ ժամանակով շոգեխաշում են միջին կամ ցածր ջերմաստիճանի ներքո: Մինչ կրակի վրայից վերցնելը, դրա մեջ ավելացնում են նի քիչ օսլայաջուր կամ հյութ: Այս տեխնիկան կիրառելիս կրակի ջերմաստիճանը պետք է միջին կամ ցածր լինի, իսկ դուրս եկող գոլորշին՝ մեղմ, որպեսզի մթերքի իրական տեսքն ու ձեւը պահպանվի: Շոգեխաշման բոլոր ձեւերի մեջ այս մեթոդն ամենաարտակարգն է:

ԳԼՈՒԽ ԵՐԵՔ

ԵՌԱՑՈՒՄ

Խեցեղեն հայտնաբերելուց առաջ մարդիկ արդեն բացահայտել էին եփելու միջոցները՝ ներառյալ եռացումը: Բայց մինչ կավե ամանների հայտնաբերումը, այդ մեթոդը համակարգված չէր: Դին ժամանակներում եռացնելը համարվում էր ջրի մեջ եռացնելով եփելն ու յուղով տապակելը: Ավելի ուշ եռացումից առաջացան որոշ այլ մեթոդներ, ինչպես, օրինակ՝ շոգեխաշելը,



բթբթացնելն ուև խաշելը: Եռացումն այն մեթոդն է, երբ մաքուր ջրի կամ արգանակի մեջ լցնում են բաղադրիչները եւ բարձր ջերմաստիճանի ներքո տաքացնում մինչեւ եռալու աստիճանը: Դետո կրակը թուլացնում են, որպեսզի բաղադրիչները եփեն: Այս ձեևի կիրառումը հարմար է փոքր ու փափուկ մթերքների համար: Այս ձեւով պատրաստված սնունդը թարմ ու համեղ է եւ շոգեխաշելուց ավելի քիչ ժամանակ է պահանջվում: Եռացման տեսակներն են՝ ջրի մեջ եռացնելը, յուղի եւ ապուրի մեջ եփելը:

Յուղի եւ ապուրի մեջ եփելը

Սկզբում նախապես տապակել բաղադրիչներն ու կիսաֆարիկատ ստանալ, այնուհետեւ լցնել կաթսայի մեջ եւ ավելացնել մի քիչ պատրաստի ապուր ու համենունքներ, որից հետո թեժ կրակի վրա եռման աստիճանի հասցնել, այնուհետեւ կրակի ջերմաստիճանն իջեցնել: Դրա հիմնական նպատակը մթերքների համն ու հոտը պահպանելն է: Եվ հիշեք՝ ուտելիքը չպետք է շատ երկար եփվի: Ընտրված մթերքները պետք է լինեն ոյուրանարս եւ թարմ թուրեն, բացի դրանից՝ ուտելիքը պետք է առողջարար, իյութեղ ու համեղ լինի: Սովորոբար կարիք չկա մթերքները պատել եգիպ-

տացրենի օսլայի ու ջրի խաշնուրդով։ Սակայն որոշ մթերքներ ավելի համեղ են ստացվում, երբ թանձրացվում են օսլայաջրով, բայց հիմնական հոտը պետք է թարմ եւ անուշաբույր լինի։ Մթերքները պետք է համապատասխան չափի լինեն, որպեսզի եռացնելու համար հարմար լինի՝ կտորները, կեղեւահան մթերքները, մսերը եւ այլն։ Բնորոշ ուտեստը՝ կտրտած տավարի միսը կօրու չիլիի յուղում։

Զրի մեջ եռացնելը

Զրի մեջ եռացնելու տեխնիկան գործածում են սառը ուտելիքներ պատրաստելիս։ Նախապես պատրաստած հում բաղադրիչները լվանում են սառը ջրով եւ դնում են թեժ կրակին։ Որոշ ժամանակ եփելուց հետո կրակի ջերմաստիճանը նվազեցնում են եւ թողնում, որ մարմանդ կրակին եփ գա։

Եփելուց հետո դրանք տեղավորում են ափսեների մեջ։ Սառը վիճակում վրան ավելացնում են համեմունքներ, ինչը սառը ուտեստների հիմնական բաղկացուցիչ մասն է կազմում։

ԳԼՈՒԽ ՉՈՐՍ

ԹԱՎԱՅԻ ՄԵԶ ՏԱՊԱԿԵԼԸ

Թավայի մեջ տապակելը խոհարարական այն կարգն է, երբ բաղադրիչները մանր շերտերով կտրտում են, իեսոն աղ կամ օսլայի մածուկ են ավելացնում: Այնուհետեւ այդ բաղադրիչները լցնում են յուղով տաքացրած թավայի մեջ եւ տաքացնում են միջին կամ թույլ ջերմաստիճանի ներքո, թողնելով, որ երկու կողմերը ուսկե-դեղնեն: Վերջում վրան ավելացնում են մի քանի բաղադրիչներ /համեմունք, կանաչի, լիմոն եւ այլն/ եւ մատուցում են: Տաքացրած յուղի ջերմաստիճանը պետք է ջրի ջերմաստիճանից ավելի բարձր լինի, որպեսզի տապակման գործընթացն ավելի կարծ լինի, եւ այս եղանակով պատրաստված ուտեստն ավելի համեղ կստացվի, քան եռացրած ջրի մեջ պատրաստածը: Այս մեթոդով սովորաբար պատրաստում են ջիաղողիները, տոֆուները, ձվերն եւ ձկնեղենը:

Պետք է հաշվի առնել, որ տապակելուց առաջ հարկավոր է ընտրած մթերքները զգուշորեն աղով կամ սոյայի սոուսով պատել: Պետք չէ շատ աղի կամ շատ քաղցր անել: Ավելին, դրանց վրա չպետք է շատ մածուկ լցնել, որպեսզի դրանից մթերքի համը չկորի: Տապակման ժամանակը նույնական կարեւոր գործոն է: Շատ երկար կամ շատ կարծ ժամանակը կարող է բացասաբար անդրադառնալ սննդի համի վրա:

Չոր տապակում

Չոր տապակումը տապակման մի տեսակ է, որը շատ հաճախ են օգտագործում: Դրա համար լնտրված բաղադրիչները բաստուրմա են դնում, որից հետո դրանք թաթախում են այսուրի մեջ եւ տափակ ձեւ տալով՝ կտրատում են: Այնուհետեւ բաղադրիչները տեղափորում են թավայի մեջ: Ութսուն տոկոսով տա-



պակելուց հետո տապակի մեջ ավելացնում են մի քիչ ջրով բացած օսլա կամ սոուս: Տապակում են այնքան, մինչեւ սոուսը չորանա: Պատրաստի ուտեստը շատ համեղ է: Այս եղանակով կարելի է պատրաստել եւ կենդա-նական, եւ բուսական մթերքները:

Փխրուն տապակում

Փխրուն տապակումը տապակման այն ձեւն է, երբ մթերքները աղով անելուց հետո օսլայապատում եւ, տապակի մեջ մի քիչ յուղ լցնելով, տա-պակում են այնքան, մինչեւ եփվեն: Այս եղանակը հարմար է թարմ միև տապակելու համար:

Թաց տապակում

Թաց տապակումը տապակման այն ձեւն է, երբ թակում կամ կտրտում են հում մթերքները եւ համեմունքներ կամ օսլայի մածուկ ավելացնելով, կամ այսուրի մեջ թաթախելով՝ դնում են միջին ջերմաստիճանի կրակին՝ դրանց ձեւը ստանալու համար, այնուհետեւ գրեթե պատրաստ լինելուն պես իջեցնում են կրակը: Վերջում համապատասխան սոուս են ավելացնում: Այս մեթոդը կիրառում են փափուկ մսամթերքների համար՝ առանց ոսկորների եւ բանջարեղենի:

Զեռքի մեջ խաղացնելով տապակում

Տապակման այս մեթոդը ներառում է՝ կիսաեփ բաղադրիչներն աղով անել, այնուհետեւ մածուկապատել կամ այսուրի մեջ թաթախել: Դրանք պատրաստելու համար կրակը պետք է թույլ կամ միջին ջերմաստիճանի լինի: Այս ձեւը հարմար է ծովամթերքներով ուտեստների պատրաստելիս:

Խորը տապակում

Խորը տապակումը տապակման յուրօրինակ մի ձեւ է, որն իրենից ներկայացնում է բաղադրիչների բովում: Դրանք բովելու՝ տապակելու համար շատ յուղ է պետք: Այն հարմար է սխտորով ուտեստների համար:

Շոգեխաշում ու տապակում

Սա տապակելու մի ձեւ է, որի ժամանակ, նախ, կտրատում են մթերք-

ները, ապա դրանց որոշակի ձեւ տալով՝ ավելացնում են աղ եւ տեղափոխում յուղով կաթսայի մեջ: Այնուհետեւ պատրաստ լինելուն պես ավելացնում են համեմունքներ, ջուր, արգանակ կամ հյութ: Եփելու ընթացքում հարկավոր է կաթսայի բերանը փակ պահել եւ մարմանդ կրակի վրա եփել, որպեսզի մինչ փխրուն դառնալը շոգեխաշվեն: Բաղադրիչները պետք է ծածկված լինեն ջրով կամ արգանակով: Այս ձեւով հիմնականում կենդանական մթերքներն են պատրաստում:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳ

ԽՈՐՈՎԵԼԸ

Խորովելը սնունդ պատրաստելու ամենահին ձեւերից է: Այն ժամանակից ի վեր, ինչ մարդիկ հայտնագործեցին կրակը եւ սկսեցին կերակուր պատրաստել, պատրաստման ամենահին ձեւերից մեկը հենց խորովելն ու խանձատելն էր /գրիլ անել/: Տարիներ շարունակ զարգանալով՝ խորովման այս տեխնիկան մեծ փոփոխությունների է ենթարկվել, ներառյալ խորովման գործիքների փոփոխությունը, համեմելու ու բազմատեսակ համեմունքներ օգտագործելու մեթոդները՝ համային որակը բարձրացնելու նկատառումներով: Խորովելը տեխնիկայի մի տեսակ է, երբ հում եւ աղով արած մթերքները խորովվում են բույլ կրակից արձակված ջերմության կամ բաց կրակի վրա: Խորովելուց հետո մթերքներն ունենում են փիսրուն արտաքին տեսք ու այրվածի հոտ՝ մակերեւույթի վրա ջրի գոլորշիացման պատճառով:

Կախախորովում



Կախախորովումը խորովման մի ձեւ է, երբ մշակված բաղադրիչները կախում են մեծ վառարանի մեջ եւ եփում այրվող բաց կրակի վրա: Այս ձեւով պատրաստած մթերքը

ները ունենում են մանուշակա-կարմրավուն գույն՝ փիսրուն մակերեսով եւ սուր հոտով: Բնորոշ ուտեստներն են՝ տապակած բաղը եւ զառան տապակած ոտքը:

Փակ խորովում

Փակ խորովումը խորովման մի տեսակ է, երբ մշակված բաղադրիչները դնում են փակ վառարանում եւ խորովում են վառարանի պատից դուրս արձակվող տաքության ներքո: Այս ձեռով պատրաստված սնունդն ունի շատ առանձնահատկություններ: արտաքինից այն փիսրուն է, ներսից փափուկ ու խիստ բուրավետ: Միաը ոչ շատ փափուկ է, ոչ շատ կոպիտ: Այն առաջգական է ու ծանելի: Բնորոշ ուտեստը կարմրացրած ամբողջական գառն է:



Չուգունե մեծ թափայում տապակելը

Տապակման մի ձեւ է, որի ժամանակ մշակած բաղադրիչները լցնում են մեծ թափայի մեջ եւ դնում են փոխ մեջ: Այն պատրաստելու համար հարկավոր է բարձր ջերմաստիճան: Այս եղանակով պատրաստած ուտեստը կունենա թանձր սոուս, կլինի կրկնակի նուրբ ու փափուկ՝ յուրահատուկ համ ու հոտով: Բնորոշ ուտեստներից են՝ տապակած տոֆուն, կարմրացրած լոռաձուկը եւ խոզի տապակած աղիքները:

Շամփուրներով խորոված-գրիլ

Խորովելու մի ձեւ է, երբ մարինացված բաղադրիչները կամ մթերքները պատում են օշարակով, շարում են շամփուրների վրա եւ եփում են բաց

կրակի վրա: Խորովելիս հարկավոր է շամփուրները շրջել, որպեսզի դրանք հավասարապես տաքանան եւ կարեւոր է բաղադրիչների ու կրակի միջեւ ճիշտ հեռավորություն հարմարեցնել: Տիպական ուտեստներից են՝ գոճիկի խորոված-գրիլը եւ բաղի խորոված-գրիլը:

Փայտիկներով խորոված-գրիլ

Խորովելու մի ձեւ է, երբ փոքր բաղադրիչները (հաճախ աղով արած) մեկ առ մեկ անցկացնում են բարակ փայտիկների միջով եւ խորովում են բաց կրակի վրա՝ կարծ ժամանակում: Բնորոշ ուտեստը՝ գառան մսով խորոված քյաբաբն է:

Ցանց-ագույցով խորոված-գրիլ

Խորովելու մի ձեւ է, երբ մշակած բաղադրիչները փաթաթում են հատուկ ծածկույթի մեջ, այնուհետեւ դնում են ցանց-ագույցի մեջ եւ պարբերաբար շրջում են՝ բաց կրակի վրա, կամ պարզապես դնում են գրիլ-վառարանի մեջ եւ թույլ կրակի վրա խորովում են: Տիպական ուտեստներից են խոզի խորոված-գրիլ երիկամները եւ չորացրած մսերը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ	
Հիմնական ուստեստներ.....	5
Գլուխ մեկ	
Բրնձային սննդակարգ.....	5
Գլուխ երկու	
Արիշտաներ.....	15
Գլուխ երեք	
Կարկանդակներ.....	25
ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ	
Աղանդերներ.....	30
Գլուխ մեկ	
Շրուշակեղեն.....	30
Գլուխ երկու	
Ապուրներ.....	37
ՄԱՍ ԵՐՐՈՐԴ	
Զինաստանի տարբեր տարածաշրջանների համն ու հոտը.....	41
Գլուխ մեկ	
Շյուսիսային բուրմուճ.....	41
Գլուխ երկու	
Նարավային բուրմուճ.....	47
ՄԱՍ ՉՈՐՐՈՐԴ	
Զինական ավանդական ուստեստների սննդակարգային սովորույթները.....	65
Գլուխ մեկ	
Գարնանային փառատոնի սննդակարգային սովորույթները.....	65
Գլուխ երկու	
Լապտերների փառատոնի սննդակարգային սովորույթները.....	72
Գլուխ երեք	
Գերեզմաններ մաքրելու փառատոնի սննդակարգային սովորույթները.....	74
Գլուխ չորս	
Վիշապանավակների փառատոնի սննդակարգային սովորույթները.....	77
Գլուխ հինգ	
Սիրահարների տոնի սննդակարգային սովորույթները.....	81
Գլուխ վեց	
Միջաշնանային փառատոնի սննդակարգային սովորույթները.....	83

Գլուխ յոթ	
Կրկնակի իններորդ փառատոնի սննդակարգային սովորույթները.....	85
Գլուխ ութ	
Զմեռային արեւադարձի փառատոնի սննդակարգային սովորույթները.....	88
Գլուխ ինն	
Լարա փառատոնի սննդակարգային սովորույթները.....	90
 ՄԱՍ ՀԻՆԳԵՐՈՐԴ	
Զինաստանում ավանդական ծաշատեսակներ պատրաստելու ձևերը.....	93
 Գլուխ մեկ	
Զեռքի մեջ խաղացնելով տապակելը.....	93
Գլուխ երկու	
Շոգեխաչում.....	96
Գլուխ երեք	
Եռացում.....	99
Գլուխ չորս	
Թավայի մեջ տապակելը.....	101
Գլուխ հինգ	
Խորովելը.....	104

ԴԱՆԳ ՔԻԱՄՆԳ

ՈՒՏԵՍՆԵՐ

Անգլերենից թարգմանությունը՝
Լիլիթ ՂԱԶԱՐՅԱՆԻ

Չինարենից անգլերեն թարգմանությունը՝
Քուի Ջենշու

Ստեփանակերտ 2017

Յրատ. Խմբագիր՝ Յ. Ալեքսանյան
Սրբագրիչ՝ Թ. Մաթեոսյան
Եշադրումը՝ Մ. Ավանեսյանի
Կազմի ձեւավորումը՝ Ա. Բաղդասարյանի եւ Մ. Սայհյանի

Թուղթը՝ օֆսեթ, չափսը՝ $70 \times 108 \frac{1}{16}$. Ծավալը՝ 7 տպ. մամուլ
Տպաքանակը՝ 500:

Տպագրվել է «Դիզակ պյուս» իրատարակչության տպարանում
ՀՀ, Ստեփանակերտ, Յ. Յակոբյան, 25

«ԳԵՂԱՐՄ» հանդեսի մատենաշարով լույս են տեսել

- «Թատերախաղեր Արեւմտյան գրականությունից» - 2010
Ինսիֆ Բրոդմակի. «Տեղատարափի շաշյունը» - 2011
Մ. Բախտին. «Դոստուսկու պոետիկայի խնդիրները» - 2012
«Սիրիուսի սրճարանները»/Վ.Խլեբնիկով, Ն.Գումիլյով, Վ.Խոդասենիչ/ - 2012
Սերգեյ Դովլարով. «Միայնակների երթը» - 2012
Յուրի Լոտման. «Սիֆ.Անուն.Մշակույթ» - 2012
Վառլամ Շալամոն. «Կոլիմյան պատմվածքներ»- 2012
Ժարկո Միլենիշ. «Լեռնը՝ հրաշագործի աշակերտը»- 2013
Պավել Ֆլորենսկի. «Իկոնոստաս» - 2014
Ուսու կոնցեպտուալ պոեզիա/ Դ.Պրիզով, Վ.Նեկրասով, Լ.Ուրինշտեյն/ - 2014
Հենրիխ Սապօհր. «Չուգահեռ մարդը» - 2014
Վասիլի Գրոսման. «Կյանք եւ ճակատագիր» - 2014
«Կամուրջների խոռվությունը. մետամետաֆորիստներ» - 2015
Ալեքսանդր Սոլժենիչին. «Սատրյոնայի կալվածքը»- 2015
Անդրեյ Պլատոնով. «Չեւենգուր. Գուրը. Պատմվածքներ» - 2015
Արդի ռուսական վերլիբր (անթոլոգիա) - 2015
Չինաստանի մշակույթի քրեստոնատիա - 2015
Զիդի Մաջիա. «Հրեղեն խոսքեր» - 2015
Մա Քայ. «Արտի արձագանքներ» - 2015
Եվգենի Վոլորլազկին. «Լավը» - 2015
Քայ Տյանսին. «Խաղաղ կյանքի երգը» - 2015
Ուսու այլախոհական պոեզիա (անթոլոգիա) - 2015
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ(հատոր 1) - 2016
Յու Ջիան. «Անձրեւից պատսպարվող բռչունը» - 2016
Պավել Բասինսկի. «Լեւ Տոլստոյ. Փախուստ դրախտից» - 2016
Չժան Ցզի-յան. «Երազ ծովի մասին» - 2016
Վան Չենչկի. «Երիտասարդ վանականի սիրո պատմությունը» - 2016
Լյուդմիլա Պետրովշենկայա. «Սեր. երջանկություն. ոերվիեմ» - 2016
Անդրեյ Բելի. «Պետերբուրգ» - 2016

«Դիլոռոսներ. Անհայտ պոետների ապաստան» (անթոլոգիա) - 2016

Ուսումնական մինիմալիստներ (անթոլոգիա) - 2016

Իձեւ Թան. «Կոնֆուցիականությունը, բուդդայականությունը, դասսիզմը, քրիստոնեությունը եւ չինական մշակույթը» - 2016

Սյուն Շի-ի. «Երկնային կամուրջը» - 2016

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

(հատոր 2 եւ 3) - 2016

Դոնգ Քիանգ. «Ամուսնություն» - 2017

Դոնգ Քիանգ. «Կացարաններ» - 2017

Ինգերորդ Բախման. «30-րդ տարին» - 2017

Զիղի Մաջիա. «Ընձառյուծից մինչեւ Մայակովսկի» - 2017

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ(հատոր 4) - 2017

Անդրեյ Վոլոս. «Վերադարձ Փանջիռուր» - 2017

Դոնգ Քիանգ. «Թաղում» - 2017

Դոնգ Քիանգ. «Փառատոններ» - 2017



Էլ. հասցե՝ vogi.nairi@mail.ru

Հեռ.: +37497252323